

ՇԵՆՈՒԴԱ Գ

ՔՐԻՍՏՈՍԻ

ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

H.H. POPE SHENOUDA III

# THE DIVINITY OF CHRIST

Translated into Eastern Armenian

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Քրիստոսի Աստվածությունը քրիստոնեական վարդապետության ամենակարևոր կետերից մեկն է: Տարբեր ժամանակաշրջաններում այս նյութին վերաբերող բազմաթիվ հերետիկոսություններ են ծնվել, սակայն Եկեղեցին դիմակայել և հերքել է դրանք: Ամենավտանգավոր հերետիկոսություններից մեկը արիոսականությունն էր, որ հզորացավ չորրորդ դարում, և շատ տեղական եկեղեցաժողովներ գումարվեցին նրա քննարկման համար: Առաջին տիեզերական ժողովը 325թ.-ին գումարվեց նույնպես այս պատճառով, և նրան մասնակցեց աշխարհի բոլոր եկեղեցիները ներկայացնող 318 եպիսկոպոս: Ժողովը մերժեց Արիոսին և նրա հերձվածը, և ստեղծվեց քրիստոնեական հավատո հանգանակը: Այնուամենայնիվ, արիոսական հետքերը դեռ գոյություն ունեն մեր օրերում...

Քրիստոսի Աստվածությունը մերժվել և դեռևս մերժվում է աթեիստ փիլիսոփաների և գիտնականների կողմից: Նրա դեմ նաև հերետիկոսություն է առաջ եկել՝ Եհովայի վկաների աղանդը, որ ծնվել է Փենսիլվանիայում (ԱՄՆ), 1872թ.-ին: Հետագայում՝ 1909թ., նրանք իրենց կենտրոնը տեղափոխեցին Նյու Յորք, ուր ստեղծեցին «Դիտարան և ուսումնասիրություններ» (Watch Tower and Tracts) անունով մի ընկերություն: Նրանք հրատարակել են բազմաթիվ գրքեր, որոնցից կարևորներն են՝ 'Let God Be True' («Թող Աստված ճշմարիտ լինի»), 'The Truth Shall Set You Free' («Ճշմարտությունը քեզ կփրկի»), 'The Harp of God' («Աստծո քնարը»), 'Deliverance' («Ազատագրում»), 'Creation' («Արարչություն»), 'The Rich Man' («Հարուստ մարդը»), 'Government' («Կառավարություն»), 'The New World' («Նոր աշխարհը»), 'Reconciliation' («Հաշտեցում»), 'Protection' («Պաշտպանություն») և այլն, ինչպես նաև ուրիշ շատ

հրատարակություններ, որոնք նրանք կոչում են «ուսումնասիրություններ» (տրակտատներ, գրքույկներ. tracts):

Այս գրքում Մենք փորձել ենք խոսել Քրիստոսի Աստվածության մասին հաստատման ճանապարհով՝ ապացուցելով այս հիմնարար վարդապետությունը Սուրբ Գրքով: Հավանաբար, մեկ այլ գրքում, մենք կքննենք բոլոր առարկությունները և կհերքենք դրանք: Նման առարկություններ քննության են առնվել նաև Արիոսական շարժմանը ժամանակակից սրբերի կողմից: Դրանցից էին սբ Աթանաս Ալեքսանդրացին («Ընդդեմ արիոսականների» գրքում), Պուլատիեի եպիսկոպոս Հիլարիոնը («De Trinitate» գրքում), սրբեր Բարսեղ Մեծը, Գրիգոր Նյուսացին, Գրիգոր Աստվածաբանը (իրենց աստվածաբանական գործերում), սբ Կյուրեղ Երուսաղեմացին («Կոչումն ընծայության» գրքում):

Այս գրքում, մեր հաստատական ուսումնասիրությամբ, մենք ապացուցելու ենք Քրիստոսի Աստվածությունը Սուրբ Գրքի թե՛ Հին և թե՛ Նոր Կտակարանների խոսքերով:

Սույն ուսումնասիրությունը սկսել են 1953թ. հուլիսին՝ Կիրակնօրյա դպրոցի ամսագրում տպագրելով Եհովայի վկաների մասին իմ առաջին հոդվածը, որին հետևեցին զանազան այլ հոդվածներ ևս 1953 և 1954 թվականներին:

Այս նյութի մասին դասախոսեցի մեր սեմինարիայում այդ նույն տարի, ինչպես նաև վաթսուևականներին, երբ դարձա սեմինարիայի եպիսկոպոսը: Բացի այդ, հրապարակային դասախոսությունների ընթացքում ևս պատասխանել են նույն նյութի վերաբերյալ ինձ ուղղված բազմաթիվ հարցերի: Ջըրսի Սիթիի և Լոս Անջելեսի մեր սեմինարիայում նույնպես այս մասին դասեր տվեցի: Վերջապես, պատշաճ նկատեցի հրատարակել սրանք մեր Աստվածաբանական քոլեջի (սեմինարիայի) համար իբրև ուսումնական առանձին առարկա՝ մյուսների կողքին:

Շենուդա Գ

Պատրիարք Ղպտի Ուղղափառ Եկեղեցու

ՄԱՍ Ա

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ

## ԳԼՈՒԽ 1

### ՏԵՐ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԸ ԲԱՆՆ Է (ԽՈՍՔԸ)

Տեր Հիսուս Քրիստոսը «խոսք» է կոչվում աստվածաշնչյան երեք կարևոր տեղիներում<sup>1</sup>՝

ա) Հովհ. 1.1. *«Սկզբից էր խոսքը (Բանը), և խոսքն Աստծո մոտ էր, և Աստված էր խոսքը»*: Այստեղ հստակորեն խոսվում է Նրա աստվածության մասին:

բ) Ա Հովհ. 5.7. *«Երեքն են, որ վկայում են երկնքում՝ Հայրը, խոսքը և Սուրբ Հոգին, և այս երեքը մեկ են»*<sup>2</sup>: Այստեղ նույնպես պարզորոշ ցույց է տրվում Նրա աստվածությունը, և «խոսքը» եզրը դրված է «Որդի» բառի փոխարեն (հմմտ. Մատթ. ԻԸ 19):

գ) Հայտ. 19.13. *«Նա հազել էր արյամբ ներկված հագուստ, և Նրա անունն էր «Աստծո խոսք»*:

### «ԽՈՍՔ» ԵԶՐԸ ԴՐՎԱԾ Է ՀՈՒՆԱՐԵՆ «ԼՈԳՈՍ»-Ի ԴԻՄԱՑ

Այս բառը չի նշանակում արտաբերված բառ, այլ ունի լեզվաբանական, իմաստասիրական և եզրաբանական նշանակություն: Հունարեն «լոգոս» եզրն առաջացել է «լեզու» բայից, որ նշանակում է մտածել, տրամաբանել. այս բառից է ծագել նաև անգլերեն «logic» (տրամաբանություն) բառը: Ուստի «լոգոս»-ը չի նշանակում պարզապես բառի արտաբերում, այլ բանական արտաբերություն կամ բառերով արտահայտված դատողություն:

<sup>1</sup> Սույն գրքում աստվածաշնչյան տեղիները հայերեն են թարգմանվել ըստ գրաբարյան բնագրի (Վիեննա, 1929թ. հրատարակությունից), սակայն հաճախ հարկ է եղել հետևել Հին Կտակարանի եբրայերեն և Նոր Կտակարանի հունարեն տարածված բնագրերի տարբերակներին: Բոլոր այսպիսի դեպքերը ծանոթագրվել են: (Այս և հետագա ծանոթագրությունները թարգմանչի):

<sup>2</sup> Ավետարանի հնագույն հունարեն բնագրերում, ինչպես նաև գրաբարյան թարգմանության մեջ այս 7-րդ համարը բացակայում է:

Չետևաբար «Խոսք»-ը (Բան) նշանակում է Աստծո արտահայտված Բանականությունը (իմաստությունը) կամ Աստծո իմաստուն արտաբերությունը: Այն ունի թե՛ բանականության և թե՛ արտաբերման իմաստները: Սա է Որդու դիրքը Սուրբ Երրորդության մեջ:

Անշուշտ, Աստված չի կարող զատված լինել Իր Բանականությունից: Աստված և Նրա Բանականությունը մեկ բան են: Եհովայի վկաները «Խոսքին» համարում են Աստված, սակայն գերագույն և ամենակալ Աստծուն ստորադաս, որովհետև նրանք չեն հասկանում Չովի. Ա-ուն նշված «Խոսք» (Բան, Լոգոս) եզրի իմաստը:

Քանի որ Քրիստոսն Աստծո Բանականությունն ու արտաբերությունն է, ապա Աստված է և հավիտենական, որովհետև Աստծո Բանականությունը միշտ էլ գոյություն է ունեցել Աստծո հետ: Ուրեմն Քրիստոսն արարված չէ, որովհետև որևէ արարված էակ գոյություն է ձեռք բերում արարվելուց հետո միայն, իսկ սա անհնար է ասել Աստծո վերաբերյալ: Չնարավո՞ր է արդյոք պատկերացնել, որ Աստված ինչ-որ ժամանակ առանց Իր բանականության էր և ապա Իր համար բանականություն ստեղծեց: Իսկ ինչպե՞ս կարող էր դա անել առանց բանականության:

Եթե մենք պատշաճորեն ընթրենք Սուրբ Երրորդությունը, կտեսնենք, որ Նրա Երեք Անձերն էլ հավիտենական են և որ «Խոսքն»՝ իբրև Երրորդության Անձ, Աստծո էությունից է և սկզբնապես գոյություն ունի Նրա մեջ:

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ Երկրորդ Անձը՝ Բանը (Լոգոսը) կամ Խոսքը, Սուրբ Երրորդության մեջ գիտության (իմաստության), բանականության կամ արտաբերության Անձն է. որովհետև «Չիսուս Քրիստոսի մեջ են թաքնված իմաստության և գիտության բոլոր գանձերը» (Կող. 2.3): Կամ, այլ խոսքով, Երրորդության մեջ Նա Իմաստության Անձն է, ինչպես սբ Պողոս առաքյալն է Նրան բնութագրում իբրև «Աստծո իմաստություն» (Ա Կոր. 1.24): Չետևաբար, երբ Խոսքը մարմնացավ, հանձին Նրա մենք Աստծուն տեսանք, թեև «Աստծուն ոչ ոք չի տեսել երբեք»

(Հովհ. 1.18): Սա նշանակում է, որ ոչ ոք երբեք չի տեսել Աստվածությունը, բայց երբ Նա մարմնացավ և մարմնով հայտնվեց (Ա Տիմ. 3.16), մենք Նրան տեսանք մարմնով: Ահա թե ինչու է սբ Հովհաննես առաքյալն ասում.

«Աստծուն ոչ ոք չի տեսել երբեք: Բայց Միածին Որդին, որ Հոր ծոցում է, Նա պատմեց» (Հովհ. 1.18): Այդ Քրիստոսն է, որ Աստծո մասին պատմեց և Նրան ճանաչել տվեց մեզ:

Նույն միտքն արտահայտված է Կող. 1.15-ում. «Նա աներևույթ Աստծո պատկերն է». այլև՝ Փիլիպ. 2.5-7-ում. «...Քրիստոս Հիսուս, Ով Աստծո կերպարանքով էր, Աստծուն հավասար լինելը հափշտակություն չհամարեց, այլ Իր անձը դատարկեց՝ առնելով ծառայի կերպարանք»: Սա նշանակում է, որ եթե Նա, հայտնվելով իբրև Աստծուն հավասար մեկը, հափշտակություն չհամարեց սա, պատճառն այն է, որ Նա իրապես էլ այդպիսին է: Սակայն, հակառակ Հորը հավասար լինելուն, մարմնանալիս Նա դատարկեց Իրեն Իր փառքից, գալով մարդու նմանությամբ՝ առավ ծառայի կերպարանք և հնազանդվեց մինչև մահ, անգամ խաչելությամբ մահ (Փիլիպ. 2.8):

Եբրայեցիներին ուղղած իր թղթում սբ Պողոս առաքյալը Տեր Հիսուս Քրիստոսի մասին ասում է. «... Ուն միջոցով նաև հավիտյանները ստեղծեց: Նա Նրա փառքի լույսն ու էության պատկերն է... մեր մեղքերը սրբելով՝ նստեց բարձունքում՝ Մեծության աջ կողմում՝ այնքան առավել լինելով, քան հրեշտակները...» (Եբր. 1.2-4):

«Նրա էության պատկերը» արտահայտությունը վերաբերում է այն պատկերին, որով Նա երևաց մարմնանալիս, և այսպես կարող էինք Նրան տեսնել իբրև Քրիստոս: Ուստի Տեր Քրիստոսն ասում է. «Ով տեսավ Ինձ, տեսավ Հորը» (Հովհ. 14.9):

Նա մարմնացավ մեր փրկության համար, որպեսզի մեզ մաքրի մեղքերից: Նա Իրեն դատարկեց՝ չնայած Աստծո փառքի լույսն ու Աստծո պատկերը (Բ Կոր. 4.4) և հավիտյանների ստեղծիչ լինելուն:



Այստեղ առաքյալը ներկայացնում է Տեր Քրիստոսի աստվածային հատկություններից մեկը՝ Նրա ստեղծիչ լինելը: Նա ստեղծեց հավիտյանը (աշխարհը), որովհետև Բանն էր՝ Աստծո Բանականությունն ու իմաստությունը:

## ԳԼՈՒԽ 2

ՏԵՐ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԸ ՀԱՅՐ ԱՍՏԾՈ ՈՐՂԻՆ Է

### ՄԱՐԴԻԿ ԱՍՏԾՈ ՈՐՂԻՆԵՐՆ ԵՆ

Տեր Հիսուսի՝ Աստծո Որդի լինելը փաստելիս կանգնում ենք մի կարևոր հարցի առաջ.

1. Արդյոք բոլոր մարդիկ էլ Աստծո որդիներ չե՞ն կոչվում:

Այո՛, մարդիկ կոչվել են Աստծո որդիներ, սակայն մեկ այլ իմաստով. նրանց աստվածորդիությունը (Աստծո որդի լինելը) տարբերվում է Քրիստոսինից: «Ծննդոց» գրքում ասվում է, որ Աստծո որդիները տեսնում են մարդկանց դուստրերին, որ գեղեցիկ էին (Ծննդ. 6.2). «Աստծո որդիներն» այստեղ Սեթի և Ենովսի որդիներն են, որոնց ժամանակվանից մարդիկ սկսեցին կանչել Տեր Աստծո անունը (Ծննդ. 4.26), իսկ «մարդկանց դուստրերը» Կայենի զավակներն են:

Եսայի մարգարեի գրքում Աստված ասում է. «Որդիներ ծնեցի և մեծացրի, և ինձ անարգեցին» (1.2), այլև՝ «Դու ես մեր Հայրը» (63.16), և՛ «Եվ արդ, Տեր, Դու մեր Հայրն ես. մենք կալ ենք, իսկ Դու՝ մեր Ստեղծիչը, և մենք ամենքս Քո ձեռքի գործն ենք» (64.8):

Սրանք խոսքեր են, որ ցույց են տալիս մարդկանց որդիությունը, բայց սա բնավ չի նշանակում Աստծո էության մեջ որդիություն:

Մարդկանց՝ Աստծո որդի լինելու մասին նշված է նաև Ելք 4.22-ում.  
«Այսպես է ասում Տերը. «Իսրայելն Իմ անդրանիկ որդին է», և Առակ. 23.26-ում. «Տո՛ւր ինձ, որդյակ, քո սիրտը»:

Նոր Կտակարանում նույնպես Աստված մեր Հայրն է կոչվում բազմաթիվ տեղերում, ինչպես օրինակ՝ Տերունական աղոթքում, ուր մենք ասում ենք.  
«Հայր մեր, որ երկնքում ես» (Մատթ. 6.9), ինչպես նաև շատ ուրիշ տեղերում, ուր ասվում է «ձեր երկնավոր Հայրը» կամ «քո Հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է...» և այլն:

## ԻՆՉՊԵՍ ԵՆ ՄԱՐՈՒԿ ԱՍՏԾՈ ՈՐՈՒՆԵՐ

2. Մարդիկ Աստծո որդիներ են հավատի, սիրո կամ որդեգրության շնորհիվ:

ա) Հավատ: Սուրբ Գիրքը Տեր Հիսուսի մասին ասում է. «Իսկ ովքեր ընդունեցին Նրան, նրանց իշխանություն տվեց Աստծո որդիներ լինելու, նրանց, ովքեր կհավատան Նրա անվանը» (Հովհ. 1.12): Այստեղ «Աստծո որդիներ» են անվանվում հավատացյալները:

բ) Անք: Սբ Հովհաննեսն իր առաջին թղթում ասում է. «Տեսեք ինչպիսի՛ սեր շնորհեց մեզ Հայրը, որ Աստծո որդիներ կոչվենք» (3.1): Հետևաբար սա Աստծո սիրո գործն է, որ մեզ Իր որդիներն է կոչում:

գ) Որդեգրություն: Այս բառը նշված է Հռոմեացիներին ուղղված թղթում. «... որդեգրության սպասելով» (8.23):

Նաև քաջ հայտնի է, որ «որդի» կոչվողը, եթե նույնիսկ բնությամբ էլ այդպիսին չէ, որդի է կա՛ն որդեգրությամբ, կա՛ն հոգով (հոգևոր զավակ):

3. Որդիներ լինելով հանդերձ՝ մենք դեռևս կոչվում ենք ծառաներ:

Տերն ասում է մեզ. «Երբ դուք կատարեք այն ամենը, որ հրամայվել է ձեզ, ասեք. «Մենք անպիտան ծառաներ ենք. արեցինք՝ ինչ պարտավոր էինք անել» (Դուկ. 17.10): Նմանապես և բոլոր արդարներն են կոչվել ծառաներ, ինչպես Տերը կկոչի բոլոր նրանց, ովքեր բարի պատերազմը մղեցին և արժանացան Արքայությանը. «Կեցցե՛ս, բարի և հավատարի՛մ ծառա, քանի որ քչի մեջ հավատարի՛մ ես, շատի վրա քեզ կկարգեն. մտի՛ր քո Տիրոջ ուրախության մեջ» (Մատթ. 25.23):

Թեև մենք Աստծո որդիներ ենք, սակայն Նրա արարածներն ենք, իսկ որևէ արարած չի կարող աստված կոչվել: Ուստի նույնիսկ հոգևոր հովիվներն են ծառա կոչվում, իրենց հոտի անդամների պես, ինչպես Տերն է ասում. «Ո՞վ է այն հավատարի՛մ ու իմաստուն տնտեսը, ում նրա տերը

կարգեց իր գերդաստանի վրա... Երանի է այն ծառային, ում նրա տերը գալով կգտնի այդպես արած» (Ղուկ. 12.42-43):

## **ՏԵՐ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԸ ՀՈՐ ՈՐՂԻՆ Է**

### **4. Տեր Հիսուսն Աստծո Որդին է՝ լինելով Աստծո հենց էությունից:**

Այս իսկ պատճառով Նա երբեմն կոչվում է «Որդի» կամ «Միածին Որդի» (ինչպես պիտի բացատրենք հետո), որովհետև Նրա աստվածորդիությունը եզակի է՝ լինելով Աստծո նույն բնությունից, աստվածությունից և էությունից:

Այստեղ կբացատրենք, թե ինչպես է, որ սովորական չէ Տեր Քրիստոսի աստվածորդիությունը, և ինչպես է սա վկայվել ամենքի, նույնիսկ հենց Հայր Աստծո կողմից, հրաշալի դեպքերի ժամանակ, որոնք բացահայտել են Որդու աստվածությունը: Այդ վկայություններից ամենակարևորները հետևյալն են՝

### **5. Հոր վկայությունը Որդու մասին Նրա մկրտության ժամանակ**

Հայրը վկայում է Տեր Քրիստոսի մասին Նրա մկրտության ժամանակ՝ ասելով. «Սա է Իմ Սիրելի Որդին, Ում հավանեցի» (Մատթ. 3.17, Ղուկ. 3.22): Վկայությունն ուղեկցվում է հրաշքներով. երկինքը բացվում է, Սուրբ Հոգին մարմնավոր կերպարանքով՝ ինչպես աղավնի, իջնում է Նրա վրա, և Հոր ձայնը հնչում երկնքից՝ վկայելով: Եթե Քրիստոսը որդի էր սրա սովորական իմաստով, ինչպես բոլոր մարդիկ, ապա ի՞նչ կարիք կար նման հրաշքների: Մկրտության ժամանակ հենց այս հայտնությունների մեծության պատճառով է, որ այս դեպքը ստացել է Աստվածահայտնություն անունը:

### **6. Հոր վկայությունը Որդու մասին Պայծառակերպության դեպքի ժամանակ**

Սա տեղի է ունենում, երբ Որդու աստվածությունն է ցույց տրվում Նրա երեք առաքյալների առաջ, որովհետև «Նա այլակերպվեց նրանց առաջ, և Նրա շորերը խիստ փայլուն սպիտակ դարձան... Եվ Եղիան Մովսեսի հետ երևաց նրանց... Եվ մի ամպ հովանի եղավ նրանց վրա, ձայն հնչեց այդ ամպից և ասաց. «Դա է Իմ սիրելի Որդին, Դրան լսեք» (Մարկ. 9.2-7): Եթե Տեր Քրիստոսը մի սովորական որդի էր, ի՞նչ կարիք կար, որ Հայրը սա վկայեր: Եվ ի՞նչ կարիք կար, որ լույսով և ամպով փառահեղ պայծառակերպություն տեղի ունենար: Այլև ի՞նչ կարիքը կար Հոր ձայնի. «Լսեք Նրան» խոսքը նույնիսկ հրամայում է մեզ հնազանդվել Նրան: Եվ եթե բոլոր մարդիկ էլ Աստծո որդիներ էին, նրանցից ո՞ւմ մասին Հայրն այսպիսի փառքով վկայեց, ինչպես դա արեց Տեր Քրիստոսի մկրտության կամ պայծառակերպության ժամանակ:

7. Որդու մասին Հայրը շատ ավելի վաղ էր վկայել:

Երկրորդ սաղմոսում Հայրը դիմում է Որդուն. «Դու Իմ Որդին ես, և Ես այսօր ծնեցի Քեզ: Խնդրի՛ր Ինձ, և իբրև ժառանգություն կտամ Քեզ հեթանոսներին և իշխանություն՝ երկրի բոլոր ծագերում: Երկաթյա գավազանով կհովվես նրանց, իբրև բրուտի անոթ՝ կփշրես նրանց» (Սաղմ. 2.7-9): Այսպիսին է Նրա որդիությունը՝ մինչև երկրի ծայրերը հասնող իշխանությամբ, որ Պողոս առաքյալը զարմացած վկայակոչում է այն, երբ բացատրում է, թե ինչպես է Տեր Հիսուս Քրիստոսը շատ ավելին, քան հրեշտակները և նույնիսկ երկրպագված նրանց կողմից. «Քանզի հրեշտակներից որի՞ն ասաց. «Դու Իմ Որդին ես, Ես այսօր ծնեցի Քեզ» (Եբր. 1.5):

8. Տեր Քրիստոսի աստվածորդիությունն է Ավետարանի գրության նպատակը:

Մարկոսի Ավետարանը սկսվում է հետևյալ բառերով. «Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու, Ավետարանի սկիզբը» (Մարկ. 1.1): Եթե Տեր Հիսուսը լիներ բոլորի նման որդի, ի՞նչ կարիք կար այսպիսի բառեր գրելու և սրանից հետո հիշատակված բոլոր հրաշքները գրի առնելու:

Սբ Հովհաննեսը նույնպես, մյուս ավետարանիչների կողմից չհիշատակված հրաշքները ներկայացնելուց և Քրիստոսի աստվածությունը ցույց տվող Նրա խոսքերը գրի առնելուց հետո, գրում է. «Ուրիշ բազմաթիվ նշաններ էլ գործեց Հիսուսն Իր աշակերտների առաջ, որ չեն գրանցված այս գրքում: Բայց այսքանը նրա համար գրվեց, որ հավատաք, որ Հիսուսը Քրիստոսն է՝ Աստծո Որդին, և որ հավատալով հավիտենական կյանքն ընդունեք Նրա անունով» (Հովհ. 20.30-31):

Այսպիսով, սա մի սովորական որդիությունն չէ, այլ այնպիսին, որ ներկայացված է Տեր Հիսուսի աստվածությունն ապացուցող աստվածաշնչյան խոսքերով: Որովհետև եթե Նա լիներ մի սովորական որդի, կարիք չէր լինի այդ բոլոր հրաշքները գրանցելու՝ նպատակով, որ մարդիկ հավատան, որ Նա Աստծո Որդին է և այսպես հավատալով կյանք ունենան...

9. Եկեղեցին հիմնվել է Տեր Քրիստոսի աստվածորդիության իրողության վրա:

Տեր Հիսուս Քրիստոսը հարցնում է Իր աշակերտներին վերջիններիս և ժողովրդի հավատի մասին. «Ի՞նչ են մարդիկ ասում Իմ մասին, ո՞վ է Մարդու Որդին», և երբ Պետրոսը պատասխանում է. «Դու Քրիստոսն ես, կենդանի Աստծո Որդին», Տերը երանում է նրան՝ ասելով. «Երանի՛քեզ, Սիմոն, որդի՛ Հովնանի, որովհետև մարմինն ու արյունը չհայտնեցին [դա] քեզ, այլ Իմ Հայրը, որ երկնքում է», և ավելացնում է. «... այդ վեմի վրա կկառուցեմ Իմ Եկեղեցին, և դժոխքի դռները նրան չեն հաղթի» (Մատթ. 16.13-18):

Դարձյալ՝ եթե այս որդիությունը սովորական լիներ, ի՞նչ կարիք կլիներ այդպես երանի տալու, ի՞նչ կարիք կլիներ Չայր Աստուծոց երկնային հայտնության, և ի՞նչ նշանակություն կունենար այդ հավատի վեմի վրա եկեղեցու կառուցումը: Մենք այս ամենը կբացատրենք, երբ խոսելու լինենք Չիսուս Քրիստոսին իբրև Աստծո Որդի հավատալու մասին:

10. Տեր Քրիստոսի աստվածորդիությունն էր բարձրագույն ատյանի կողմից Նրա դատապարտվելու պատճառը:

Քահանայապետերը շփոթված էին՝ չիմանալով, թե ինչպես դատապարտեն Նրան, որովհետև կեղծ վկաների բերած վկայություններն իրար հակասում էին: Ուստի քահանայապետը հարցնում է Նրան. «Երդվեցնում են քեզ կենդանի Աստծով, որ մեզ ասես, թե Դո՞ւ ես Քրիստոսը՝ Աստծո Որդին» (Մատթ. 26.63): Եթե Նրա որդիությունը սովորական էր, հապա ինչո՞ւ էր քահանայապետը բարձրագույն ատյանի առաջ երդվեցնում Նրան՝ հարցնելով Նրա որդիության մասին, և երբ Տեր Չիսուս Քրիստոսը դրական պատասխան տվեց՝ Իր աստվածությանը պատշաճող երկու կետ ավելացնելով՝ Ջորության աջ կողմում Իր նստելն ու երկնքի ամպերով գալը, «քահանայապետը պատռեց իր հագուստը և ասաց. «Չայիոյե՛ց, այլևս մեր ինչի՞ն են պետք վկաներ, ահա այժմ լսեցիք դրա հայիոյությունը» (Մատթ. 26.63-65): Եվ նրանք հենց այս պատճառով Նրան մահվան դատապարտեցին:

11. Տեր Քրիստոսի աստվածորդիությունն էր պատճառը սատանայի շփոթության:

Երբ սատանան լեռան վրա Տիրոջը փորձում էր, ասաց Նրան. «Եթե Աստծո Որդի ես, հրամայի՛ր, որ այս քարերը հաց դառնան» (Մատթ. 4.3): Այս հարցով սատանան նկատի ուներ այն հատուկ աստվածորդիությունը, որն ունի այնպիսի հրաշագործ արտասովոր զորություն, որ կարող է

քարերը հաց դարձնել, և ո՛չ թե սովորական որդիությունը, որ հատուկ է Աստծո զավակ հանդիսացող մնացած մարդկանց:

Հավանաբար նույն այդ հարցն էր, որ Տիրոջ խաչելության ժամանակ սատանան տվեց մարդկանց բերանով, երբ նրանք ասացին. «Եթե Աստծո Որդի ես, իջի՛ր խաչից» (Մատթ. 27.40): Այդ ժամանակ բոլորն էլ Տիրոջ աստվածորդիությունը հայտնապես հասկանում էին իբրև հրաշքներ գործելու և խաչից իջեցնելու զորություն ունեցող և ո՛չ թե բոլորին հատուկ սովորական որդիություն:

12. Տեր Քրիստոսի աստվածորդիությունն էր Կույս Մարիամին հրեշտակի տված ավետիսի նյութը:

Հրեշտակն ասում է Կույսին. «Սուրբ Հոգին կգա քեզ վրա, և Բարձրյալի զորությունը հովանի կլինի քեզ, քանզի Նա, ով ծնվելու է քեզանից, սուրբ է և Աստծո Որդի է կոչվելու» (Ղուկ. 1.35): Եթե Տեր Հիսուսը լիներ մյուս մարդկանց նման սովորական որդի, կարիք չէր լինի, որ Սուրբ Հոգին իջներ և Բարձրյալի զորությունը հովանի լիներ Նրա Մորը, որպեսզի Նա Աստծո Որդի կոչվեր: Նշանակում է՝ դա մի որդիություն է, որ տրված է Սուրբ Հոգով, ինչպես հրեշտակն ասաց Հովսեփին. «... նրանում հղացվածը Սուրբ Հոգուց է» (Մատթ. 1.20): Շնորհիվ այսպիսի որդիության է Նա կոչվել «Սուրբ», ինչն Աստծո հատկանիշներից է:

Հրեշտակը նաև սուրբ Կույսին ասաց նրա Որդու մասին. «Նա մեծ կլինի և կկոչվի Բարձրյալի Որդի. Տեր Աստված կտա Նրան Նրա հայր Դավթի աթոռը, և կթագավորի Հակոբի տան վրա հավիտյան, և Նրա թագավորությանը չի լինի վախճան» (Ղուկ. 1.32-33):

Անշուշտ չի կարող լինել այնպիսի մարդկային էակ, որ թագավորի հավիտյան և որի թագավորությունը վախճան չունենա, քանի որ սրանք հատուկ են Աստծուն: Ուստի Տեր Հիսուսի աստվածորդիության մասին սբ Կույսին տրված ավետիսը վերաբերում է Նրա աստվածությանը, որը թագավորում է հավիտյան և որի թագավորությանը չկա վախճան:



Այս ավետուհի կարող է մեզ հիշեցնել Դանիելի մարգարեությունը Տեր Քրիստոսի մասին իբրև Աստծո Որդու: Այն ասում է. «Եվ Նրան տրվեց իշխանություն, պատիվ և արքայություն, և բոլոր ազգերը, ցեղերն ու լեզուները Նրան կծառայեն. Նրա իշխանությունը հավիտենական իշխանություն է, որ չի անցնում, և Նրա թագավորությունը չի կործանվելու» (Դան. 7.14):

13. Տեր Քրիստոսի որդիության և Նրա աստվածության միջև կապը ցույց է տրված Եսայու մարգարեության մեջ:

Մարգարեությունն ասում է. «Որովհետև մեզ համար Մանուկ ծնվեց, մեզ Որդի տրվեց, Ուն իշխանությունն Իր ուսերին է: Եվ Նրա անունը կոչվեց Մեծ խորհրդի հրեշտակ, Սքանչելի, Խորհրդակից, Չզոր Աստված, Իշխան, Չայր գալիք աշխարհի» (9.6): Մեկ մարգարեության մեջ երկու անվանում է միասին տրվում՝ «Որդի» և «Չզոր Աստված»: «Սքանչելի» անունն էլ այստեղ հիշեցնում է մեզ Տիրոջ խոսքը Մանուկին՝ Սամսոնի հորը. «Ինչո՞ւ ես հարցնում Իմ անվան մասին. այն սքանչելի է» (Դատ. 13.18):

14. Նույն կապը հստակ երևում է նաև «Առակաց» գրքում:

Գրված է. «Ո՞վ ելավ երկինք և իջավ: Ո՞վ քամիներն Իր զոգում հավաքեց: Ո՞վ անփոփեց ջրերն Իր հագուստի մեջ: Ո՞վ պատեց երկրի ծագերը: Ի՞նչ է անունը Նրա, կամ ի՞նչ է Նրա Որդո՞ւն անունը...» (30.4): Այստեղ խոսվում է ոչ թե Աստծո բազում զավակներից մեկի մասին, այլ մեկ որոշակի՝ Որդու՝ Աստծո նույն բնությամբ ու էությամբ:

15. Ծովի վրայով քայլելու հրաշքը ցույց է տալիս նաև Տեր Քրիստոսի Աստվածորդի լինելը:

Այս հրաշքը ցույց է տալիս Տեր Քրիստոսի աստվածությունը, որովհետև նրանում տեսնում ենք բնության վրա գերբնական իշխանություն: Տեր Հիսուսը քայլեց ծովի վրայով մի սքանչելի ու գերբնական ձևով, որ երբևէ չէր տեսնվել նախկինում: Ուստի սբ Պետրոսն ասաց Նրան. «Տե՛ր, եթե Դու ես, հրամայի՛ր ինձ ջրի վրայով գալ Քեզ մոտ», և երբ Տերը թույլ տվեց, Պետրոսը Տիրոջ զորությամբ քայլեց ջրի վրայով: Բայց երբ կասկածեց, սկսել ընկղմվել, և Տերը փրկեց նրան: Այնուհետև Ավետարանն ասում է. «Նավակում գտնվողները մոտեցան երկրպագեցին Նրան՝ ասելով.

«Արդարև Դու Աստծո Որդին ես» (Մատթ. 14.25-33):

Արդյո՞ք նրանք նկատի ունեին սովորական աստվածորդիությունը, որն ունեն մնացած մարդիկ: Իհարկե ոչ: Սովորական որդիությունը չի կարող դրսևորվել ջրի վրա քայլելով կամ մեկի թույլ տալով իր աշակերտներին, որ նրանք նույնպես սա անեն, ինչպես ինքը: Հետևաբար, Հիսուսին երկրպագելիս նրանք փաստորեն խոստովանեցին, որ Նրա որդիությունը եզակի է, ո՛չ նման ուրիշների որդիությանը, այնպիսին, որ ունի արտասովոր հրաշագործ զորություն և ջրի ու քամու վրա իշխանություն:

16. Նրա աստվածության նույն հրաշագործ զորության պատճառով Նաթանայելն ընդունեց, որ Նա Աստծո Որդին է:

Երբ Տերն ասաց Նաթանայելին. «Նախքան Փիլիպպոսի քեզ կանչելը, երբ թզեճու տակ էիր, տեսա քեզ», Նաթանայելը հասկացավ, որ Տերն ունի անհայտն իմանալու կարողություն՝ կամ դա տեսնելով, կամ իմանալով Նաթանայելի կյանքից ինչ-որ գաղտնի պատմություն: Ուստի Նաթանայելը պատասխանեց Նրան. «Ռա՛բբի, Դո՛ւ ես Աստծո Որդին» (Հովհ. 1.48-49): Անշուշտ Նաթանայելը նկատի չունեի ամբողջ մարդկությանը հատուկ որդիությունը, այլ այն, որն ունի Աստվածության հատկություններից, այսինքն՝ անհայտն իմանալու կարողություն:

Տեր Քրիստոսը հավանություն տվեց Նաթանայելի նման ընկալմանը և նրա հավատը զորացնելու համար մի ուրիշ բան էլ ավելացրեց՝ ասելով.

«Չավատում ես, որովհետև ասացի քեզ, թե տեսա քեզ թզեցու տա՞կ:  
Սրանից ավելի մեծերն էլ կտեսնես... Կտեսնեք երկինքը բացված և Աստծո  
հրեշտակներին, որ բարձրանում ու իջնում են Մարդու Որդու վրա» (Չովհ.  
1.50-51):

17. Հարյուրապետի՝ Քրիստոսին իբրև Աստծո Որդի հավատալու պատճառը  
նույնպես մի հրաշք էր:

Այս մասին գրված է մեր ուսուցիչ սբ Մատթեոսի Ավետարանում. «Իսկ  
հարյուրապետը և նրանք, որ նրա հետ պահպանում էին Հիսուսին, երբ  
տեսան երկրաշարժն ու պատահածները, խիստ վախեցան և ասացին.  
«Արդարև՝ Աստծո Որդի էր սա» (27.54): Տես նաև Մարկ. 15.38-39 համար-  
ները:

Երբ նրանք տեսան երկրաշարժը և այն խավարը, որ խաչելության  
ժամանակ պատեց ամբողջ երկիրը ժամը վեցից մինչև ինը<sup>3</sup>, այսինքն՝ ուղիղ  
կեսօրին, հավատացին և ասացին. «Արդարև՝ Աստծո որդի էր սա»: Սրանով  
նրանք նկատի ունեին իհարկե այն որդիությունը, որն Աստվածության նույն  
էությունից է և ունի բնության վրա իշխելու կարողություն: Հետևաբար,  
ինչպես Աստվածաշունչն է ասում, նրանք «խիստ վախեցան»:

Հավանաբար նրանց հավատն առավել զորացավ, երբ «զինվորներից  
մեկը տեգով խոցեց Նրա կողը, և անմիջապես արյուն ու ջուր դուրս ելան»  
(Չովհ. 19.34):

18. Տիրոջ մկրտության ժամանակ տեղի ունեցած հրաշքը Հովհաննես  
Մկրտչին դրդեց վկայելու, որ Տեր Հիսուսն Աստծո Որդին է:

Սբ Հովհաննես Մկրտիչը վկայեց՝ ասելով. «Ես չգիտեի Նրան, սակայն Նա,  
Ով ինձ ուղարկեց ջրով մկրտելու, Նա՛ ասաց ինձ. «Ում վրա կտեսնես, որ

<sup>3</sup> Ժամը վեցն ու ինը համապատասխանում են այժմյան ժամը տասներկուսին և երեքին:

Յոգին իջնում ու նստում է, Նա՛ է, որ մկրտում է Սուրբ Յոգով»: Եվ ես տեսա ու վկայեցի, որ սա՛ է Աստծո Որդին» (Յովհ. 1.33-34):

Աբ Յովհաննես Մկրտչի և մարգարեի վկայած որդիությունը սովորական չէ, այլ այնպիսին, որը հաստատված է Յիսուսի աստվածության վկայությունը ցույց տվող հրաշքով: Այլև, Մկրտիչը նույն առիթով ասում է. «Սա է Նա, ում մասին ասում էի, թե ինձանից հետո գալիս է մի Մարդ, *ով ինձանից առաջ էր*» (Յովհ. 1.30), այն դեպքում, որ Տեր Յիսուսը ծնվել է Մկրտչից վեց ամիս հետո:

19. Տեր Քրիստոսի աստվածորդիությունը խոստովանվեց ի ծնե կույր մարդու կողմից՝ հրաշքով բժշկվելուց հետո:

Յրաշքի կատարումից հետո Տեր Յիսուսը հանդիպում է այդ մարդուն և հարցնում նրան. «Դու հավատո՞ւմ ես Աստծո Որդուն»: Մարդը պատասխանում է. «Տե՛ր, ո՞վ է, որ հավատամ նրան»: Եվ Տերն ասում է նրան. «Ե՛վ տեսար նրան, և՛ դա նա է, ով խոսում է քեզ հետ»: Եվ մարդն ասում է. «Յավատո՞ւմ եմ, Տե՛ր», և երկրպագում է Նրան (Յովհ. 9.35-38):

Այս զրույցը սովորական որդիության մասին չէր, որ հատուկ է բոլոր մարդկանց, այլապես ի ծնե կույրը չէր հարցնի. «Ո՞վ է նա, Տեր», այլ կասեր. «Մենք բոլորս էլ Աստծո որդիներ ենք: Ես նույնպես Աստծո որդի եմ»: Բայց դա մի որդիություն էր, որ կարիքն ուներ հավատի ու հրաշքի և այդ մարդուն դրդեց երկրպագելու Տիրոջը որպես Աստծո Որդու:

Այս հրաշքի կարևորությունը շատ մեծ է՝ շնորհիվ Տեր Յիսուսի այն հայտարարության, որ Ինքն Աստծո Որդին է, և Նրա կոչի, որ մարդիկ հավատան դրան:

20. Յավատալու համար, որ Տեր Քրիստոսն է Աստծո Որդին, քարոզության և բացատրության անհրաժեշտություն կար:

Սա երևում է այն պատմությունից, ուր եթովպացի ներքինին, ով առանց իմաստները հասկանալու կարդում էր Եսայու մարգարեությունները Տեր Քրիստոսի մասին, հանդիպում է Փիլիպպոսին: Փիլիպպոսը բացատրում է Եսայու գրքի տվյալ գլուխը և ներքինուն քարոզում Քրիստոսին: Ուստի եթովպացին խնդրում է մկրտել իրեն, և Փիլիպպոսն ասում է. «Եթե ամբողջ սրտովդ հավատում ես, կարելի է», ինչին ի պատասխան՝ ներքինին ասում է. «Հավատո՞ւմ եմ, որ Հիսուս Քրիստոսն է Աստծո Որդին» (Գործք 8.28-37): Իսկ սովորական որդիությունը կարիք չունի բացատրության կամ քարոզության, որովհետև բոլոր մարդիկ էլ ունեն այն:

Նույնը վերաբերում է նաև Մարթայի դավանությանը: Տեր Քրիստոսը բացատրում է նրան, որ Ինքն է հարությունն ու կյանքը, և ասում. «Ով հավատում է Ինձ, թեկուզ մեռնի, կապրի»: Եվ Մարթան ասում է. «Այո՛, Տեր, ես հավատացի, որ Դու ես Քրիստոսը՝ Աստծո Որդին, որ գալու էր աշխարհ» (Հովհ. 11.25-27): Անշուշտ նա նկատի ունի այն որդիությունը, որն ունի հրաշքներ գործելու զորություն: Սա երևում է Մարթայի «որ գալու էր աշխարհ» խոսքից, որը նշանակում է, թե Հիսուսն այս աշխարհից չէ, այլ եկել է այստեղ:

21. Այս որդիությունը հայտարարվել է Տեր Քրիստոսի կողմից բազմաթիվ առիթներով:

Այս հայտարարությունը որոշակի է Նրա այն խոսքում, որով ի ծնե կույրին կոչ է անում հավատալու (Հովհ. 9.35-37), և Թիվատիրայի Եկեղեցու հրեշտակին ուղղած Նրա խոսքում. «Այսպես է ասում Աստծո Որդին, ով ունի կրակի բոցի նման աչքեր» (Հայտ. 2.18): Սա հայտնապես երևում է նաև Որդու մասին Նրա բոլոր խոսքերում:

22. Տեր Քրիստոսը Որդի է Սուրբ Երրորդության Անձերից մեկը լինելու իմաստով:

Ահա թե ինչու Տեր Հիսուս Քրիստոսն ասաց աշակերտներին.  
«Գնացեք այսուհետև, աշակերտ դարձրեք բոլոր հեթանոսներին, մկրտեք  
նրանց Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով» (Մատթ. 28.19): «Անուն» բառն  
այստեղ գործածված է եզակի թվով՝ ցույց տալու համար, որ Երեքը Մեկ են:

Քանի որ Տիրոջ աստվածորդիությունն ընդհանրական որդիությունն է,  
այլ Նրա աստվածությունը ցույց տվող հատուկ որդիություն, ուստի Նա  
կոչվում է «Որդին» (որոշյալ առունով):

## ՈՐԴԻՆ

23. Որոշյալ առունով գործածվող «Որդին» Սուրբ Գրքում վերաբերում է  
միայն Տեր Հիսուս Քրիստոսին:

Տեր Քրիստոսն իր մասին ասում է. «Իսկ արդ, եթե Որդին ձեզ ազատի,  
ճշմարտապես ազատ կլինեք» (Հովհ. 8.36): Նա այս խոսքով հայտնում է, որ  
եկել է նրանց ազատելու իրենց մեղքերից: Սբ Հովհաննես Ավետարանիչն էլ  
ասում է. «Ով ընդունում է Որդուն, ընդունում է նաև կյանքը, իսկ ով չի ըն-  
դունում Աստծո Որդուն, նաև կյանքը չի ընդունում» (Ա Հովհ. 5.12)  
այսպիսով մեկ խոսքում միաժամանակ գործածելով «Որդին» և «Աստծո  
Որդին» ձևերը՝ ցույց տալու համար, որ դրանք վերաբերում են միևնույն  
Անձին: Սբ Հովհաննեսը նաև ասում է. «Եվ մենք տեսանք ու վկայում ենք, որ  
Հայրն ուղարկեց իր Որդուն իբրև աշխարհի Փրկիչ» (Ա Հովհ. 4.14):  
Հետևաբար, երբ «Որդին» եզրը հանդես է գալիս միայնակ (առանց  
լրացման), վերաբերում է Տեր Հիսուս Քրիստոսին:

Սբ Հովհաննես Մկրտիչը Տեր Հիսուսի մասին խոսելիս նույն ձևն է  
գործածում. «Հայրը սիրում է Որդուն և ամեն ինչ Նրա ձեռքը տվեց, և ով չի  
հնազանդվում Որդուն, կյանք չի տեսնի, այլ Աստծո բարկությունն է մնում  
նրա վրա» (Հովհ. 3.35-36): Տեր Հիսուսն է, իհարկե, վերոհիշյալ խոսքերում  
հիշատակվող Որդին, ում տրվել է Հորից ամեն ինչ, նույնիսկ իրեն  
հավատացողներին հավիտենական կյանք տալու կարողությունը:

Տեր Հիսուս Քրիստոսն Ինքն էլ Իրեն կոչում է «Որդին» և «Աստծո Որդին»:

24. Հրեաները հասկացան, որ այս աստվածորդիությունն Աստվածություն է նշանակում:

Այդ պատճառով էլ, երբ բարձրագույն ատյանում Նրան հարցրին, թե Ի՞նքն է Քրիստոսը՝ Աստծո Որդին, և Նա դրական պատասխան տվեց, «քահանայապետը պատռեց իր հագուստը և ասաց. «Հայիոյե՛ց, այլևս մեր ինչի՞ն են պետք վկաներ, ահա այժմ լսեցիք դրա հայիոյությունը» (Մատթ. ԻՁ 65):

Սբ Հովհաննեսի Ավետարանում էլ գրված է. «Ուստի հրեաներն է՛լ առավել էին ցանկանում սպանել Նրան, որովհետև ոչ միայն շաբաթն էր խախտում, այլև Աստծուն Իր Հայրն էր կոչում՝ Իրեն հավասարեցնելով Աստծուն» (Հովհ. 5.18):

Այսպիսով, Նրա աստվածությունն էր պատճառը Նրան սպանելու հրեաների փափագի, ինչպես և ասացին Նրան. «Բարի գործի համար չէ, որ քարկոծում ենք Քեզ, այլ հայիոյության, և որ Դու մարդ ես, սակայն Քեզ Աստված ես դարձնում» (Հովհ. 10.33):

Նաև դա էր Նրա դեմ կայացված դատավճիռը, որով խնդրեցին Պիղատոսին խաչել Նրան՝ ասելով. «Մենք օրենք ունենք, և ըստ մեր օրենքի՝ Նա պիտի մեռնի, որովհետև Իրեն Աստծո Որդի է դարձրել» (Հովհ. 19.7): Բնականաբար, ընդհանրական որդիությունը, որի մասին խոսում է Եսայի մարգարեն՝ «Տե՛ր, Դու մեր Հայրն ես» (Ես. 64.8), չի կարող մահվան դատապարտության պատճառ դառնալ. սրա համար պատճառ կարող է լինել միայն այն հատուկ որդիությունը, որը ենթադրում է աստվածություն և Աստծո հետ հավասարություն:

**ՏԵՐ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍՆ ԱՍՏԾՈ ՄԻԱԾԻՆ ՈՐԴԻՆ Է**

Տերը կոչվում է Աստծո Միածին Որդի՝ տարբերվելու համար Աստծո մնացյալ զավակներից, ովքեր նույնպես որդիներ են կոչվում սիրո, հավատի և որդեգրության շնորհիվ: Նա Միածին Որդին է, ով ունի Աստծո նույն բնությունը, էությունն ու աստվածությունը: Տերը «Միածին Որդի» է կոչվում հետևյալ տեղիներում.

ա) Հովհ. 1.18. «Աստծուն ոչ ոք չի տեսել երբեք: Բայց Միածին Որդին, որ Հոր ծոցում է, Նա պատմեց»:

Սա նշանակում է, որ Որդին, մարմնանալու արդյունքում տեսանելի դառնալով, հայտնեց մեզ Աստծուն և Նրան ճանաչել տվեց, քանի որ Հայրն ինքն անտեսանելի է իր աստվածությամբ: Ահա թե ինչու Տերն ասաց իր աշակերտ Փիլիպպոսին. «Ով տեսավ ինձ, տեսավ Հորը. ուրեմն դու ինչպե՞ս ես ասում՝ ցո՛ւյց տուր մեզ Հորը» (Հովհ. ԺԴ 9):

բ) Հովհ. 3.16. «Քանզի Աստված այնպես սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր Միածին Որդուն տվեց, որպեսզի ամեն ոք, որ հավատում է Նրան, չկորչի, այլ հավիտենական կյանքն ընդունի»:

գ) Հովհ. 3.18. «Ով հավատում է Նրան, չի դատապարտվի, իսկ ով չի հավատում Նրան, արդեն իսկ դատապարտված է, որովհետև չհավատաց Աստծո Միածին Որդու անվանը»:

Ուրեմն, եթե Միածին Որդուն հավատալը հավիտենական կյանք է շնորհում և դատապարտությունից ազատում (պայմանով, որ հավատացող անձն այսպիսի հավատին համապատասխան վարք ունենա), ապա սա Նրա Աստվածության ապացույց է:

դ) Ա Հովհ. 4.9. «Սրանո՛ւմ երևաց Աստծո սերը մեր հանդեպ. որ Աստված իր Միածին Որդուն ուղարկեց աշխարհ, որպեսզի Նրանով ապրենք»: Անշուշտ չենք կարող Նրանով ապրել, եթե Նա Աստված չէ, որովհետև Աստված է կյանքի աղբյուրը:

ե) Հովհ. 1.14. Սբ Հովհաննեսը, խոսելով այն փառքի մասին, որ վայել է Քրիստոսին իբրև Աստծո Որդու, ասում է. «Եվ խոսքը մարմին դարձավ և



բնակվեց մեր մեջ, և տեսանք Նրա փառքը, փառքն իբրև Հոր Միածնի, լի շնորհով և ճշմարտությամբ»:

Սրանք սուրբգրային հինգ խոսքեր են, որ ներկայացնում են Տեր Քրիստոսին իբրև Հոր Միածին Որդի՝ զատված մարդկության մնացյալ մասից: Ինչ վերաբերում է Որդու աստվածությանը, սրա համար բավական են այն տեղիները, որոնք ցույց են տալիս, որ՝

\* Նա կյանքի աղբյուրն է:

\* Նրանով կարելի է ձեռք բերել հավիտենական կյանքը:

\* Նրան հավատալը փրկում է կործանումից ու դատապարտությունից, մինչ չհավատալը դատապարտության արժանացնում:

\* Նա ունի Աստծո Միածին Որդուն վայել փառքը:

### ԳԼՈՒԽ 3

#### ՏԵՐ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՎ ՀՈՐ ՄԻՋԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Որդու և Հոր միջև եղած հարաբերությունը ևս ապացուցում է Որդու աստվածությունը: Այս հարաբերությունը մեծավ մասամբ հայտարարվում է հենց Տեր Հիսուսի կողմից. Նրա որոշ հայտարարություններ լսելով՝ հրեաները ցանկացան սպանել Նրան: Ստորև մենք քննության կառնենք Հոր և Որդու միջև այս հարաբերության գլխավոր հատկանիշները:

#### 1. Որդին խոսքն է (Բանը՝ Լոգոսը):

Նրա խոսք լինելն աներկբայորեն ցույց է տալիս Նրա աստվածությունը, որովհետև Աստված և Նրա խոսքը մեկ բան են: Այլև ասված է, որ Տեր Հիսուս Քրիստոսն Աստծո զորությունն ու իմաստությունն է (Ա Կոր. 1.24):

Այս ամենը ցույց է տալիս, որ Նա Աստծո Որդին կամ Միածին Որդին է, ինչպես արդեն խոսվել է:

### 1. Տեր Հիսուսի «Ես և Հայրը մեկ ենք» (Հովհ. 10.30) հայտարարությունը

Հրեաները, այս հայտարարությունը ճիշտ հասկանալով, որ նշանակում է Նրա աստվածությունը, քարեր վերցրին՝ Նրան քարկոծելու, և երբ Նա հարցրեց սրա պատճառը, պատասխանեցին. «Հայհոյության համար, և որ Դու մարդ ես, սակայն Քեզ Աստված ես դարձնում» (Հովհ. 10.31-33):

Հոր հետ մեկ լինելու փաստը Տեր Քրիստոսի կողմից շարունակ նշվում է Հորն ուղղած Նրա երկար մենախոսության մեջ, ուր Նա Հորն ասում է առաքյալների մասին. «Սո՛ւրբ Հայր, Քո անունով պահի՛ր նրանց, որոնց տվեցիր Ինձ, որ մեկ լինեն, ինչպես Մենք ենք մեկ» (Հովհ. 17.11): Նա նույն բառերը կրկնում է նաև 22-րդ համարում. «...որպեսզի մեկ լինեն, ինչպես Մենք ենք մեկ», այսինքն՝ որպեսզի լինեն մեկ Եկեղեցի և մեկ միտք, ինչպես Մենք ենք մեկ աստվածություն և մեկ բնություն:

### 3. Տեր Հիսուսի «Ես Հոր մեջ եմ, և Հայրը՝ Իմ մեջ» (Հովհ. 14.10) խոսքը

Այս նույն բառերը Նա կրկնում է նաև հաջորդ՝ 11-րդ համարում. «Հավատո՞ւմ եք Ինձ, որ ես Հոր մեջ եմ, և Հայրը՝ Իմ մեջ. ապա թե ոչ՝ գոնե գործերի՛ համար հավատացեք Ինձ»: Նա նկատի ունի Իր կատարած այն գործերը, որոնք ապացուցում են Իր աստվածությունը, ինչպիսին են, օրինակ, արարման գործերը (Հովհ. 1.3, Կող. 1.16): Նա կրկնում է վերոհիշյալ արտահայտությունը նաև Հորն ուղղած Իր խոսքում. «Դու, Հայր, Իմ մեջ ես, և ես՝ Քո» (Հովհ. 17.21): Հոր՝ Նրա մեջ լինելը նշանակում է, որ Աստվածությունն է Նրա մեջ, և Նրա մեջ Աստվածությունը մարդկության հետ է միացած: Սրա լավագույն բացատրությունը կարելի է գտնել Քրիստոսի մասին սբ Պողոս առաքյալի ասած հետևյալ խոսքում. «Քանզի Նրա մեջ է բնակվում Աստվածության ամբողջ լրումը մարմնապէս» (Կող. 2.9):

Աստվածության ներբնակումը Տեր Քրիստոսի մեջ նման է արևի մեջ՝ լույսի, կամ ջերմության մեջ՝ կրակի, կամ նույնիսկ մտքի մեջ խորհրդի բնակմանը, այնպես որ երկուսն էլ մեկ միավոր են դիտվում:

4. Տեր Հիսուսը նկարագրում է նաև, թե որքան ամուր է Հոր հետ Իր հարաբերությունը:

Նա ասում է. «Եվ այն ամենն, ինչ Իմն է, Քոնն է, և ինչը Քոնն է, այն Իմն է» (Հովհ. 17.10): Այսպիսի հայտարարություն չի կարող արվել մարդ էակի կողմից, որովհետև այն նշանակում է նրա և Հոր միջև լիակատար հավասարություն: Սա էր պատճառը, որ հրեաները կամենում էին Նրան քարկոծել. որովհետև Նա «Իրեն հավասար էր դարձնում Աստծուն» (Հովհ. 5.18):

Այս առնչությամբ սբ Պողոս առաքյալն ասում է. «...ով Աստծո կերպարանքով էր, Աստծուն հավասար լինելը հափշտակություն չհամարեց» (Փիլիպ. 2.6): Սա նշանակում է, որ Նա գործում էր իբրև Հորը հավասար մեկը՝ դա հափշտակություն չհամարելով, որովհետև դա էր իրականությունը:

Տերը նույն միտքը կրկնում է նաև Հովհ. 16.15-ում. «Այն ամենը, որ Հայրն ունի, Իմն է»:

5. Տեր Հիսուսը հայտարարում է նաև, որ Ինքը Հոր գործերն է կատարում:

Նա հրեաներին ասում է. «Եթե Իմ Հոր գործերը չեն կատարում, մի՛ հավատացեք Ինձ: Իսկ եթե կատարում եմ, թեկուզ Ինձ չեք հավատում, սակայն գործերի՛ն հավատացեք, որպեսզի իմանաք և ճանաչեք, որ Հայրն Իմ մեջ է, և ես՝ Հոր»: Ուստի «դարձյալ կամեցան բռնել Նրան» (Հովհ. 10.37-38, 39):

Այն փաստը, որ Տեր Հիսուսը կատարում է Հոր գործերը, ապացուցում է Նրա աստվածությունը: Դա էր պատճառը, որ հրեաները ցանկանում էին սպանել Նրան:

Երբ Տեր Հիսուսն ասաց. «Իմ Հայրը մինչև այժմ գործում է, ես էլ եմ գործում» (Հովհ. 5.17), հրեաները Նրա խոսքը համարեցին Հոր հետ հավասարության մի հայտարարություն: «Այդ պատճառով էլ հրեաներն էլ առավել էին կամենում սպանել Նրան» (Հովհ. 5.18):

Նույն գլխում Տերն առավել հանգամանալից է բացատրում այս կետը: Նրա խոսքերից մեջբերում ենք հետևյալը. «Որովհետև ինչպես Հայրն է մեռյալներին հարություն տալիս և կենդանացնում, այդպես էլ Որդին, ում կամենում է, կենդանացնում է» (Հովհ. 5.21):

6. Տերն ասում է նաև. «Որպեսզի ամենքը պատվեն Որդուն, ինչպես պատվում են Հորը» (Հովհ. 5.22):

Ոչ մի մարդ էակ չի համարձակվի նման խոսք ասել, քանի որ սա նշանակում է Հոր հետ համապատվություն: Ուստի սա էլ է ապացուցում Նրա աստվածությունը:

7. Նա նաև ասում է. «Հավատացե՛ք Աստծուն և Ի՛նձ հավատացե՛ք» (Հովհ. 14.1):

Եթե մարդիկ պիտի հավատան Նրան, ինչպես հավատում են Հորը, ապա սա ապացույց է Հոր հետ Նրա հավասարության, հետևաբար՝ նաև Նրա աստվածության:

8. Նա ասում է. «Ով տեսավ Ինձ, տեսավ Հորը» (Հովհ. 14.9):

Այս խոսքը կշտամբանք էր՝ ուղղված Փիլիպպոսին, ով ասաց. «Տե՛ր, ցո՛ւյց տուր մեզ Հորը, և բավական է մեզ»: Եվ Տերը պատասխանեց նրան. «Այսքան ժամանակ ձեզ հետ եմ, և չճանաչեցի՞ր Ինձ, Փիլիպպո՛ս. ով

տեսավ Ինձ, տեսավ Չորը: Ուրեմն դու ինչպե՞ս ես ասում՝ ցո՛ւյց տուր մեզ Չորը» (Չովհ. 14.8-10):

Տերն Իր աշակերտներին նաև ասում է. «Եթե Ինձ իմանայիք, Իմ Չորն էլ կիմանայիք, և այսուհետև կիմանաք Նրան և տեսաք Նրան» (Չովհ. 14.7):

Իսկապե՞ս մենք տեսնում ենք Չորը հանձին Նրա Որդու, որովհետև Որդին Չոր փառքի լույսն ու Նրա էության պատկերն է (Եբր. 1.3):

Սրա մասին է խոսում սբ Չովհաննես Ավետարանիչը, երբ ասում է. «Աստծուն ոչ ոք չի տեսել երբեք: Բայց Միածին Որդին, որ Չոր ծոցում է, Նա պատմեց» (Չովհ. 1.18), այսինքն՝ մենք Աստծուն տեսանք Նրա Որդու անձի մեջ:

9. Տեր Չիսուս Քրիստոսի և Չոր միջև եղած մի ուրիշ հարաբերություն ևս կա, որ ապացուցում է Քրիստոսի աստվածությունը. դա Չոր աջ կողմում Նրա նստելն է:

#### ԳԼՈՒԽ 4

#### ՏԵՐ ՉԻՍՈՒՄԻ՝ ՉՈՐ ԱՋ ԿՈՂՄՈՒՄ ՆՍՏԵԼԸ

Այս փաստն Աստվածային Ներշնչանքի կողմից հիշատակվում է բազմաթիվ տեղերում: Ստորև կներկայացնենք դրանցից մի քանիսը:

ա) Տեր Չիսուսի խոսքը բարձրագույն ատյանի առաջ, երբ Իրեն դատում էին. «Այսուհետև Մարդու Որդուն կտեսնեք Ձորության աջ կողմում նստած և երկնքի ամպերով եկած» (Մատթ. 26.64):

բ) Սբ Ստեփանոսի խոսքը, երբ նահատակվում էր. «Ահա տեսնում եմ երկինքը բացված և Մարդու Որդուն, որ կանգնած է Աստծո աջ կողմում» (Գործք 7.55):

գ) Սբ Մարկոս Ավետարանչի խոսքը Տիրոջ համբարձման մասին. «Նրանց հետ խոսելուց հետո Տեր Հիսուսը բարձրացավ երկինք և նստեց Հոր աջ կողմում» (Մարկ. 16.19):

դ) Սբ Պողոս առաքյալի խոսքը Տեր Հիսուսի մասին. «Մեր մեղքերը քավելով՝ նստեց բարձունքում՝ Մեծության աջ կողմում» (Եբր. 1.3):

ե) Սբ Պողոս առաքյալի խոսքը, երբ բացատրում է, թե ինչպես է Տեր Հիսուսն առավել, քան հրեշտակները. «Հրեշտակներից որի՞ն էրբևէ ասաց. «Նստիր Իմ աջ կողմում, մինչև թշնամիներիդ քո ոտքերին պատվանդան կդնեն» (Եբր. 1.13): Պողոս առաքյալն այս բառերը վերցրել է 109 սաղմոսից<sup>4</sup>, որի առաջին համարն ասում է. «Տերն ասաց Իմ Տիրոջը՝ նըստիր Իմ աջ կողմում, մինչև թշնամիներիդ Քո ոտքերին պատվանդան կդնեն»:

## **Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ՏԵՐ ՀԻՍՈՒՄԻ՝ ՀՈՐ ԱՋ ԿՈՂՄՈՒՄ ՆՍՏԵԼԸ**

Հայրը աջ կամ ձախ չունի, որովհետև անսահման է, լցնում է ամեն ինչ և ամեն վայր: Չկա տարածք Նրա աջ կողմում, որ ինչ-որ մեկը նստի այնտեղ: Ուրեմն Նրա աջ կողմում նստելն ի՞նչ է նշանակում:

«Աջ» եզրը խորհրդանշում է զորություն, արդարություն և մեծություն: Դրա համար էլ ասվում է. «Տիրոջ աջը զորություն գործեց: Տիրոջ աջը բարձրացրեց ինձ, Տիրոջ աջը զորություն գործեց: Չեմ մեռնելու, այլ կապրեմ և Տիրոջ գործերը կպատմեմ» (Սաղմ. 117.15-17): Սաղմոսերգուն նկատի ունի, որ Աստծո զորությունն է արել այս ամենը: Հոր աջն այստեղ

<sup>4</sup> Սաղմոսների թվահամարները նշված են համաձայն հունարեն Յոթանասնից թարգմանության և ոչ թե եբրայական բնագրի, այսինքն՝ այնպես, ինչպես ավանդաբար կիրառվել է Հայ Առաքելական Եկեղեցում:

նշանակում է Յոր զորությունը, արդարությունն ու մեծությունը: Ուստի երբեմն ասվում է, թե Որդին նստեց Ջորության՝ աջ կողմում, երբեմն էլ՝ Մեծության:

Այս ենթատեքստում «նստել» բառը նշանակում է «գտնվել»:

Սա նշանակում է, ուրեմն, որ Իր խոնարհության օրերին ձեր առաջ հայտնված Որդին՝ տկար, ձեր կողմից ապտակված, ձաղկված ու խաչված, համբառնալով մտավ Իր զորության մեջ: Դուք այլևս չեք տեսնի Նրան տկար վիճակով: Իր երկրորդ գալստյանը Նա գալու է ամպերի վրա, Իր փառքով, շրջապատված հրեշտակներով ու սրբերով (Մատթ. 25.31): Նա գալու է «զորությամբ ու մեծ փառքով» (Մատթ. 24.30): Այլև, Որդին, ով ձեր առաջ կանգնեց իբրև մեղավոր, իսկ Յոր առաջ՝ կրելով աշխարհի բոլոր մեղքերը, պիտի նստի Իր Յոր աջ կողմում, այսինքն՝ Իր արդարության մեջ, և այլևս ոչ ոք չի համարձակվի մեղադրել Նրան:

«Յոր աջ կողմում նստել» արտահայտությունը նշանակում է, որ «Իր անձը դատարկելու» (Փիլիպ. 2.7) վիճակը վերջ է գտել, և Որդին մտել է Իր փառքի մեջ:

Ուստի ասվում է, որ երկրորդ անգամ Նա գալու է «Իր և Յոր փառքով» (Դուկ. 9.26): Նշված է նաև, որ «Մարդու Որդին գալու է Իր Յոր փառքով և Իր հրեշտակների հետ» (Մատթ. 16.27): Այս փառքը Տիրոջ աջ կողմում նստելու փառքն է:

## ԳԼՈՒԽ 5

ՏԵՐ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍՆ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է  
ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

Այս պնդումը բաժանվում է չորս կետի, որոնք են՝

- \* Աստված Չոզի է:
- \* Աստված, անշուշտ, ունի լիակատար վերահսկողություն իր Չոզու վրա:
- \* Տեր Չիսուսը հեղում, ուղարկում և փչում է Աստծո Չոզին:
- \* Վերոգրյալից բխում է, որ Տեր Չիսուս Քրիստոսն Աստված է:

### 1. Աստված Չոզի է:

Սա երևում է հենց Տեր Չիսուսի խոսքից. «Աստված Չոզի է, և Նրան երկրպագողները Չոզով և ճշմարտությամբ պիտի երկրպագեն» (Չովի. 4.24): Առաքյալը նույնպես ասում է. «Տերը Չոզին է» (Բ Կոր. 3.17):

### 2. Չոզին հեղողն Աստված է:

Սա երևում է Չովելի գրքից, ուր Աստված ասում է. «Ես եմ ձեր Տեր Աստվածը, և Ինձանից բացի ուրիշը չկա... Եվ սրանից հետո Իմ Չոզուց կհեղեն ամեն մարմնի վրա, և ձեր ուստրերն ու դստրերը կմարգարեանան, ձեր ծերերը երազներ կտեսնեն, իսկ երիտասարդները՝ տեսիլքներ» (Չովել 2.27-29): Նաև Եզեկիելի գրքում է ասում. «... որովհետև հեղեցի Իմ Չոզին Իսրայելի տան վրա, ասում է Տեր Աստված» (Եզեկ. 39.29)<sup>5</sup>:

### 3. Աստված ուղարկում է իր Չոզին աշխարհ կամ դնում իր Չոզին մարդ էակի մեջ:

---

<sup>5</sup> Թարգմանությունն՝ ըստ եբրայական բնագրի:



Սաղմոսերգուն ասում է. «Ուղարկում ես Քո Յոգին ու ստեղծում նրանց, նորոգում երկրի երեսը» (Սաղմ. 103.30): Իսկ Եզեկիելի գրքում Տեր Աստված ասում է. «Եվ Իմ Յոգին կդնեն ձեր մեջ» (Եզեկ. 36.27)<sup>6</sup>:

«Թվերի գրքում» Մովսես մարգարեն ասում է. «Երանի՛ Տիրոջ բոլոր ժողովուրդները մարգարե լինեին, երբ Տերն Իր Յոգին դներ նրանց վրա» (11.29): Սբ Պողոս առաքյալը նույնպես ասում է. «...Աստծուն, ով նաև տվել է ձեզ Սուրբ Յոգին» (Ա Թես. 4.8):

#### 4. Տեր Յիսուսը հեղեց Աստծո Յոգին աշակերտների վրա:

Սա ակնհայտ երևում է Գործք 2.33-ում: Այս կետը Եհովայի վկաների առաջ ապացուցման կարիք չունի, որովհետև նրանք ընդունում են այն իրենց «Թող Աստված ճշմարիտ լինի» ('Let God Be True') գրքում (էջ 44, պարագրաֆ 5), ուր ասվում է. «Յոգեգալստյան օրը Աստծո Յոգին Յիսուսի միջոցով հեղվել է առաքյալների վրա »:

#### 5. Քրիստոսն ուղարկում է Աստծո Յոգին:

Սա պարզ երևում է սբ Յովհաննեսի Ավետարանում, ուր Տերն ասում է Իր աշակերտներին. «Բայց երբ գա Մխիթարիչը, ում ես կուղարկեմ ձեզ Յորից, ճշմարտության Յոգին, որ Յորից է ելնում, Նա կվկայի Իմ մասին» (Յովհ. 15.26): Նաև՝ «... եթե ես չգնամ, Մխիթարիչը չի գա ձեզ մոտ. իսկ եթե գնամ, Նրան կուղարկեմ ձեզ մոտ» (Յովհ. 16.7):

#### 6. Տեր Յիսուսը փչում է Աստծո Յոգին:

Սա գրված է Յովհաննեսի Ավետարանում. «Երբ սա ասաց, փչեց նրանց վրա և ասաց. «Առե՛ք Սուրբ Յոգին» (Յովհ. 20.22):

---

<sup>6</sup> Թարգմանությունն՝ ըստ եբրայական բնագրի:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

7. Այս ամենից բխում է, որ Քրիստոսն Աստված է:

ա) Բացի Աստծուց ո՞վ կարող է հեղել, ուղարկել և փչել Աստծո Յոզիմ մարդկանց վրա: Ուստի եթե Տեր Յիսուսն արել է այս ամենը, մի՞թե Աստված չէ:

բ) Աստված ասում է Յովելի գրքում. «Իմ Յոզուց կհեղեն ամեն մարմնի վրա» (Յովել 2.27): Այս համարն է վկայաբերում սբ Պետրոս առաքյալը, երբ խոսում է Յոզեգալստյան օրը Սուրբ Յոզու իջման մասին. «Եվ կլինի, որ վերջին օրերում,- ասում է Աստված,- Իմ Յոզուց կհեղեն ամեն մարմնի վրա» (Գործք 2.17), ապա՝ նույն գլխում, ասում է, որ համբառնալուց հետո Տեր Յիսուսը «հեղեց սա, ինչը ինքներդ էլ տեսնում ու լսում եք» (Գործք 2.33): Ո՞վ է, ուրեմն, Տեր Յիսուսը, որ հեղում է Աստծո Յոզիմ մարդկանց վրա, եթե ոչ՝ հենց Աստված:

գ) Ոչ մենք, ոչ իսկ Եհովայի վկաները չեն կարող երևակայել, որ Աստծուց բացի կա մեկ այլ զորություն, որ կարող է ուղարկել կամ հեղել Սուրբ Յոզիմ:

## ԳԼՈՒԽ 6

### ՏԵՐ ՅԻՍՈՒՄԻ ԵՎ ՍՈՒՐԲ ՅՈԳՈՒ ՄԻՋԵՎ ԵՂԱԾ ՈՒՐԻՇ ՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այստեղ կքննարկենք երկու կետ:

Ա) Տիրոջ խոսքը՝ ուղղված առաքյալներին, երբ խոսում էր Սուրբ Յոզու մասին.

«Նա Ինձ կփառավորի, որովհետև Իմից կառնի ու կպատմի ձեզ: Այն ամենը, որ Հայրն ունի, Իմն է: Այդ պատճառով ասացի ձեզ, որ Իմից կառնի ու կպատմի ձեզ» (Հովհ. 16.14-15):

Ինչպե՞ս կարող է Սուրբ Հոգին ինչ-որ բան վերցնել մեկից և տալ մարդկանց... Ինչպե՞ս կարող է պատահել, որ Աստծո Հոգին, ով խոսում էր մարգարեների միջոցով, ամեն ինչ պատմում նրանց և զանազան շնորհներ պարգևում, վերցնի Քրիստոսից, եթե Քրիստոսն Ինքն Աստված չէ:

## **Ո՞ՐՆ Է ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ՝ ՔՐԻՍՏՈՍԻՆ ՊԱՏԿԱՆԱԾԻՑ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՀՈԳԵՎՈՐ ԻՄԱՍԸ**

Տեր Հիսուս Քրիստոսը Սուրբ Երրորդության Երկրորդ՝ Մարմնացած Անձն է. Նա իմաստության, գիտության, հասկացողության և արտաբերության Անձն է Սուրբ Երրորդության մեջ: Հետևաբար, Սուրբ Հոգին, աստվածաբանորեն, կարող է վերցնել այն գիտությունից, որը ներկայացվում է Երկրորդ Անձով: Տեր Հիսուսը սա բացատրում է «Այն ամենն, ինչ Հայրն ունի, Իմն է» խոսքով, որը նույնպես Նրա աստվածության ապացույց է:

Սա կարող է բացատրվել նաև այլ կերպ: Սուրբ Հոգին վերցնում է Տեր Հիսուսի իրականացրած փրկագործության արդյունքից և Եկեղեցու խորհուրդների միջոցով տալիս մարդկանց: Օրինակ՝ Նա վերցնում է մեզ համար Քրիստոսի իրականացրած փրկագործությանը տրված թողության արդյունքից և մարդկանց հայտնում, որ նրանց մեղքերը ներված են Մկրտության, Ապաշխարության կամ Հաղորդության խորհուրդների միջոցով:

Բ) Տեր Հիսուսը հղացվել է Սուրբ Հոգուց:

Տեր Հիսուսի ծննդյան պատմության մեջ սբ Մատթեոս առաքյալն ասում է. «Պարզվեց, որ Նրա մայր Մարիամը, Հովսեփի հետ նշանվելուց հետո, նախքան նրանց միմյանց մերժեցնալը հղիացել է Սուրբ Հոգուց» (Մատթ. 1.18): Սբ Մատթեոսը սա հաստատում է Հովսեփին հրեշտակի ասած խոսքով. «...քանզի նրա մեջ հղացվածը Սուրբ Հոգուց է» (Մատթ. 1.20):

Սբ Ղուկասն էլ գրի է առել սբ Կույսին հրեշտակի ասած խոսքը. «Սուրբ Հոգին կգա քեզ վրա, և Բարձրյալի զորությունը հովանի կլինի քեզ, քանզի Նա, ով ծնվելու է քեզանից, սուրբ է և Աստծո Որդի է կոչվելու» (Ղուկ. 1.35):

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուրեմն ո՞վ է Քրիստոսը: Եվ ո՞րն է Նրա բնությունը:

ա) Նա Սուրբ Հոգուց է, ինչպես Մատթեոս առաքյալն է ասում. «... նրա մեջ հղացվածը Սուրբ Հոգուց է»: Ահա թե ինչու Սուրբ Հոգին իջավ սբ Մարիամի վրա, և նա հղիացավ Սուրբ Հոգուց: Հետևաբար, Տեր Հիսուսի ծնունդը, ըստ Ղուկասի, երկու բան է ցույց տալիս.

\* Նա սուրբ է:

\* Նա Աստծո Որդին է:

Այս երկուսն էլ ապացուցում են Նրա Աստված լինելը:

բ) Աստված Հոգի է (Հովհ. 4.24), և Քրիստոսն Աստծո Հոգուց է հղացվել: Այսպիսով, Նա ունի Աստծո նույն բնությունն ու էությունը, ուստի և կոչվում է սուրբ, որն Աստծո անուններից մեկն է, ինչպես սբ Մարիամն է ասում իր փառաբանական խոսքում. «... և սուրբ է Նրա անունը» (Ղուկ. 1.49):

ՄԱՍ Բ

ՏԵՐ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԸ

ԵՎ ՆՐԱ ԱՍՏԿԱԾԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

## ԳԼՈՒԽ 7

### ՏԵՐ ՀԻՍՈՒՄՆ ԱՐԱՐԻՉՆ Է

Կասկած չկա, որ Աստված է Արարիչը: Արարչագործության պատմությունը սկսվում է հետևյալ բառերով. «Սկզբից Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը» (Ծննդ. 1.1), և «Ծննդոց գրքի» առաջին գլուխը բացատրում է, թե ինչպես Նա ստեղծեց ամեն ինչ: Եսայու գրքում նույնպես Աստված ասում է. «Ես եմ Տերը, որ ստեղծում եմ ամեն ինչ. երկինքը մենակ զցեցի և երկիրը հաստատեցի» (Ես. 44.24), «Ես եմ Տեր Աստվածը, որ անում եմ այս ամենը» (Ես. 45.7):

1. Սակայն կան նաև աստվածաշնչային տեղիներ, որ ցույց են տալիս, որ Քրիստոսն է Արարիչը:

ա) Հովհ. 1.3 – «Ամեն ինչ Նրանով եղավ, և առանց Նրա չեղավ ոչինչ, որ եղավ»: Այստեղ սբ Հովհաննես ավետարանիչը միայն չի նշում, թե Տեր Քրիստոսն Արարիչն է, այլև՝ որ առանց Նրա ոչ մի արարած չի ստեղծվել: Եվ ապա ասում է. «Աշխարհում էր, և աշխարհը Նրանով ստեղծվեց» (Հովհ. 1.10):

բ) Եբր. 1.2 – Սբ Պողոս առաքյալն ասում է. «...խոսեց մեզ հետ Որդու միջոցով..., որով նաև հավիտյանները<sup>7</sup> ստեղծեց»:

գ) Կող. 1.16 – «Քանզի Նրանով հաստատվեց այն ամենն, ինչ կա երկնքում և երկրում, տեսանելիներն ու անտեսանելիները՝ թե՛ աթոռները, թե՛ տերությունները, թե՛ պետությունները, թե՛ իշխանությունները. ամեն ինչ Նրանով և Նրա համար հաստատվեց»:

դ) Ա Կոր. 8.6 – «...և մեկ Տեր Հիսուս Քրիստոս, որով է ամեն ինչ, և մենք՝ Նրանով»:

<sup>7</sup> հավիտյան – 1. ժամանակաշրջան, դարաշրջան. 2. աշխարհ

2. Աստվածաշունչը նշում է Տեր Ջիսուսի կողմից կատարված որոշ հրաշքներ, որոնք նույնպես ապացուցում են, որ Նա Արարիչն է:

Այդ հրաշքներից է, օրինակ, հինգ հացով ու երկու ձկով հինգ հազար մարդու կերակրումը (Մատթ. 14.13-21, Մարկ. 6.30-44, Ղուկ. 9.10-17): Այստեղ Նա ստեղծում է նախապես չեղած մի նյութ, որով այդ հազարավոր մարդիկ կերակրվում ու հագեցնում են: Այս հրաշքի զորությունն առավել է մեծանում այն փաստով, որ երբ ամենքը ուտում ու հագեցնում են, դեռ տասներկու կողով մնացորդ էլ հավաքում են: Որտեղի՞ց այս ամբողջ կերակուրը եկավ: Դա մի նոր նյութ էր՝ ստեղծված Տեր Ջիսուսի կողմից: Այս մեծ հրաշքը հիշատակվում է բոլոր չորս ավետարանիչների կողմից:

Մի ուրիշ նմանատիպ հրաշք է չորս հազար մարդու (չհաշված կանանց և երեխաներին) կերակրումը յոթ հացով ու մի քանի ձկով (Մատթ. 15.32-38), որից հետո մնացորդները կազմում են յոթ մեծ կողով: Այստեղ նույնպես մի նոր նյութ է ստեղծվում Տեր Ջիսուսի կողմից, իսկ արարման կարողությունը միայն Աստծո հատկանիշներից է:

3. Արարման հրաշքների մեջ նորություն էր Գալիլեայի Կանա քաղաքում ջուրը գինու վերածելը (Հովհ. 2):

Դա արարման գործողություն էր, որովհետև ջուրը բաղկացած է միայն թթվածնից ու ջրածնից. ուստի որտեղի՞ց ակոհողն ու գինու մյուս բաղկացուցիչ տարրերը հայտնվեցին: Տերն այս ամենը ստեղծեց մի հրաշքով, որը Նա կատարեց միայն իր կամենալով, առանց որևէ գործողության. ոչ որևէ նշան արեց, ոչ օրհնեց, ոչ էլ նույնիսկ հրաման տվեց, ինչպես օրինակ՝ «Թող այս ջուրը գինու՛ վերածվի»: Ո՛չ, Նա ոչ մի նման բան չարեց, այլ միայն ասաց. «Թակույկները ջրո՛վ լցրեք», և մինչև ծայրը լցրեցին դրանք... Եվ ասաց նրանց. «Այժմ վերցրեք ու բերեք սեղանապետի մոտ», և նրանք բերեցին (Հովհ. 2.7-8): Այսպիսով, ջուրը

գինու վերածվեց պարզապես Նրա կամենալով. Նա կամեցավ, որ գինու նյութը ստեղծվի, և այն ստեղծվեց նույնիսկ առանց հրամանի:

4. Մի ուրիշ հրաշք է ի ծնե կույրին տեսողություն շնորհելը (Չոմի. 9):

Տեր Չիսուսը նրա համար ստեղծեց աչքեր, որոնք չկային մինչ այդ: Նա դրանք ստեղծեց հողից ճիշտ այնպես, ինչպես առաջին մարդն էր ստեղծվել: Եթե կավն առողջ աչքի վրա դրվի, վերջինս կկորցնի տեսողությունը, մինչդեռ երբ Տերը կավ դրեց կույրի աչքերին, այն պատճառ դարձավ, որ երկու աչքերն էլ գոյանան: Այս հրաշքի զորությունը մեծանում է այն փաստով, որ Տերը հրամայում է ի ծնե կույրին գնալ և Սիլո-վամի ավազանում լվացվել: Սովորաբար լվացումը լուծում է կավը, սակայն այս հրաշքում կավն ակնախոռոչներում աչքերն ամրացրեց՝ դրանք կապելով անոթներով, հյուսվածքով ու մկաններով: Այդ պատճառով էլ ի ծնե կույրն ասաց հրեաներին. «Երբեք ոչ ոք չի լսել, որ մեկը բացի կույր ծնվածի աչքերը» (Չոմի. 9.32):

Այստեղ մի կարևոր աստվածաբանական հարց է ծագում.

5. Ինչպե՞ս կարող է Տեր Չիսուսն արարիչ լինել, եթե արարչությունը միայն Աստծո հատկանիշներից է:

Նա ստեղծել է իր աստվածության զորությամբ՝ լինելով Սբ Երրորդության Երկրորդ Անձը՝ Բանը (Լոգոսը):

Այդ դեպքում ո՞վ է ստեղծել ամբողջ տիեզերքը՝ Տեր Չիսուս Բրիստոսը, թե՞ Չայր Աստված, ով ստեղծել է ամեն ինչ:

Չայր Աստված ստեղծել է ամբողջ աշխարհը Որդու միջոցով. Նա այն ստեղծել է իր Իմաստությամբ, իր Գիտությամբ, իր Խոսքով, այսինքն՝ Սբ Երրորդության Երկրորդ Անձի միջոցով: Այդ պատճառով էլ առաքյալն ասում



է. «...որով նաև հավիտյանները ստեղծեց» (Եբր. 1.2), այսինքն՝ Իր Բանականությամբ և Իմաստությամբ:

## ԳԼՈՒԽ 8

### ՏԵՐ ՀԻՍՈՒՄԸ ԿՅԱՆՔԻ ՊԱՐԳԵՎԻՉՆ Է

1. Սբ Հովհաննես Ավետարանիչն ասում է. «Նրա մեջ էր կյանքը» (Հովհ. 1.4):

Տեր Հիսուս Քրիստոսը կյանք է տալիս այստեղ՝ երկրի վրա, և հավիտենության մեջ, իսկ սա միայն Աստծուն է հատուկ:

2. Տեր Հիսուսը կենդանացնում, այսինքն՝ կյանք էր տալիս մեռյալներին:

Սուրբ Գիրքն այս կարգի երեք հրաշք է հիշատակում.

ա) Հայրոսի դստեր հարությունը, ով մեռած պառկած էր մահճում, և նրա հարազատները լալիս ու ողբում էին (Մարկ. 5.22-24, 35-42).

բ) Նայինի այրու որդու հարությունը, ով տարվում էր դեպի գերեզման, և քաղաքացիների մի մեծ ամբոխ շրջապատել էր նրան (Ղուկ. 7.11-17).

գ) Ղազարոսի հարությունը նրա մահվանից ու թաղումից չորս օր անց, երբ արդեն փտում էր, ինչպես նրա քույրն ասաց (Հովհ. 11):

Կարևոր է նշել, որ այս երեք հրաշքներն էլ գործվել են Տիրոջ միայն հրամանով: Իսկ սա ապացուցում է, որ Նա Աստված է և կյանքի պարգևիչ:

3. Իբրև լուսաբանություն Տիրոջ գործած հարության հրաշքների՝ բավական է հիշել Նրա խոսքը՝ «Որովհետև ինչպես Հայրն է մեռելներին հարություն տալիս ու կենդանացնում, այդպես էլ Որդին, ուն կամենում է,

կենդանացնում է» (Յոզի. 5.21): Սա հայտնի է դարձնում Նրա և Նրա Յոր միջև հավասարությունը, այլև՝ որ կյանք տալը կախված է Նրա կամքից:

4. Տեր Յիսուսն իր մասին ասում է, որ Ինքը «կյանք է տալիս աշխարհին» (Յոզի. 6.33), որովհետև Ինքն է «կյանքի հացը» (Յոզի. 6.35):

Այլև ասում է. «Ես եմ երկնքից իջած հացը» (Յոզի. 6.41, 51): «Եթե մեկն ուտի այս հացից, հավիտյան կապրի, և այդ հացը, որ Ես տալու եմ, Իմ մարմինն է, որը տալու եմ աշխարհի կյանքի համար» (Յոզի. 6.52): «Ով ուտում է Իմ մարմինն ու խմում Իմ արյունը, հավիտենական կյանք ունի, և վերջին օրը Ես նրան հարություն եմ տալու» (Յոզի. 6.55):

Սբ Յովհաննեսի Ավետարանի այս՝ 6-րդ գլուխը Տեր Յիսուսին ներկայացնում է իբրև կյանքի պարզևի՝ Յաղորդության խորհրդի միջոցով: Նրա մարմինն ու արյունը, կամ Ինքը՝ ըստ իր խոսքի, հարություն եմ տալու վերջին օրը (Յոզի. 6.55):

5. Տեր Յիսուսը հետևյալ խոսքում հաստատում է, որ Ինքը հավիտենական կյանք է տալիս. «Իմ ոչխարներն Իմ ձայնը լսում են, և Ես ճանաչում եմ նրանց, և Իմ հետևից են գալիս: Ես հավիտենական կյանք եմ նրանց տալիս, և չեն կորչի հավիտյան, և Իմ ձեռքից ոչ ոք չի հափշտակի նրանց» (Յոզի. 10.27-28):

6. Տեր Յիսուսը հավիտենական կյանք է տալիս նրանց, ովքեր հավատում են Իրեն՝ ըստ հետևյալ խոսքի. «Նրան հավատացող ամեն ոք հավիտենական կյանքը կընդունի» (Յոզի. 3.15-16):

7. Սամարացի կնոջ հետ խոսելիս Տեր Յիսուսը քաջալերեց նրան՝ Իրենից խնդրելու «կենդանի ջուրը», և ասաց նրան. «Ով խմի այն ջրից, որ Ես եմ տալու, չի ծարավի հավիտյան: Այլ այն ջուրը, որ Ես եմ տալու, կդառնա

նրա համար ջրի աղբյուր, որ բխում է հավիտենական կյանքի համար»  
(Չովհ. 4.13-14):

Ուշադրություն դարձրեք, որ Նա այստեղ երկու անգամ է գործածում «Ես եմ տալու» արտահայտությունը՝ հաստատելու համար, որ Ինքն է հավիտենական կյանքի համար բխող այս պարզևը տվողը:

Իբրև եզրակացություն ասենք, որ ոչ ոք երբևէ չի խոսել այնպես, որ ասի, թե ինքն է կյանք տվողը, մանավանդ՝ հավիտենական կյանք, և որ ինքը հարություն է տալիս և կենդանացնում, ուն կամենում է, որ ով հետևում է իրեն, հավիտյան կապրի, չի կործանվի և ոչ ոք նրան իր ձեռքից չի խլի... Սրանք բոլորը հատուկ են միայնումիայն Աստծո՝ իշխանությանը:

## ԳԼՈՒԽ 9

### ՏԵՐ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍՆ ԱՆԺԱՄԱՆԱԿ Է

1. Տեր Հիսուսի անժամանակությունը կարող ենք եզրակացնել հրեաներին ուղղած Նրա հետևյալ խոսքից.

«Նախքան Աբրահամի լինելն եմ ես» (Չովհ. 8.58): Սա նշանակում է, որ Նա ԿԱՐ, գոյություն ունեի հազարավոր տարիներ նախքան մարմնով Իր գալուստը, նախքան հայր Աբրահամը: Հրեաները ճիշտ հասկացան, որ Նրա խոսքը վերաբերում է Նրա աստվածությանը, ուստի «քարեր վերցրին, որ զգեն Նրա վրա» (Չովհ. 8.59):

2. Տերը հայտարարում է նաև, որ գոյությամբ Ինքը նախորդում է Իր նախահայր Դավթին:

Թեև ըստ ազգաբանության Նա Դավթի հետնորդն է, սակայն «Հայտնության» գրքում ասում է. «Ես՝ Հիսուս... Դավթի արմատն ու սերունդն եմ» (Հայտ. 22.16): «Դավթի սերունդ» արտահայտությունը պարզ ու հասկանալի է, որովհետև Նա Դավթի հետնորդն է: Սակայն «արմատ» բառը նշանակում է, որ Նա գոյություն է ունեցել նախքան Դավիթը: Սա վկայվում է նաև Աստծո աթոռը շրջապատած երեցներից մեկի կողմից, ով տեսիլքը տեսնող սբ Հովհաննեսին ասում է. «Ահա հաղթեց Առյուծը Հուդայի ցեղից՝ Դավթի արմատը» (Հայտ. 5.5)<sup>8</sup>:

3. Նա նաև գոյություն է ունեցել «նախքան արուսյակը» (այսինքն՝ նախքան արարչության պատմության սկիզբը):

Աստվածաշունչը հաստատում է, որ Քրիստոսը եղել է նախքան Դավիթը, Հուդան ու Աբրահամը, որովհետև սաղմոսում Տեր Աստված ասում է Նրան. «Արգանդից, նախքան արուսյակը ծնեցի Քեզ» (Սաղմ. 109.3):

4. Նա գոյություն է ունեցել նախքան աշխարհի սկիզբը և նախքան բոլոր հավիտյանները:

Հորն ուղղած Իր խոսքում Նա ասում է. «Եվ այժմ փառավորի՛ր Ինձ, Հայր, Քեզ մոտ եղած այն փառքով, որն ունեի Քեզանից նախքան աշխարհի լինելը» (Հովհ. 17.5): Նաև՝ «...որովհետև սիրեցիր Ինձ նախքան աշխարհի լինելը» (Հովհ. 17.24): Այս ամենն ապացուցում է, որ Տեր Հիսուս Քրիստոսը գոյություն է ունեցել նախքան աշխարհի հաստատումը:

5. Նա գոյություն է ունեցել նախքան արարչությունը, որովհետև այն Իր ձեռքի գործն է:

---

<sup>8</sup> «Հայտնության» գրքից սույն գրքում բերվող բոլոր տեղիքները թարգմանված են ըստ հունարեն բնագրի, քանի որ նրանց գրաբարյան թարգմանությունը ունի անճշտություններ (կատարվել է ԺԲ դարում, ուստի չունի բնագրային արժեք):

Այնտեղ, ուր սբ Պողոս առաքյալը Տեր Չիսուսին ներկայացնում է իբրև «աներևույթ Աստծո պատկերը» (Կող. 1.15), ասում է. «Ամեն ինչ Նրանով և Նրա համար հաստատվեց: Եվ Նա ամեն ինչից առաջ է, և ամեն ինչ Նրանով ամբողջական դարձավ» (Կող. 1.16-17):

Այսպիսով, Նա ամեն ինչից առաջ էր... Իսկ ինչո՞ւ...

Որովհետև ամեն ինչ ստեղծվել է հենց Նրա՝ կողմից:

6. Կամ՝ այլ խոսքով՝ այն փաստը, որ Նա է ամեն ինչ ստեղծել, նշանակում է, որ Նա ամեն ինչից առաջ էր:

Սբ Չովհաննես Ավետարանիչն այս առնչությամբ ասում է. «Ամեն ինչ Նրանով եղավ, և առանց Նրա չեղավ ոչինչ, որ եղավ» (Չովհ. 1.3): Նաև՝ «Աշխարհում էր, և աշխարհը Նրանով եղավ» (Չովհ. 1.10): Չետևաբար, եթե աշխարհը Նրանով է ստեղծվել, նշանակում է՝ Նա կար նախքան աշխարհն ու ամեն ինչ:

7. Նա գոյություն ունի հավիտենապես:

Միքիա մարգարեի մարգարեությունը շատ որոշակի է նշում Քրիստոսի՝ ժամանակներից առաջ գոյության մասին: Նա ասում է. «Եվ Դո՛ւ, Բեթղեհե՛ն, տո՛ւն Եփրաթայի, Չուդայի հազարավորների մեջ սակավավոր ես, քեզանից Ինձ համար Իսրայելի մի իշխան դուրս կգա, ուն ելքը վաղուց է՝ հավիտենությունից<sup>9</sup>» (Միք. 5.2): Այստեղ Տեր Չիսուս Քրիստոսը ներկայացվում է իբրև հավիտենական մեկը, այն դեպքում, որ հավիտենությունը միայն Աստծո հատկանիշներից է: Ուրեմն ո՞րն է «ուն ելքը վաղուց է՝ հավիտենությունից» խոսքի իմաստը: Իմաստն այն է, որ՝

8. Նա Չորից ելել է հավիտյաններից առաջ:

<sup>9</sup> Ըստ գրաբ. թարգմանության՝ «...ուն ելքը աշխարհի օրերի սկզբից է»:

Այսինքն՝ Հորից ծնվել է հավիտյաններից առաջ: Սբ Երրորդության մեջ Նա Որդին է և Խոսքը (Բանը), իսկ Խոսքը հավիտյան Աստծո մեջ է: Նա Աստծո Իմաստությունն է, իսկ Աստծո Իմաստությունը հավիտյան Նրա մեջ է: Ուրեմն եթե հավիտենականությունը միայն Աստծո հատկանիշներից է, իսկ Տեր Հիսուս Քրիստոսը հավիտենական է և անժամանակ, ապա Նա Աստված է:

9. Նա հավիտենական է՝ մինչև ժամանակների վախճանը:

Այս հատկանիշը պարզորոշ ցույց է տրվում առաքյալի հետևյալ խոսքում. «Հիսուս Քրիստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան» (Եբր. 13.8), ինչպես նաև հենց Տիրոջ խոսքում. «Ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերին, մինչև աշխարհի<sup>10</sup> վախճանը» (Մատթ. 28.20): Դանիել մարգարեն այս հավիտենականության մասին ասում է. «Նրա իշխանությունը հավիտենական իշխանություն է, որ չի անցնում, և Նրա թագավորությունը չի կործանվելու» (Դան. 7.14):

---

<sup>10</sup> Հունարեն «եոն» բառը, որ այստեղ թարգմանվել է հայերեն «աշխարհ» բառով, ավելի համապատասխանում է հայերեն «հավիտյան» բառին, որ նշանակում է թե՛ աշխարհ, թե՛ մանավանդ՝ երկար կամ անվախճան ժամանակ, դարաշրջան, կյանք:

## ԳԼՈՒԽ 10

### ՏԵՐ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍՆ ԱՄԵՆՈՒՐԵՔ Է

#### ՄԻԱՅՆ ԱՍՏՎԱԾ Է ԱՄԵՆՈՒՐԵՔ

1. Ամենուրեքությունը միայն Աստծո հատկանիշներից է: Ուստի Դավիթ մարգարեն, սա գիտենալով, ասում է Նրան. «Ո՞ւր գնամ Քո Հոգուց կամ Քո ներկայությունից ես ո՞ւր փախչեմ: Եթե ելնեմ երկինք, Դու այնտեղ ես, թե իջնեմ գերեզման, այնտեղ էլ ես մոտ: Թե առավոտյան թևերս առնեմ և ծովի եզերքում բնակվեմ, այնտեղ նույնպես Քո ձեռքը կառաջնորդի ինձ և Քո աջը կընդունի ինձ» (Սաղմ. 138.7-10):

2. Այն էակը, որ ներկա է ամենուր, անկասկած անսահման է, իսկ անսահման է միայն Աստված: Ուստի այս հատկանիշը պատկանում է միայն Նրան. Աստված միաժամանակ և՛ երկնքում է, և՛ երկրում, որովհետև երկինքն Աստծո աթոռն է, իսկ երկիրը՝ Նրա պատվանդանը (Ես. 66.1, Մատթ. 5.34-35): Եվ Աստծո ներկայությունը պաշտամունքային վայրերում միայն մի տեսակն է Նրա ամենուրեքության: Այսպես Սողոմոն Իմաստունը Տաճարն օծելիս դիմում է Աստծուն՝ ասելով. «Երկինքն ու երկինքների երկինքը բավական չեն Քեզ, ուրեմն որքա՛ն առավել այս տունը, որ շինեցի» (Գ Թագ. 8.27):

3. Որևէ այլ էակ չի կարող ներկա լինել ամենուրեք, այլապես սա կնշանակի, որ նա անսահման է, մինչ անսահմանությունը միայն Աստծո հատկանիշներից է: Ուստի եթե մենք ապացուցենք, որ Տեր Հիսուսն ամենուրեք է, սա կլինի Նրա աստվածության ևս մեկ ապացույց:

## ՏԵՐ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍՆ ԱՄԵՆՈՒՐԵՔ Է

1. Նա իրեն հավատացողներին տալիս է մի խոստում, որն Աստուծուց բացի ուրիշ ոչ ոք չի կարող տալ: Նա նրանց ասում է. «Որտեղ երկու կամ երեք հոգի հավաքվել են իմ անունով, ես այնտեղ եմ՝ նրանց մեջ» (Մատթ. 18.20): Սա նշանակում է, որ Տեր Հիսուսը ներկա է ամբողջ երկրում, որովհետև եկեղեցին տարածվել ու հասել է երկրի ամենահեռավոր մասերն իսկ: Դու կարող ես պատկերացնել, որ ամբողջ աշխարհում քրիստոնյաները կիրակի օրը հավաքվել են իրենց եկեղեցիներում, և Տեր Հիսուսը նրանց մեջ է բոլոր այն վայրերում, ուր հավաքվել են: Սա չի՞ նշանակում, որ Նա երկրի վրա ամենուրեք է:

2. Մինչ Նա երկրի վրա ամենուրեք է, միաժամանակ նաև երկնքում է. որովհետև Նա բարձրացավ երկինք, ինչը տեսան առաքյալները (Գործք 1.9), և իր Հոր աջ կողմում է, ինչպես սբ Ստեփանոսը տեսավ (Գործք 7.56):

3. Միաժամանակ Նա նաև դրախտում է՝ այս աշխարհից հեռացածների հետ<sup>11</sup>: Սա հայտնի է աջակողմյան ավազակին<sup>12</sup> Տիրոջ ասած խոսքից, երբ խաչի վրա էին. «Այսօր ինձ հետ դրախտում կլինես» (Ղուկ. 23.43):

Մի ուրիշ ապացույց կա նաև Պողոս առաքյալի հետևյալ խոսքում. «Ցանկանում եմ ելնել և Քրիստոսի հետ լինելն առավել լավ եմ համարում» (Փիլ. 1.23): Սա ցույց է տալիս, որ աշխարհից հեռացածները Տեր Հիսուսի հետ երկնքում են, և Նա էլ՝ երկրի վրա պայքար մղող հավատացյալների հետ:

<sup>11</sup> «Դրախտ» բառի տակ այստեղ պետք է հասկանալ այն, ինչ Հայ եկեղեցու հայրերը կոչում են «արդարների օթևաններ» կամ «կայաններ» և ոչ թե այն վերջնական դրախտ-արքայությունը, որին պիտի արժանանան արդարները Տիրոջ երկրորդ գալուստից և Մեծ դատաստանից հետո:

<sup>12</sup> Թեև Ավետարանում չի նշված, թե հավատացող ավազակը Տիրոջ որ կողմում էր խաչված, սակայն ըստ եկեղեցու Ավանդության՝ նա գտնվել է Տիրոջ աջ կողմում, որից էլ առաջացել է «աջակողմյան ավազակ» արտահայտությունը:



4. Ըստ Եկեղեցուն Տիրոջ տված խոստման՝ Նա երկնքում է, երկրի վրա և դրախտում, ուր արդարները սպասում են, քանզի Նա ասում է. «Եվ ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերին, մինչև աշխարհի վախճանը» (Մատթ. 28. 20):

5. Նույն իրողությունը Տերը ներկայացնում է Նիկողեմոսին ուղղած Իր խոսքում. «Ոչ ոք երկինք չի բարձրացել, բացի Նրանից, ով իջավ երկնքից՝ Մարդու Որդուց, ով երկնքում է» (Հովհ. 3.13): Սա նշանակում է, որ Նա նաև երկնքում էր այն նույն ժամանակ, երբ խոսում էր Նիկողեմոսի հետ:

6. Տերը ոչ միայն երկրի վրա այնտեղ է, ուր երկու կամ երեք հոգի հավաքված են Նրա անունով, այլև Նրան սիրող յուրաքանչյուր հավատացյալի սրտում, ինչպես ասաց. «Ով սիրում է Ինձ, Իմ խոսքը կպահի, և Իմ Հայրը կսիրի նրան. և նրա մոտ կգանք ու կօթևանենք նրա մոտ» (Հովհ. 14.23): Սա նշանակում է, որ Աստծուն սիրող անձը օթևան է Տեր Հիսուսի համար: Տերը մտնում է նրա սրտի մեջ, բնակվում նրա հետ, ուր էլ նա գնա կամ հաստատվի: Այդ պատճառով էլ սբ Պողոս առաքյալն ասում է. «Կենդանի եմ այսուհետև ո՛չ ես, այլ Քրիստոսն է կենդանի իմ մեջ» (Գաղ. 2.20):

7. Տեր Հիսուսը ոչ միայն արդարների և սրբերի մեջ է, այլև ներկա է այն վայրերում, ուր չարերը մոլորվեցին, և փնտրում է նրանց, այցելում ու թակում նրանց սրտի դռները: Ուստի ասում է. «Ահա դռան առաջ կանգնած՝ բախում եմ. եթե մեկը ձայնս լսի և դուռը բացի, կմտնեն նրա մոտ և նրա հետ կընթրեն, նա էլ՝ Ինձ հետ» (Հայտ. 3.20):

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Վերոնշյալ բոլոր փաստերն ապացուցում են, որ Տեր Հիսուս Քրիստոսն անսահման է և ամենուրեք՝ երկնքում, դրախտում և միաժամանակ երկրի

վրա՝ պաշտամունքային վայրերում, հավատացյալների հավաքներում և  
հրեն սիրողների սրտերում: Նա թակում է կորսվածների ու իր  
պատվիրաններից խոտորվածների սրտերի դռները: Նա շարժվում է  
ամենքի հետ, ուր էլ գնան կամ բնակվեն: Նա ողջերի, ինչպես նաև  
ննջեցյալների հետ է:

*Եվ այս ամենը հատուկ է միայն մեկին՝ Աստծուն:*

## ԳԼՈՒԽ 11

### ՏԵՐ ՉԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍՆ ԻՋԵԼ Է ԵՐԿՆՔԻՑ

1. Տեր Չիսուն ասում է հրեաներին. «Ես եմ երկնքից իջած հացը» (Չովհ. 6.41): Այսպիսով, Նա կյանքի տվիչ է, որովհետև «Աստծո հացը նա է, որ իջնում է երկնքից և կյանք տալիս աշխարհին» (Չովհ. 6.33): Այնուհետև կրկնում է նույնը. «Ես երկնքից իջա» (Չովհ. 6.38):

Նա երկնքից իր իջնելը բացատրում է՝ ասելով.

2. «Ելա Չորից և եկա աշխարհ, դարձյալ աշխարհը թողնում եմ և գնում Չոր նոտ» (Չովհ. 16.28): Նա շեշտում է «Ելա Չորից» խոսքը, որովհետև իր աշակերտներին դրանից առաջ ասում է. «Քանզի Չայրն Ինքն էլ սիրում է ձեզ, որովհետև դուք Ինձ սիրեցիք և հավատացիք, որ Ես Աստծուց եմ ելել» (Չովհ. 6.27): Նա նույն բանի մասին ասում է նաև հրեաների հետ իր խոսակցության ժամանակ (Չովհ. 8.42):

3. Չետևաբար, Տեր Չիսուս Քրիստոսը երկրից չէ, այլ երկնքից և ելել է Չորից:

Նա ունի բնակության իր բուն վայրը, սակայն մարմնով հայտնվեց երկրի վրա՝ մարդկանց մեջ, որովհետև «Իրեն դատարկեց՝ ծառայի կերպարանք առնելով, մարդկանց նման դառնալով» (Փիլ. 2.7): Նա պետք է բարձրանար երկինք՝ այնտեղ, որտեղից իջել էր: Ինչ վերաբերում է այս երկրին, Տեր Հիսուս Քրիստոսը կար դրա արարումից առաջ, կամ, ավելի ճիշտ, այն արարվել էր հենց Նրա կողմից, քանի որ «Ամեն ինչ եղավ Նրանով, և առանց Նրա չեղավ ոչինչ, որ եղավ» (Հովհ. 1.3): Նա Հոր հետ էր հավիտենապես. Նա ունի իր բուն կամ, մանավանդ, փառավորյալ՝ բնակավայրը...

4. Տերը բացատրում է Նիկողեմոսին երկնքից իր իջնելն ու բարձրանալն այնտեղ: Նա ասում է. «Ոչ ոք երկինք չի բարձրացել, բացի Նրանից, ով իջավ երկնքից՝ Մարդու Որդուց, ով երկնքում է» (Հովհ. 3.13): Երկինքն այստեղ երկինքների երկինքն է նշանակում, ուր ոչ ոք չի բարձրացել կամ այնտեղից իջել, Տեր Հիսուսից բացի, ով Երրորդության Երկրորդ Անձն է և «Հոր ծոցում է» (Հովհ. 1.18), այնտեղ՝ երկինքների երկնքում, որտեղ գտնվում է Աստծո աթոռը, ինչպես Տերն Ինքն է ասում Լեռան քարոզում (Մատթ. 5.34): Իսկ «Մարդու Որդին, ով երկնքում է» խոսքը՝ ասված Նիկողեմոսին, նշանակում է, որ երկրի վրա խոսելիս Նա նաև երկնքում էր, մի բան, որ ապացուցում է Նրա Աստված լինելը:

Նրա հրաշալի համբարձումը երկինք (Գործք 1.9) հաստատումն է առաքյալներին ուղղած Նրա այս խոսքի. «Դարձյալ աշխարհը թողնում եմ և գնում Հոր մոտ» (Հովհ. 16.28):

5. Տեր Հիսուսը երկնքում ո՛չ թե ինչ-որ բնակավայրում ապրող մի սովորական բնակիչ է, այլ ունի իշխանություն այնտեղ:

Տեր Հիսուսն ընդունեց Ստեփանոս Նախավկայի հոգին, երբ նա քարկոծվելիս դիմեց Տիրոջը՝ ասելով. «Տե՛ր, ընդունի՛ր իմ հոգին» (Գործք 7.59): Դարձյալ Տեր Հիսուսն էր, որ իր աջ կողմում խաչված ավազակին

հանեց երրորդ երկինք (Բ Կոր. 12.2-4), երբ ասաց նրան. «Այսօր Ինձ հետ դրախտում կլինես» (Ղուկ. 23.43): Ուրիշ ո՞վ է ընդունում հոգիները և ունի իշխանություն նրանց դրախտ տանելու, եթե ոչ՝ Աստված: Իսկ Տեր Յիսուս Քրիստոսն անում է սա:

6. Տեր Յիսուսն առաքյալներին տվեց Արքայության բանալիները:

Նա ասում է Պետրոսին՝ իբրև առաքյալների ներկայացուցչի. «Եվ ես քեզ կտամ երկնքի արքայության բանալիները» (Մատթ. 16.19), իսկ բոլոր առաքյալներին ասում է. «Ինչ որ կապեք երկրի վրա, կապված կլինի երկնքում, և ինչ որ արձակեք երկրի վրա, արձակված կլինի երկնքում» (Մատթ. 18.18):

Այստեղ հարցնում ենք. ո՞վ իրավունք ունի մարդկանց տալու երկնքի բանալիները և իշխանություն՝ կապելու և արձակելու այնտեղ, եթե ոչ՝ Աստված:

7. Երկնքում Տեր Յիսուսի իշխանությունը հայտնի է դառնում նրանով, որ բոլոր երկնային զորությունները երկրպագում են Նրան:

Այս մասին առաքյալն ասում է. «...որպեսզի Յիսուս Քրիստոսի անունով իջնի ամեն ծունր՝ երկնայինների, երկրայինների և սանդարամետականների» (Փիլ. 2.10): Յրեշտակներից (երկնայիններից) երկրպագություն ընդունելը Նրա աստվածության ապացույց է:

8. Այլև՝ Նա առավել բարձր է, քան երկինքները և այնտեղ բարեխոսում է մեզ համար:

Սա նշված է սբ Պողոսի՝ երրայեցիներին ուղղած թղթում. «... քանզի միշտ կենդանի է՝ բարեխոսելու նրանց համար: Որովհետև հենց այսպիսի

քահանայապետ էր մեզ պետք՝ սուրբ, անմեղ, անարատ, մեղավորներից զատված և երկինքներից էլ բարձր» (7.25-26):

## ԳԼՈՒԽ 12

### ՏԵՐ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍՆ ԱՌԱՋԻՆՆ ՈՒ ՎԵՐՋԻՆՆ Է

Այս պնդումը պիտի ներկայացնենք չորս կետով՝

ա) Միայն Աստված է առաջինն ու վերջինը: Չկա աստված Նրանից առաջ կամ հետո:

բ) Տեր Հիսուս Քրիստոսը նույնպես առաջինն ու վերջինն է, Ալֆան և Օմեգան<sup>13</sup>:

գ) «Առաջինի» նշանակությունն ու կարևորությունը:

դ) Եհովայի վկաների կողմից հերքման երկու փորձ:

Ա) Միայն Աստված է առաջինն ու վերջինը:

Հավիտենության մեջ Աստված մենակ էր, ինչ պատճառով և առաջինն ու վերջինն էր: Այնուհետև Նա ստեղծեց բոլոր արարածներին. նրանք բոլորը Նրա ձեռքի գործն են: Ոչ մի արարած չի կարող ասել, թե ինքն Ալֆան և առաջինն է, որովհետև այսպիսի կարգավիճակը միայն Աստծուն է պատկանում: Ուստի Եսայու գրքում Աստված Իրեն է վերագրում այն՝ ասելով. «Ես եմ առաջինն ու ես եմ վերջինը, Ինձանից բացի ուրիշ Աստված չկա» (44.6). «Ես եմ առաջինը և ես եմ վերջինը: Իմ ձեռքը գցեց երկրի

---

<sup>13</sup> Հունարեն այբուբենի առաջին և վերջին տառերը:

հիմքերը, և Իմ աջը հաստատեց երկինքը» (48.12-13)<sup>14</sup>. նաև՝ «Ինձանից առաջ ուրիշ Աստված չի եղել և Ինձանից հետո էլ չի լինի» (43. 10):

Բ) Տեր Հիսուս Քրիստոսն առաջինն ու վերջինն է:

1. «Հայտնության» գրքում կա մի մարգարեություն, որն ասում է. «Ահա գալիս է ամպերով, և կտեսնեն Նրան բոլոր աչքերը, նաև ուրբեր խոցեցին Նրան: Եվ կկոծեն Նրա պատճառով երկրի բոլոր ազգերը: Այո՛, ամեն: «Ես եմ Ալֆան և Օմեգան, սկիզբն ու վերջը», - ասում է Տերը, որ կա, կար և գալու է, Ամենակալը» (Հայտ. 1.7-8):

1953թ. ես այս համարները քննարկեցի մի Եհովայի վկայի հետ: Սկզբում նա շփոթվել էր, իսկ հետո ասաց. «Միայն առաջին համարն է Քրիստոսի մասին, իսկ երկրորդը Հոր մասին է»: Նա ասաց սա չնայած այս խոսքերի հստակությանը և չնայած «որ գալու է» արտահայտությանը, որը վերաբերում է Քրիստոսին, ով դարձյալ պիտի գա: Ինչևէ, հավատքը չի հիմնվում միայն մեկ համարի վրա, և կան շատ ուրիշ համարներ էլ, ինչպես պիտի տեսնենք:

2. «Հայտնության» տեսիլքը տեսած սբ Հովհաննեսն ասում է. «Ես՝ Հովհաննեսս՝ ձեր եղբայրը և նեղության, արքայության ու համբերության մեջ հաղորդակիցը Հիսուս Քրիստոսով, եղա այն կղզում, որ կոչվում է Պատմոս... և իմ ետևում լսեցի մի բարձր ձայն, ինչպես շեփորինը, որն ինձ ասում էր. «Ես եմ Ալֆան և Օմեգան, Առաջինն ու Վերջինը... Եվ շրջվեցի, որ տեսնեմ ինձ հետ խոսող ձայնը, և շրջվելով՝ տեսա յոթ ոսկյա ճրագարան, իսկ յոթ ճրագարանների մեջտեղում՝ մեկին՝ Մարդու Որդու նման, պղնձավոր պատմուճան հագած...» (Հայտ. 1.9-13):

Ո՞վ է այդ «մեկը», որ նման է Մարդու Որդուն, եթե ոչ՝ Տեր Հիսուս Քրիստոսը, ով ասաց. «Ես եմ Ալֆան և Օմեգան, Առաջինն ու Վերջինը»:

---

<sup>14</sup> Վերջին երկու տեղիները թարգմանված են ըստ եբրայական բնագրի:

3. Սբ Հովհաննեսը նույնը դարձյալ հաստատում է՝ ասելով. «Եվ երբ տեսա Նրան, մեռելի պես ընկա Նրա ոտքերի առաջ, Նա իր աջն ինձ վրա դրեց և ասաց. «Մի՛ վախենա, ես եմ Սկիզբը և ես եմ Վախճանը: Ես եմ, որ ապրում եմ, և ես եմ Նա, ով մեռավ և ահա կենդանի է հավիտյան. ամեն» (Հայտ. 1.17-18):

Ո՞վ է Նա, որ ապրում է և մեռավ, եթե ոչ՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսը, ով հարություն առավ մեռելների միջից:

4. Նույն միտքն արտահայտվում է նաև «Հայտնության» գրքի վերջին գլխում, ուր Տերն ասում է. «Ահա գալիս եմ շուտով, և իմ վարձն ինձ հետ է՝ հատուցելու յուրաքանչյուրին ըստ նրա գործերի: Ես եմ Ալֆան և Օմեգան, Սկիզբն ու Վերջը, Առաջինն ու Վերջինը... Ես՝ Հիսուս...» (22.12-16):

Գ) Ի՞նչ ենք եզրակացնում այս ամենից:

1. Եսայու գրքում Աստված ասում է. «Ես եմ առաջինը և ես եմ վերջինը» (48.12), և նույն բառերը քանիցս կրկնվում են «Հայտնության» գրքում. «Ես եմ Ալֆան և Օմեգան, Սկիզբն ու Վերջը, Առաջինն ու Վերջինը»: Կարո՞ղ են այս երկու պնդումները համընկնել, եթե չեն վերաբերում նույն մեկին, այսինքն՝ Աստծուն:

2. Տեր Հիսուսն ասում է, որ Ինքն Առաջինն է և Ալֆան: Սա նշանակում է, որ Նրանից առաջ ոչ ոք գոյություն չի ունեցել, մի բան, որ չի կարող վերաբերել ուրիշ որևէ մեկի, եթե ոչ՝ Աստծուն, այլապես Աստված ընդհանրապես գոյություն չէր ունենա, որովհետև Առաջինից և Ալֆայից առաջ ոչինչ չկա: Տեր Հիսուսի «Ես եմ Առաջինը» խոսքը չի՞ համընկնում Աստծո «Ինձանից առաջ ուրիշ Աստված չի եղել և Ինձանից հետո էլ չի լինի» (Ես. 43.10)

խոսքի հետ: Միակ բացատրությունը սրան այն է, որ հիշյալ երկու խոսքն էլ ասված են նույն Մեկի կողմից:

3. Եթե Տեր Հիսուս Քրիստոսն Առաջինն է, ապա ստեղծված չէ, որովհետև Նրանից առաջ չկար ոչ ոք, որ Նրան ստեղծեր: Իսկ եթե Նա ստեղծված չէ, ապա հավիտենական է և ուրեմն՝ Աստված:

Դ) Երբ 1953թ. հուլիսին Մենք այս մասին հրապարակեցինք Կիրակնօրյա դպրոցի հանդեսում, Եհովայի վկաների կողմից երկու փորձ եղավ այն հերքելու իրենց «Դիտարան» պարբերականի 1953թ. նոյեմբերի համարում: Նրանք պնդում էին, որ՝

1 – Նա, ով գալու է (Հայտ. 1.8), Հայր Աստված է:

2 – Քրիստոսի Առաջինն ու Վերջինը լինելը վերաբերում է միայն որոշ դեպքերի, օրինակ՝ Նրա մահվանն ու հարությանը:

Մենք հանգամանորեն պատասխանեցինք այս երկու կետերին Կիրակնօրյա դպրոցի հանդեսի 1954թ. հունվարի համարում: Այստեղ պատասխանը կներկայացնենք համառոտակի:

1 – Նա, ով գալու է, անկասկած Տեր Հիսուս Քրիստոսն է: Նա գալու է դատելու և հատուցելու յուրաքանչյուրին ըստ նրա գործերի (տես Մատթ. 25.31-46, 16.27): «Հայտնության» գրքի վերջին համարն էլ ասում է. «Ամեն: Այո՛, Ե՛կ, Տե՛ր Հիսուս» (22.20): Տեր Հիսուսն Ինքն էլ ասում է քահանայապետին. «Այսուհետև Մարդու Որդուն կտեսնեք Ձորության աջ կողմում նստած և երկնքի ամպերով եկած» (Մատթ. 26.64): Եվ այդ ժամանակների նշանների մասին ասում է. «...այդժամ երկրի բոլոր ազգերը կկոծեն: Եվ կտեսնեն Մարդու Որդուն, որ գալիս է երկնքի ամպերի վրա, զորությամբ ու մեծ փառքով: Նա մեծաձայն փողով կուղարկի Իր հրեշտակներին...» (Մատթ. 24.29-31):



Ուրեմն, եթե Եհովայի վկաներն ասում են, որ Նա, ով գալու է, «Եհովան» է, մինչ աստվածաշնչյան համարներն ապացուցում են, որ Նա, ով գալու է, Տեր Քրիստոսն է, սա ևս մի ապացույց է, որ Հիսուս Քրիստոսն Աստված է:

Այս ճգնաժամային վիճակից դուրս գալու համար Եհովայի վկաները «Դիտարանի» միևնույն հոդվածում գրեցին, թե «Եհովան» գալու է Հիսուս Քրիստոսի տեսքով: Սակայն սա չի՞ նշանակում, թե նրանք խոստովանում են, որ Աստված հայտնվել է մարմնով (Ա Տիմ. 3.16)...

2 – Ինչ վերաբերում է Եհովայի վկաների երկրորդ պնդմանը, թե Քրիստոսի Առաջին և Վերջին լինելը վերաբերում է միայն Նրա մահվանն ու հարությանը, ապա սրա պատասխանը հետևյալն է.

*Մահվան վերաբերյալ:* Տեր Հիսուս Քրիստոսն առաջինը չէր, որ մեռավ, ոչ էլ՝ վերջինը: Միլիոնավոր մարդիկ են մահացել Նրանից առաջ և միլիոնավորներ՝ Նրանից հետո:

*Հարության վերաբերյալ:* Թեև Քրիստոսն իրականում առաջինն էր, որ մեռավ ու հարություն առավ փառավորյալ մարմնով, սակայն Նա հառնողների մեջ վերջինը չէ, որովհետև բոլոր մարդիկ՝ արդար թե մեղավոր, հարություն են առնելու Վերջին Օրը (տես Հովհ. 5.28-29):

## ԳԼՈՒԽ 13

### ՔՐԻՍՏՈՍԸ ՏԵՐՆ Է

«Տեր»-ն Աստծո անվանումներից մեկն է: Քրիստոսը «Տեր» է կոչվում ոչ թե իբրև իշխանություն ունեցող մեկը, այլ որպեսզի որոշ հանգամանքներում ապացուցվի Նրա Աստված լինելը, ինչպես պիտի տեսնենք հետո՝ Սուրբ Գրքի վկայություններով կետ առ կետ բացատրություններ տալիս:

## 1. «Տեր»-ն Աստծո անվանումներից մեկն է:

Աստված ասում է Եսայու գրքում<sup>15</sup>. «Ե՛ս, Ե՛ս եմ *Տերը*, և Ինձանից բացի ուրիշ փրկիչ չկա» (43.11), «Ես եմ *Տերը* և ո՛չ՝ մի ուրիշը. Ինձանից բացի ուրիշ Աստված չկա» (45.5), «Ես *Տերը* չե՞մ. և չկա այլ Աստված, Ինձանից բացի» (45.21): Տեր Հիսուսը, հիշելով «Բ Օրենքի» 6.13 և 16 համարները, ասում է. «Քո *Տեր* Աստծո՛ւն կերկրպագես և միայն Նրա՛ն կծառայես» (Ղուկ. 4.8, Մատթ. 4.10), և՛ «Չփորձե՛ս քո *Տեր* Աստծուն» (Ղուկ. 4.12, Մատթ. 4.7):

Այս ամենը վկայում է, որ Տերն Աստված է: Ուստի «Բ Օրենքի» գրքում գրված է. «Որովհետև քո *Տեր* Աստվածը աստվածների Աստված և տերերի *Տեր* է» (10.17), իսկ Օվսեեի մարգարեության մեջ՝ «Ես եմ քո *Տեր* Աստվածը... և Ինձանից բացի ուրիշ Աստված չպիտի՛ ճանաչես» (13.4):

Ամենակարևոր աստվածաշնչյան խոսքերից մեկը, որ ապացուցում է, որ «Տեր»-ը միայն Աստծո անվանումներից է, Եսայու մարգարեության հետևյալ խոսքն է. «Ես եմ *Տերը*, սա է Իմ անունը, և Իմ փառքն ուրիշին չեմ տա» (42.8):

## 2. Քրիստոսը երբեմն «Տեր» է կոչվել իբրև նշան Իր աստվածության:

Այդպիսի դեպքերից է այն, որում փարիսեցիներն ասում են, որ Քրիստոսը Դավթի որդին է, ինչին ի պատասխան՝ Տերը նրանց մի հարց է ուղղում, որը շփոթեցնում է նրանց: Նա ասում է. «Իսկ ինչպե՞ս է Դավիթը Հոգով Նրան «Տեր» կոչում և ասում. «Տերն ասաց իմ *Տիրոջը*. «Նստի՛ր Իմ աջ կողմում, մինչև քո թշնամիներին պատվանդան դնեմ քո ոտքերի համար» [Սաղմ. 109.1]»... Եվ ոչ ոք չկարողացավ որևէ բան պատասխանել Նրան» (Մատթ. 22.43-46):

<sup>15</sup> Այս պարբերության մեջ բերված հինկտակարանյան համարների թարգմանությունը՝ ըստ եբրայական բնագրի:

Ուրեմն՝ Դավիթը Քրիստոսին «Տեր» է կոչում, և «նստիր իմ աջ կողմում» նախադասությունն առավել է ընդգծում այս խոսքի կարևորությունը:

3. Քրիստոսը «Տեր» անվանումով է հասցեագրվում աղոթքի մեջ:

Աղոթքը պաշտամունքի տեսակ է, ուր «Տեր» բառը հասցեագրվում է միայն Աստծուն: Իսկ Տեր Չիսուսը Լեռան քարոզում ասում է. «Ինձ *«Տե՛ր, Տե՛ր»* ասող ո՛չ ամեն ոք կմտնի երկնքի արքայություն, այլ իմ երկնավոր Չոր կամքը կատարողը» (Մատթ. 7.21): Այստեղ Նա կամենում է ասել, որ Իրեն ուղղված աղոթքն առանց բարի գործերի ոչ մի արժեք չունի: Նույն իմաստն է արտահայտում Նրա մի ուրիշ խոսք. «Ինչո՞ւ եք ինձ *«Տե՛ր, Տե՛ր»* կոչում, իսկ ինչ ասում եմ, չեք անում» (Դուկ. 6.46):

4. «Տեր» անունով պիտի դիմեն Քրիստոսին Մեծ Դատաստանի օրը:

Այս մասին Տեր Չիսուսն է խոսում՝ ասելով. «Այն Օրը շատերն ինձ կասեն. *«Տե՛ր, Տե՛ր, չէ՞ որ Քո անունով մարգարեացանք, Քո անունով հանեցինք դևեր և Քո անունով գործեցինք բազում հրաշքեր»*: Եվ այնժամ նրանց կասեն. *«Ձեզ երբեք չե՛մ ճանաչել. հեռացե՛ք ինձանից բոլոր անօրենություն գործողներդ»* (Մատթ. 7.22-23):

Այն, որ Քրիստոսին դիմելու են իբրև դատավորի և Նա այս իշխանությունն է գործադրելու, ապացուցում է Նրա Աստված լինելը: Անկասկած, եթե Դատաստանի օրը մարդիկ Նրան դիմելու են «Տեր» բառով, ապա սա Նրա աստվածության ապացույց է, քանի որ Նա է այն Մեկը, ով պիտի որոշի մարդկանց հետագա ճակատագիրը: Նրա աստվածության ապացույց են նաև այդ ամենավճռորոշ ժամին ասված *«Քո անունով մարգարեացանք»* և *«Քո անունով դևեր հանեցինք»* նախադասությունները:

Տեր Չիսուսը նույնն է ցույց տալիս նաև, երբ ասում է, որ Վերջին Օրը նստելու է դատաստանական աթոռին, և թե՛ արդարները, թե՛ չարերը

դիմելու են իրեն «Տեր» բառով: Արդարներն ասելու են. «Տե՛ր, Քեզ ե՞րբ քաղցած տեսանք և կերակրեցինք, կամ ծարավ՝ և ծարավդ հագեցրինք» (Մատթ. 25.37): Իսկ չարերը՝ «Տե՛ր, Քեզ ե՞րբ քաղցած, ծարավ, իբրև օտարական, մերկ, հիվանդ կամ բանտարկված տեսանք, և Քեզ ծառայություն չմատուցեցինք» (Մատթ. 25.44): Ի՞նչ սարսափելի ժամ է, երբ յուրաքանչյուրը խոսելու է Նրա հետ իբրև Աստծո հետ, մինչ Նա նստած է Իր փառքի աթոռին՝ շրջապատված բոլոր սուրբ հրեշտակներով (Մատթ. 25.31):

Այս մասին Տեր Չիսուսը խոսում է նաև դատաստանի մասին գրույցում, ըստ որի՝ չարերը, դրսում մնալով, ասելու են. «Տե՛ր, Տե՛ր, բաց մեր առաջ» (Ղուկ. 13.25):

#### 5. Մահվան ժամին ոմանք Քրիստոսին «Տեր» անվանումով են դիմել:

Մահվան ժամը մի ահասարսուռ ժամ է, երբ բոլորը, մանավանդ արդարները, իրենց փրկության համար մտահոգվելով, մեծ զգուշություն են ցուցաբերում իրենց արտասանած խոսքերի հանդեպ: Մենք տեսնում ենք, որ մեծ սուրբ Ստեփանոս Նախավկան մահվան ժամին ասում է. «Տե՛ր Չիսուս, ընդունի՛ր իմ հոգին» (Գործք 7.59): Այստեղ նա խոստովանում է Քրիստոսին իբրև Տիրոջ, ուն ձեռքն է ինքը հանձնում իր հոգին: Նա սա ասում է, երբ Քրիստոսին տեսնում է երկնքում՝ Աստծո աջ կողմում կանգնած: Սա մի հստակ խոստովանություն է Քրիստոսի աստվածության:

Սրան նման է Տիրոջը խաչակից ավազակի խոստովանությունը: Նա ասում է. «Տե՛ր, հիշի՛ր ինձ, երբ գաս Քո արքայությանը» (Ղուկ. 23.42): Տեր Չիսուսն ավազակից ընդունում է «Տեր» կոչումը և խոստանում նրան, որ վերջինս հենց նույն օրն Իր հետ դրախտում կլինի: Սա նշանակում է, որ Քրիստոսի հանդեպ ավազակի հավատը նրան արժանի դարձրեց դրախտում լինելու:

#### 6. Քրիստոսը «Տեր» է կոչվում որպես արարիչ:

Առաքյալն ասում է. «Մեկ *Տեր* Հիսուս Քրիստոս, որով է ամեն ինչ, և մենք՝ Նրանով» (Ա Կոր. 8.6):

7. Նույն բառը գործածում է նաև Թովմաս առաքյալը, երբ արտահայտում է Քրիստոսի հանդեպ իր հավատը:

Սբ Թովմասը, մատը Հիսուսի մարմնի վրա գամերի տեղը դնելով և հավատալով, ասում է. «*Տեր* իմ և Աստված իմ» (Հովհ. 20.28): Այս խոսքը հայտնապես հայտարարում է Քրիստոսի աստվածությունը: Տեր Հիսուսն ընդունում է Թովմասի խոսքն ու հավատը և հանդիմանում նրան այս հավատն ուշացունով խոստովանելու համար՝ ասելով. «Այդ՝ որովհետև տեսար՝ Ինձ և հավատացիր. երանի՛ նրանց, ովքեր չտեսնելով կհավատան» (Հովհ. 20.29):

8. Նույն անվանումը գործածում են նաև առաքյալները, երբ քարոզում են բանտապետին:

Պողոս ու Շիղա առաքյալներն ասում են Փիլիպպոսի բանտապետին. «Հավատա՛ *Տեր* Հիսուս Քրիստոսին, և կփրկվեք դու և քո ընտանիքը» (Գործք 16.31): «Տեր» անունն այստեղ գործածված է Աստված իմաստով, քանի որ առնչվում է հավատի և փրկության հետ, որոնք պատկանում են միայն Աստծուն:

9. «Տեր» անվանումը գործածվում է՝ ցույց տալու համար Քրիստոսի փառքը:

Սբ Պետրոս առաքյալն ասում է. «Աճե՛ք շնորհով ու գիտությամբ մեր *Տեր* և Փրկիչ Հիսուս Քրիստոսի, Ում փա՛ռք և՛ այժմ, և՛ հավիտյան: Ամեն» (Բ Պետ. 3.18): Սուրբգրային այս համարը հայտնապես ապացուցում է Նրա

աստվածությունը: Արժե նշել, որ մեծ տարբերություն կա «տեր» բառի անորոշ և որոշյալ առումով գործածությունների միջև: Հույժ ազդու են «մեր Տեր և Փրկիչ» բառերը, որովհետև սրանք գործածվում են միայն Աստծո համար, հատկապես երբ սրանց հետևում է, ինչպես վերոնշյալ համարում, փառաբանական արտահայտություն: Սբ Հակոբոս առաքյալն էլ, հանդիմանական խոսքով դիմելով, ասում է. «Եղբայրներ՝ իմ, աչառանքով մի՛ պահեք մեր *Տեր* Հիսուս Քրիստոսի՝ Փառքի Տիրոջ հավատը» (Հակ. 2.1). առաքյալը կամենում է նրանց հայտնել, որ Քրիստոսի հավատը պետք է բարի գործերով զուգակցվի: Այս խոսքի կարևորությունը «մեր Տեր» և «Փառքի Տեր» արտահայտությունների և սրանց՝ հավատի հետ առնչվելու մեջ է: Այսպիսի արտահայտություններ գործածվում են միայն, երբ խոսքն Աստծո մասին է:

10. «Փառքի Տեր» արտահայտությունը Քրիստոսի աստվածության ասպացույց է:

Փառքը պատկանում է միայն Աստծուն, ով կատարյալ փառքի տեր է: «Փառքի Տեր» արտահայտությունը շատ ավելի ազդեցիկ է, քան «Փառք Նրան»-ը, և այս երկուսն էլ գործածվել են Տեր Հիսուսի վերաբերյալ: Սբ Պողոս առաքյալը նույնպես գործածում է «Փառքի Տեր» արտահայտությունը. երբ խոսում է Աստծո իմաստության մասին, ասում է, որ եթե այն ճանաչվեր այս աշխարհի իշխանների կողմից, «*Փառքի Տիրոջը* չէին խաչի» (Ա Կոր. 2.8):

11. Տեր Հիսուսը կոչվում է նաև «Տերերի Տեր»:

Այս անունը նույնպես միայն Աստծուն է պատկանում, ինչպես երևում է «Բ Օրենքի» գրքում. «Քանզի մեր Տեր Աստվածն աստվածների Աստված է և տերերի Տեր, մեծ, հզոր և անավոր Աստված» (10.17): «Հայտնության» գրքում նաև Տեր Հիսուսն է «Տերերի Տեր» կոչվում. «Նրանք կպատերազմեն

Գառի հետ, և Գառը կհաղթի նրանց, որովհետև *Տերերի Տեր է և Թագավորների Թագավոր*» (17.14), և՛ «Նրա պատմութեանի ու ազդրի վրա գրված էր՝ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐ ԵՎ *ՏԵՐԵՐԻ ՏԵՐ*» (19.16):

Իսկ ո՞վ է տերերի Տերն ու թագավորների Թագավորը, եթե ոչ Ինքն Աստված, և եթե այս անվանումները տրվում են նաև Տեր Հիսուս Բրիստոսին, ապա սա ցույց է տալիս Նրա Աստված լինելը:

12. Բրիստոսը կոչվում է նաև «շաբաթվա տեր»:

Փարիսեցիների հետ իր երկխոսության ժամանակ, որ վերաբերում էր շաբաթ օրը ողորմություն գործելուն, Տեր Հիսուսն իր աստվածությունը ցույց տվեց՝ ասելով. «...այստեղ Տաճարից էլ Մեծը կա... Ողորմություն են կամենում և ոչ թե զոհ», և եզրափակելով իր խոսքը հետևյալով. «Քանզի Մարդու Որդին շաբաթի *տերն է*» (Մատթ. 12.6-8): Նրանք գիտեին, որ շաբաթը Տիրոջ օրն է և որ շաբաթի օրերը տրվել էր հենց Աստծուց: Եվ ահա Տեր Հիսուսն ասում է, որ Ինքը նույնպես շաբաթի՝ Տիրոջ օրվա տերն է և ուրեմն՝ դրա մասին օրենքի հեղինակը: Այսպիսի խոսքեր բացի Աստծուց ուրիշ ոչ ոք չի կարող ասել:

13. Տեր Հիսուս Բրիստոսը կոչվում է նաև «Տեր՝ արդարություն մեր»:

Երեմիա մարգարեի գրքում գրված է. «Ահա օրեր են գալիս,- ասում է Տերը,- երբ Դավթի համար Արդարության Շառավիղ են բարձրացնելու. մի Թագավոր կթագավորի, ով իմաստությամբ կշարժվի և իրավունք ու արդարություն կգործի երկրի վրա... Եվ սա է Նրա անունը, որով կկոչեն Նրան՝ «Տեր՝ արդարություն մեր» (23.5-6)<sup>16</sup>:

Այս մարգարեությունն իրականացավ Տեր Հիսուսի վրա, ով մեր արդարությունը դարձավ՝ իր արյամբ մեզ արդարություն պարգևելով:

<sup>16</sup> Թարգմանությունն՝ ըստ եբրայական բնագրի:

14. Քրիստոսը «Տեր» է կոչվում հրաշագործությունների ժամանակ:

Սբ Պետրոս առաքյալը սկսում է քայլել ծովի վրայով, սակայն տեսնելով քանու ուժգնությունը՝ վախենում է և սկսելով ընկղմվել՝ աղաղակում. «Տե՛ր, փրկի՛ր ինձ» (Մատթ. 14.30): Տերն անմիջապես ձեռքը պարզում և բռնում է նրան: Ապա «նավում գտնվողները մոտեցան, երկրպագեցին Հիսուսին և ասացին. «Դու իսկապե՛ս Աստծո Որդին ես» (Մատթ. 14.33):

Այստեղ մենք տեսնում ենք, որ «Տեր» բառը գործածվում է՝ առնչվելով կատարված հրաշքի հետ, որին հետևում են Քրիստոսին երկրպագելն ու իբրև Աստծո Որդի խոստովանելը, ինչը ցույց է տալիս Նրա աստվածությունը:

15. Հրաշագործությունների ժամանակ եղած ևս երկու վկայություն ունենք առաքյալներից:

Մեծաքանակ ձկների որսի հրաշքից հետո Պետրոսը, ով դեռ չէր կանչվել առաքելության, ծնկում է Տեր Հիսուսի առաջ և ասում. «Հեռացի՛ր ինձանից, Տե՛ր, ես մեղավոր մարդ եմ» (Ղուկ. 5.8): Այս համարի կարևորությունը «Տեր» բառի, երկրպագության և հրաշքի մեջ է, որոնք սովորական բաներ չեն: Այս համարն առավել տպավորիչ է դառնում «Ես մեղավոր մարդ եմ» նախադասությամբ, որը ցույց է տալիս իր նավակում Տիրոջը՝ Սուրբին, ունենալու առաքյալի անարժանության զգացումը:

Նույնը պատահում է հարությունից հետո տեղի ունեցած ձկան մեծ որսի հրաշքի դեպքում: Հովհաննեսն ասում է Պետրոսին. «Տե՛րն է դա» (Հովհ. 21.7): «Եվ աշակերտներից ոչ ոք չէր համարձակվում հարցնել թե՛ Դու ո՞վ ես, որովհետև գիտեին, որ Տե՛րն է» (Հովհ. 21.12):

16. Սբ Կույս Մարիամին ողջունելիս սբ Եղիսաբեթը գործածում է «Տեր» անվանումը:



Երբ Եղիսաբեթը լսում է սբ Մարիամի ողջույնը, լցվում է Սուրբ Հոգով և ասում Մարիամին. «Որտեղի՞ց ինձ սա, որ իմ *Տիրոջ* Մայրն ինձ մոտ գա: Քանզի ահա երբ ողջույնիդ ձայնն ականջներիս հասավ, ցնծալով խաղաց մանուկս իմ որովայնում» (Ղուկ. 1.43):

Սա ասվում է նույնպես իբրև հրաշքի հետևանք. Եղիսաբեթը լցվում է Սուրբ Հոգով և Տիրոջ Մոր՝ իրեն տված այցին իր անարժանության զգացումով: Եվ սա նույնպես Քրիստոսի աստվածության մի խոստովանություն է:

17. Հարության դեպքից հետո «Տեր» անվանումը հաճախ է գործածվում:

\* Հովհ. 20.18. «Գալիս է Մարիամ Մագդաղենացին ու պատմում աշակերտներին, որ տեսել է *Տիրոջը*»:

\* Հովհ. 20.20. «... և աշակերտներն ուրախացան, երբ *Տիրոջը* տեսան»:

\* Հովհ. 20.25. «Մյուս աշակերտներն ասացին նրան. «*Տիրոջը* տեսանք»:

\* Ղուկ. 24.34. «Եվ ասացին. «Իսկապես *Տերը* հարություն է առել և երևացել Սիմոնին»:

\* Հովհ. 21.15-17. «Այո՛, *Տեր*, և դու գիտես, որ սիրում եմ քեզ»:  
Պետրոսն այս բառերն ասում է երիցս:

18. «Տեր» բառը Քրիստոսի համար գործածում են հրեշտակները:

Այսպես են վարվում թե՛ Նրա ծնունդը և թե՛ հարությունն ավետելիս: Նրա ծննդյանը հրեշտակն ասում է հովիվներին. «Ահա ավետարանում են ձեզ մի մեծ ուրախություն, որն անբողջ ժողովրդինը կլինի: Քանզի Դավթի քաղաքում այսօր ձեզ համար Փրկիչ ծնվեց, որ Օծյալ *Տերն* է» (Ղուկ. 2.10-11):

Հարությունից հետո հրեշտակն ասում է Մարիամ Մագդաղենացուն և մյուս Մարիամին. «Գիտե՛ն, որ խաչված Հիսուսին եք փնտրում. այստեղ չէ՛,

հարություն առավ, ինչպես ասել էր: Եկեք տեսե՛ք այն տեղն, ուր *Տերը* կար» (Մատթ. 28.5-6): Սա հրեշտակի կողմից վկայություն է Տիրոջ Աստվածության:

19. «Տեր» անվանումը գործածվում է նաև Քրիստոսի համբարձման ժամանակ:

Այսպես է ասում Սարկոս ավետարանիչը. «Եվ Ինքը *Տեր* Հիսուսը նրանց հետ խոսելուց հետո բարձրացավ երկինք և նստեց Հոր աջ կողմում: Իսկ նրանք գնացին ու Տիրոջ գործակցությանը քարոզում էին ամբողջ երկրով մեկ և խոսքը հաստատում ուղեկցող ամեն տեսակ հրաշքներով» (Մարկ. 16.19-20):

Այստեղ «Տեր» բառը գործածվում է համբարձման, Հոր աջ կողմում նստելու և խոսքը նշաններով հաստատելու ենթատեքստում: Այս ամենը ցույց է տալիս, որ այդ «խոսքը» սովորական խոսք չէր, այլ մասնավորապես այնպիսին, որ պիտի օժանդակեր Քրիստոսի Աստվածության հավատին:

20. Ավետարանիչները Քրիստոսի մասին խոսելիս «Տեր» բառը հաճախ են գործածում:

\* Նայինի այրու որդու հարության հրաշքը նկարագրելիս սբ Ղուկասն այրու մասին ասում է. «Երբ *Տերը* տեսավ նրան, գթաց և ասաց. «Մի՛ լար» (Ղուկ. 7.13):

\* Աշակերտները, տեսնելով, որ դևերը Քրիստոսի անունով հնազանդվում են իրենց, ասացին Նրան. «*Տե՛ր*, դևերն էլ են հնազանդվում մեզ Քո անունով» (Ղուկ. 10.17):

\* Պայծառակերպության հրաշքի ժամանակ առաքյալներն ասում են Քրիստոսին. «*Տե՛ր*, լավ է, որ մենք այստեղ լինենք» (Մատթ. 17.4):

\* Ձակքեոսի մասին պատմության մեջ ասվում է. «Ձակքեոսը եկավ կանգնեց և ասաց *Տիրոջը*. «*Տե՛ր*, ահա ունեցվածքիս կեսը կտամ աղքատներին...» (Ղուկ. 19.8):

\* Երբ Պետրոսն ուրացավ Տիրոջը, «*Տերը* շրջվեց և նայեց Պետրոսին, և Պետրոսը հիշեց *Տիրոջ* խոսքը...» (Ղուկ. 22.61): Ղուկ. 22.31-61 համարներում Քրիստոսին տրված «Տեր» անվանունը գործածվում է 6 անգամ:

21. Նորկտակարանյան այլ գրքերում Քրիստոսին տրված «Տեր» անվան գործածության դեպքեր

\* «Գործք առաքելոց»-ում՝ Տարսունացի Սավղոսի կոչման մասին պատմության մեջ. «Եվ ասաց. «Ո՞վ ես, *Տե՛ր*»: Եվ Նա ասաց. «Ես Հիսուսն եմ, ուն դու հալածում ես...»: ...ասաց. «*Տե՛ր*, ի՞նչ ես կամենում, որ անեն» (9.5-6):

«Տեր» բառն այստեղ հանդես է գալիս մի հրաշքի ժամանակ, որում Տերը հայտնվում է մեծ լույսով և դառնում Սավղոսի դարձի պատճառը:

\* Սբ Պողոսի խոսքը. «Հավատում ենք, որ *Տեր* Հիսուս Քրիստոսի շնորհով կփրկվենք, ինչպես նրանք» (Գործք 15.11):

\* «Տեր»-ի կողքին հաճախ գործածվում է «շնորհ» բառը, ինչպես, օրինակ, Բ Կոր. 13.13-ում. «Մեր *Տեր* Հիսուս Քրիստոսի *շնորհը*... թող լինի ամենքիդ հետ»:

Անտարակույս, օրհնություն տալիս «շնորհ» և «Տեր» բառերի համատեղ գործածությունը «Տեր» բառին աստվածության նշանակությունն է տալիս:

\* Պողոս առաքյալն ասում է նաև. «Եվ խոսքով ու գործով ինչ էլ որ անեք, բոլորն էլ *Տեր* Հիսուսի անունով արեք» (Կող. 3.17):

Եթե ամեն խոսք ու գործ պիտի կատարվի Նրա՝ իբրև Տիրոջ, անունով, նշանակում է, աներկբայորեն, սա ևս մի ապացույց է Նրա աստվածության:

\* Հետևյալ խոսքով առաքյալը ցույց է տալիս Քրիստոսի՝ իբրև Տիրոջ, հարաբերությունը Հայր Աստծո հետ. «...որպեսզի Հիսուս Քրիստոսի

անունով իջնի ամեն ծունր՝ երկնայինների, երկրայինների և սանդարամետականների, և ամեն լեզու խոստովանի, որ Չիսուս Քրիստոսը *Տեր* է ի փառս Չայր Աստծո» (Փիլ. 2.10-11): Եվ սրա պատճառն այն է, որ Քրիստոսը «Նրա փառքի լույսը և էության պատկերն է» (Եբր. 1.3): Չետևաբար, ով տեսավ Նրան (Քրիստոսին), տեսավ Չորը (հմմտ. Չովհ. 14.9):

22. Վերջապես ասենք, որ Տեր Չիսուս Քրիստոսն ընդունում էր, երբ իրեն «Տեր», «իմ Տեր» էին կոչում. ավելին, ինքն էլ էր իր համար այս անունը գործածում:

Նա երբեք չմերժեց կոչվել «Տեր, Տեր...», «Ո՛վ Տեր» և այլն: Բաղարջակերաց տոնին Նա ուղարկում է երկու առաքյալների՝ Երուսաղեմ ուղևորվելու համար մի ավանակ բերելու՝ ասելով. «Ասացե՛ք. «*Տիրոջը* պետք է» (Մարկ. 11.3, Ղուկ. 19.31):

23. Նոր Կտակարանն ավարտվում է «Տեր Չիսուս» բառերով:

«Չայտնության» վերջին երկու համարներն են. «Այո՛, գալիս եմ շուտով: Ամեն, այո՛, Ե՛կ, *Տեր* Չիսուս: Մեր *Տեր* Չիսուս Քրիստոսի շնորհը թող լինի ամենքիդ հետ: Ամեն» (22.20-21):

Տեր Չիսուսի երկրորդ գալստյանը մենք Նրան դիմավորելու ենք «Ե՛կ, Տեր Չիսուս» բառերով, և մինչև այդ գալուստը թող մեր Տեր Չիսուս Քրիստոսի շնորհը մեզ հետ լինի: «Մեր Տերը» արտահայտությունը հստակ վկայություն է Նրա Աստված լինելու, որովհետև մենք որևէ մարդ արարածի այդպես չենք կոչում:

**ԳԼՈՒԽ 14**

ՏԵՐ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԸ ԵՎ  
ՆՐԱՆ ՀԱՎԱՏԱԼԸ

1. Հավատքը պետք է լինի միայն Աստծո հանդեպ:

Այս հավատքից կախում ունեն մարդու հավիտենությունն ու ճակատագիրը: Այստեղ մենք հղում ենք Քրիստոսի կողմից ասված մի կարևոր խոսքի. «Հավատացե՛ք Աստծուն և Ի՛նձ հավատացե՛ք» (Հովհ. 14.1): Այսպես՝ Նա հայտարարում է, որ Իր հանդեպ հավատը հավասար է Հոր հանդեպ հավատին՝ նույն հիմամբ և նույն կարևորությամբ:

2. Եթե Նրան հավատալն առաջնորդում է դեպի հավիտենական կյանք (Հովհ. 3.16), ապա Նրան չհավատալն առաջնորդում է դեպի կորուստ:

Ուստի Նա նաև ասում է. «...որովհետև եթե չհավատաք, որ ես եմ, ձեր մեղքերի մեջ կմեռնեք» (Հովհ. 8.24): Նրան հավատալը կապված է կյանքի հետ, ինչպես Ղազարոսի հարությունը պատմող հատվածում Տեր Հիսուսն ասում է. «Ով հավատում է Ինձ, թեկուզ մեռնի, կապրի: Եվ ամեն ոք, ով ողջ է և հավատում է Ինձ, երբեք չի մեռնի» (Հովհ. 11.25-26):

3. Նրան հավատալը փրկության խնդիր է, որից է կախված մարդու փրկությունը:

Այդ պատճառով են սբ Պողոսն ու սբ Շիղան ասում փիլիպեցի բանտապետին. «Հավատա՛ Տեր Հիսուս Քրիստոսին, և կփրկվեք դու և քո ընտանիքը» (Գործք 16.31): Անշուշտ սա կախված է նաև բանտապետի՝ այս հավատից բխող արարքներից, ինչպես օրինակ՝ նրա մկրտվելուց՝ համաձայն Տիրոջ խոսքի. «Ով հավատա և մկրտվի, կփրկվի» (Մարկ. 16.16):

4. Ուրեմն ո՞վ է Քրիստոսը, որ ով հավատում է Նրան, մեղքերի թողություն է ստանում:

Կոռնելիոսի դարձը ներկայացնող պատմության մեջ Պողոս առաքյալն ասում է. «Նրա մասին են վկայում բոլոր մարգարեները, որ բոլոր նրանք, որ հավատում են Նրան, Նրա անվամբ մեղքերի թողություն են ստանում» (Գործք 10.43):

Պիսիդիայի Անտիոքի ժողովում սբ Պողոս առաքյալն ասում է. «Թող հայտնի լինի ձեզ, եղբայրներ, որ Նրանով է ձեզ մեղքերի թողություն ավետարանվում... Նրանով է ամեն հավատացող արդարանում» (Գործք 13.38-39):

Սրանից բացի, կա նաև սբ Պետրոս առաքյալի խոսքը՝ ասված Յուդեալստյան օրը հրեաներին, ովքեր հուզվելով՝ հավատում են և հարցնում փրկության ճանապարհի մասին: Պետրոսն ասում է նրանց. «Ապաշխարե՛ք, և թող ձեզանից յուրաքանչյուրը մկրտվի Տեր Հիսուս Քրիստոսի անվամբ՝ մեղքերի թողության համար, և Սուրբ Հոգու ավետիսը կընդունեք» (Գործք 2.38): Այսպիսով, հավատն առաջնորդում է դեպի մկրտություն, որն էլ իր հերթին առաջնորդում է դեպի մեղքերի թողություն: Մեղքերի թողությունը ներառում է Տեր Հիսուսի արյան միջոցով արդարացում: Աստվածաշնչյան շատ համարներ են խոսում հավատի և արդարացման մասին, ինչպես օրինակ՝ Գործք 13.39 և Հռոմ. 5.1: Ուրիշ համարներ էլ խոսում են Սուրբ Հոգին ստանալու համար մկրտության ներգործականության մասին:

5. Հետևաբար, ուղղակի կապ կա Քրիստոսին հավատալու և Սուրբ Հոգին ընդունելու միջև:

Ով հավատում է Քրիստոսին, կարող է դառնում ընդունելու Սուրբ Հոգին, ինչի մասին Տերն Ինքն է ասում. «Ով հավատում է Ինձ, ինչպես և

Սուրբ Գիրքն է ասում, նրա որովայնից կենդանի ջրերի գետեր կբխեն»: Նա ասաց սա Յոզու մասին, որն ընդունելու էին Իրեն հավատացողները, որովհետև Յոզին դեռ չէր տրվել» (Հովհ. 7.38-39):

6. Քրիստոսին հավատալուն նախորդում է Սուրբ Յոզու ներգործությունը:

Առաքյալն այս մասին ասում է. «Առանց Սուրբ Յոզու ոչ ոք չի կարող Յիսուսին «Տեր» կոչել» (Ա Կոր. 12.3): Սա է պատճառը, որ Կոռնելիոսի և նրա հետ եղածների վրա Սուրբ Յոզին իջավ նախքան նրանց մկրտվելը (Գործք 10.44-48): Դա մի նախապատրաստություն էր, որը տարբերվում է Սուրբ Յոզու այն էջքից, որ տեղի է ունենում ձեռքեր դնելու (Գործք 8.17) և ապա սուրբ օծման միջոցով (Ա Հովհ. 2.20, 27):

7. Քրիստոսին հավատալու արդյունքներից մեկն այն է, որ «ով հավատա Նրան, չի ամաչելու» (Հռոմ. 9.33, 10.11, Ա Պետ. 2.6):

Ով հավատում է Նրան, ամոթ չի կրելու Դատաստանի, այսինքն՝ Վերջին օրը:

8. Հետևաբար, Քրիստոսին հավատալը ոչ թե մի թեթև ու անկարևոր, այլ չափազանց լուրջ ու կարևոր իրողություն է, որից կախված է մարդու հավիտենական կյանքը:

Տեսեք որքան խիստ է Ավետարանի խոսքը. «Ով հավատում է Որդուն, ընդունում է հավիտենական կյանքը, իսկ ով չի հնազանդվում Որդուն, կյանք չի տեսնի, այլ Աստծո բարկությունն է մնում նրա վրա» (Հովհ. 3.36):

Ինչպես տեսանք, հավատը կապված է փրկության, մեղքերի թողության և Սուրբ Յոզու շնորհի հետ: Ուստի երբ խոսում ենք հավատի մասին, նկատի ունենք այն իրող նշանակությամբ՝ կապված այնպիսի իրողությունների հետ, ինչպիսին են մկրտությունը, ապաշխարությունը և

այն գործերը, որ այսպիսի հավատի պտուղներն են և այն կենդանի են դարձնում:

9. Այսպիսի հավատը, ինչպես ասվեց, կապված է նաև մկրտության հետ՝ վերջինիս հոգևոր ամբողջ ներգործականությամբ հանդերձ:

Չի կարող մկրտություն կատարվել առանց դրան նախորդող հավատի: Ուստի երբ եթովպացի ներքինին խնդրեց մկրտվել, Փիլիպպոսը նրան հարցրեց. «Եթե ամբողջ սրտով հավատում ես, կարելի է», և ներքինին պատասխանեց. «Հավատում եմ, որ Հիսուս Քրիստոսն Աստծո Որդին է» (Գործք 8.37):

Քաջ հայտնի է, որ մանուկները մկրտվում են իրենց ծնողների հավատով:



10. Քրիստոսի հանդեպ հավատն է Ավետարանի գրման նպատակը:

Սբ Հովհաննես Ավետարանիչն իր հիշատակած հրաշքների մասին ասում է. «Սակայն այսքանը գրվեց, որպեսզի հավատաք, որ Հիսուսը Քրիստոսն է՝ Աստծո Որդին, և որպեսզի հավատալով՝ հավիտենական կյանքն ընդունեք Նրա անունով» (Հովհ. 20.31):

11. Այս հավատն Աստծո որդի դառնալու իրավունք է տալիս հավատացողին:

Որովհետև հավատալուց հետո անձը պետք է ծնվի ջրից ու Հոգուց (Հովհ. 3.5): Ուստի Սուրբ Գիրքն ասում է. «Իսկ ովքեր ընդունեցին Նրան, նրանց իշխանություն տվեց Աստծո որդիներ լինելու, նրանց, ովքեր կհավատան Նրա անվանը» (Հովհ. 1.12):

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Ոչ մի մարդ, ով էլ լինի, չի կարող այս բոլոր հոգևոր պարգևների աղբյուրը լինել այն անձի համար, ով հավատում է իրեն, որովհետև այսպիսի պարգևներն առնչվում են հավատացողի հավիտենական կյանքի հետ, նրա և Աստծո ու Եկեղեցու միջև հարաբերության հետ, ուր Աստծո հանդեպ նա հանդես է գալիս իբրև զավակ, իսկ Եկեղեցու հանդեպ՝ իբրև սրա անդամը՝ հավատի և մկրտության միջոցով:

Ի վերջո, ո՞րն է Քրիստոսի հանդեպ այս հավատի նպատակը:

Մենք հավատում ենք, որ Հիսուսը Քրիստոսն է. որ Նա Աստծո Որդին է (Հովհ. 20.31). որ Նա Միածինն է (Հովհ. 3.16, 18)՝ այս բառի իմաստի մեջ ներառված աստվածային բոլոր հատկանիշներով: Մենք հավատում ենք, որ

Նա Բանն է (Լոգոսը), այսինքն՝ Աստծո բանական արտաբերությունը կամ Աստծո Խոսքը: Մենք հավատում ենք, որ Նա Հոր մեջ է, և Հայրը՝ Նրա մեջ (Հովհ. 14.10-11). որ ով տեսնում է Քրիստոսին, Հորն է տեսնում (Հովհ. 14.9). որ Նրա մեջ է կյանքը (Հովհ. 1.4, և Հովհ. 5.11). որ Նա աշխարհի Փրկիչն է (Հովհ. 4.42, Մատթ. 1.21). որ Նա մեր մեղքերի քավությունն է (և Հովհ. 4.10, 2.2):

Մենք հավատում ենք նաև Նրա խոսքերին և մեր փրկության համար Նրա սահմանած ճանապարհին:

*Այս ամենը (որին ավելացնում ենք Նրա աստվածային հատկանիշների հանդեպ հավատը) ցույց է տալիս Քրիստոսի Աստված լինելը:*

## ԳԼՈՒԽ 15

ՏԵՐ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ

ԻՐԵՆ ՈՒՂՂՎԱԾ

ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՂՈԹՔԸ

Տեր Հիսուսն ընդունեց ժողովրդի երկրպագությունն Իրեն, որը ոչ թե պարզապես հարգանքով խոնարհում էր Նրա առաջ, այլ իրական երկրպագության մատուցում: Սա տեղի էր ունենում կա՛մ Նրա հանդեպ հավատի խոստովանության ժամանակ, կա՛մ ինչ-որ հրաշքի:

1. Ի ծնե կույր մարդու աչքերը բացելու հրաշքի ժամանակ, երբ Տերը նրան ասաց, որ հավատա Իրեն իբրև Աստծո Որդու, կույրը պատասխանեց. «Հավատո՞ւմ եմ, Տե՛ր», և երկրպագեց Նրան (Հովհ. 9.38): Եվ Քրիստոսն ընդունեց մարդու՝ հավատալու պահին եղած այս երկրպագությունը:

2. Երբ Տերը քայլում էր ծովի ջրերի վրայով և իր աշակերտ Պետրոսին ևս քայլել տվեց, «նավակում գտնվողները մոտեցան երկրպագեցին Նրան՝ ասելով. «Արդարև Դու Աստծո Որդին ես» (Մատթ. 14.33): Եվ Նա ընդունեց այս երկրպագությունը նրանցից:

3. Սբ Պետրոսը մեծաքանակ ձկան որսի հրաշքից հետո, ընկնելով Տիրոջ ոտքերի առաջ, ասաց. «Չեռացի՛ր ինձանից, Տե՛ր, ես մեղավոր մարդ եմ» (Ղուկ. 5.8): Տերն ընդունեց Պետրոսի՝ իր առջև ընկնելն ու իրեն ուղղված «Տեր» կոչականը և կանչեց նրան լինելու մարդկանց որսորդ:

4. Արյունահոսությունից տառապող կինը բժշկվելուց հետո մոտեցավ և ընկավ Նրա առաջ (Մարկ. 5.33):

5. Ժողովրդապետերից մեկը՝ Չայրոս անունով, Տիրոջ ոտքերն ընկավ՝ ասելով. «Դուստրոս մահամերձ է. եկ դի՛ր ձեռքդ նրա վրա, որպեսզի բժշկվի և ապրի» (Մարկ. 5.23): Երկրպագությունն այստեղ կապված է այն հավատի հետ, որ Քրիստոսը կարողություն ունի կենդանացնելու մեռյալին պարզապես ձեռքը նրա վրա դնելով: Եվ Տերն իսկապես հարություն տվեց Չայրոսի դստերը (Մարկ. 5.41-42):

6. Տեր Քրիստոսն իր հարությունից հետո երկրպագություն ընդունեց Մարիամ Մագդաղենացուց և մյուս Մարիամից (Մատթ. 28.9):

7. Նաև տասնմեկ առաքյալները երկրպագեցին Տիրոջը, երբ տեսան Նրան հարություն առած (Մատթ. 28.17): Չարության հրաշքը ամենամեծ հրաշքներից մեկն էր, ուստի առաքյալներն ու կանայք այդ հրաշքից իրենց ազդված լինելը ցույց տվին Տիրոջ առաջ երկրպագությամբ:

8. Արևելքից եկած իմաստունները նույնպես երկրպագեցին՝ ընկնելով մանուկ Չիսուսի առաջ (Մատթ. 2.11):

9. Այստեղ հարկ է հիշել նաև սբ Պողոս առաքյալի հետևյալ խոսքը. «... որպեսզի Հիսուս Քրիստոսի անունով իջնի ամեն ծունր՝ երկնայինների, երկրայինների և սանդարամետականների, և ամեն լեզու խոստովանի, որ Հիսուս Քրիստոսը Տեր է ի փառս Հայր Աստծո» (Փիլ. 2.10-11):

Այսպիսով, այն, որ Տեր Հիսուսն ընդունեց իրեն տրված երկրպագությունը մարդկանցից՝ արտասովոր հրաշքերի և իրեն իբրև Աստծո Որդի դավանելու դեպքերի ժամանակ, հրեշտակներից և երկնքի ու երկրի բոլոր արարածներից, ի թիվս որոնց՝ առաքյալից, ապացույց է Նրա Աստվածության:

Ինչպես որ Նա ընդունեց երկրպագությունը, ընդունեց նաև իրեն ուղղված աղոթքը:

10. Տեր Հիսուսն ընդունեց իրեն ուղղված «Տեր, Տեր» կոչականը (Մատթ. 7.22):

11. Նույնիսկ Հորն ուղղված աղոթքների մասին խոսելիս Նա սովորեցնում է, որ դրանք այնժամ պատասխան կստանան, երբ կատարվեն իր անունով: Նա ասում է իր առաքյալներին. «Ճշմարիտ, ճշմարիտ են ասում ձեզ, ինչ էլ որ իմ անունով խնդրեք իմ Հորից, կտա ձեզ: Մինչև այժմ ոչինչ չեք խնդրել իմ անունով. խնդրե՛ք և կստանաք, որպեսզի ձեր ուրախությունը կատարյալ լինի» (Հովհ. 16.23-24):

12. Նա նույնիսկ ասում է. «Եվ ինչ էլ խնդրեք իմ անունով, կկատարեն, որպեսզի Հայրը փառավորվի Որդիով: Եթե իմ անունով որևէ բան խնդրեք, կկատարեն այն» (Հովհ. 14.13-14):

«Կկատարեն» բառի կրկնությունն այստեղ նշանակում է, որ Նա ինքն է պատասխանելու աղոթքին, ո՛չ ինչպես վերոհիշյալ նախորդ համարում,

ուր ասում է. «... ինչ էլ որ իմ անունով խնդրեք իմ Հորից, *կտա* ձեզ»:  
Այստեղ Քրիստոսն ի՛նքն է տվողը, որպեսզի Հայրը փառավորվի Որդիով:

## ԳԼՈՒԽ 16

### ՆՐԱՆՆ Է ՓԱՌՔԸ ՀԱՎԻՏՅԱՆ

1. «Նրանն է փառքը հավիտյան» արտահայտությունը միայն Աստծուն կարող է վերաբերել: Այս իմաստն է արտահայտում նաև սերովբեների՝ Աստծուն ուղղված սրբասացությունը (Ես. 6.3):

2. Աստված այս աստվածային փառքը չի տալիս ուրիշին, ուստի ասում է Եսայու գրքում. «Ես եմ Տերը, սա է իմ անունը, և իմ փառքն ուրիշին չեմ տա» (42.8):

Նշանակում է՝ եթե Տեր Հիսուսն այս փառքն ունենա, դա կլինի Նրա Աստվածության հստակ ապացույց. որովհետև եթե Քրիստոսն ինքն Աստված չէ, Նրա փառքը չի կարող լինել նաև Հոր փառքը, քանի որ ոչ ոք չի կարող փառքով մրցակցել Աստծո հետ:

3. Սուրբ Գիրքը տալիս է մեզ այն գաղափարը, թե Տեր Հիսուս Քրիստոսն ունի՝ այս փառքն իբրև Աստված, որովհետև Նա նստում է Իր փառքի մեջ՝ դատելու բոլոր ժողովուրդներին ու ազգերին. «Երբ Մարդու Որդին գա Իր փառքով և բոլոր հրեշտակները՝ Նրա հետ, այնժամ կնստի Իր փառքի աթոռին: Բոլոր ազգերը կհավաքվեն Նրա առաջ...» (Մատթ. 25.31-32):  
Հայտնի է, որ դատաստանն Աստծո՝ գործն է, ինչպես երևում է Ծննդ. 18.25 համարից:

4. Սբ Պետրոս առաքյալն ասում է. «Աճե՛ք մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի շնորհով և գիտությամբ: Նրան փա՛ռք և՛ այժմ, և՛ հավիտյան: Ամեն» (Բ Պետ. 3.18): «Մեր Տեր» և «Նրան փա՛ռք» արտահայտությունները Նրա Աստվածության բացահայտ ապացույց են:

5. Սբ Պետրոսը նաև ասում է. «... որպեսզի ամեն ինչում Աստված փառավորվի Հիսուս Քրիստոսի միջոցով, Ուն փառք և զորություն հավիտյանս հավիտենից: Ամեն» (Ա Պետ. 4.11): Որքան գեղեցիկ է այս և բերված նախորդ համարների համեմատությունը սբ Հուդա առաքյալի հետևյալ խոսքի հետ. «Մեկ Աստծուն և մեր Փրկչին՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսին, փառք, մեծություն, զորություն և իշխանություն նախքան բոլոր հավիտյանները, և՛ այժմ, և՛ բոլոր հավիտյաններում: Ամեն» (Հուդա 25)<sup>17</sup>:

Ուրեմն՝ Հոր փառքը Որդու նույն փառքն է:

6. Աստվածաշունչը հենց ուղղակի էլ նշում է, որ Տեր Հիսուս Քրիստոսն ունի նույն փառքն, ինչ Հայրը:

Տեր Հիսուսն ասում է. «Մարդու Որդին գալու է Իր Հոր փառքով և Իր հրեշտակների հետ և այնժամ կհատուցի յուրաքանչյուրին ըստ նրա գործերի» (Մատթ. 16.27): Նաև ասում է. «Որովհետև ով ամոթ համարի Ինձ և Իմ խոսքերը, Մարդու Որդին էլ նրան կամաչեցնի, երբ գա Իր և Հոր ու սուրբ հրեշտակների փառքով» (Ղուկ. 9.26):

7. Որդու և Հոր զուգափառությունը (նույն փառքն ունենալը) ցույց է տրվում «Հայտնության» գրքում՝ այնտեղ, ուր Քրիստոսը հայտնվում է աթոռի մեջ (5.6, 7.17), այլև այն փառաբանության մեջ, որ տեսլատես առաքյալը լսում է երկնքում, երկրում և երկրի ներքո գտնվող բոլոր արարածների բերանից: Նրանք ասում են. «Նրան, ով նստած է աթոռին, և Գառին՝ օրհնությո՛ւն, պատի՛վ, փա՛ռք և զորությո՛ւն հավիտյանս հավիտենից» (5.13): Հորը

<sup>17</sup> Հունարեն տարածված բնագրերում այս համարը տարբերվում է դրա գրաբարյան թարգմանությունից և չի նշում Հիսուս Քրիստոսի անունը:

վայել նույն փառքն ու զորությունը վայել են նաև Որդուն, ով հանդես է գալիս այստեղ մորթված Գառի տեսքով (5.6): Այս զուգափառությունը հավիտենական է և անժխտելիորեն և՛ս մեկ ապացույց Քրիստոսի աստվածության:

8. Տեր Հիսուսն այս փառքի մասին խոսելիս ասում է. «...ինչպես և ես... նստեցի Իմ Հոր հետ Նրա աթոռին» (Հայտ. 3.21): Սա այն փառքն է, որ Նա ուներ Հոր հետ նախքան աշխարհի լինելը (Հովհ. 17.4-5):

## ԳԼՈՒԽ 17

### ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ ՍՈՒՐԲ ԵՎ ԲԱՐԻ Է

Այս պնդումը պիտի ներկայացնենք երեք կետով, որոնք են՝

ա) Ոչ ոք բարի չէ, բացի Մեկից, այսինքն՝ Աստծուց (Մատթ. 19.17, Մարկ. 10.18, Ղուկ. 18.19):

բ) Քրիստոսը սուրբ և բարի է:

գ) Եզրակացություն:

### Ա) ՈՉ ՈՔ ԲԱՐԻ ՉԷ, ԲԱՑԻ ՄԵԿԻՑ, ԱՅՍԻՆՔՆ՝ ԱՍՏԾՈՒՑ

1. Սաղմոսագիրքն ասում է. «Ամենքը խոտորվեցին, միասին անպիտանացան. չկա մեկը, որ բարիք գործի, նույնիսկ մեկը չկա» (Սաղմ. 13.3, 52.3): Այս խոսքը վկայակոչվում է սբ Պողոս առաքյալի կողմից հռոմեացիներին ուղղած նրա թղթում (3.12):

2. Սբ Հովհաննես առաքյալը հաստատում է այս իրողությունը՝ ասելով.  
«Եթե ասում ենք, թե որևէ մեղք չունենք, ինքներս մեզ խաբում ենք, և ճշմարտություն չկա մեր մեջ» (Ա Հովհ. 1.8): Նույնիսկ սրբերն են ընդունում, որ իրենք մեղավոր են: Մինչև երրորդ երկինք բարձրացած Պողոս առաքյալն ասում է. «Հիսուս Քրիստոսն աշխարհ եկավ՝ փրկելու մեղավորներին, որոնցից առաջինը ես եմ» (Ա Տիմ. 1.15): Նաև ասում է. «... բայց ես մարմնավոր եմ, մեղքին վաճառված... Գիտեմ, որ իմ մեջ, այսինքն՝ իմ մարմնի, որևէ բարի բան չի բնակվում» (Հռոմ. 7.14, 18):

3. Քանի որ բոլոր մարդիկ մեղավոր են, ապա միայն Աստված է բարի, ինչպես Տերն Ինքն է ասում. «Ոչ ոք բարի չէ, բացի Մեկից՝ Աստծուց» (Մարկ. 10.18):

4. Աստվածաշունչն ասում է նաև, որ Աստված սուրբ է: Սերովբեները փառավորելով աղաղակում են. «Սուրբ, սուրբ, սուրբ» (Ես. 6.3), իսկ սբ Կույս Մարիամն ասում է. «Քանզի Հզորը մեծամեծ բաներ արեց ինձ համար, և սուրբ է Նրա անունը» (Դուկ. 1.49):

5. Այլև, Աստվածաշունչը սրբությունը միայն Աստծուն է վերապահում:

Սա երևում է «Հայտնության» մեջ տեղ գտած հետևյալ երգում.  
«Մեծամեծ և սքանչելի են Քո գործերը, Տե՛ր Աստված ամենակալ, արդար և ճշմարիտ են Քո ճանապարհները, Թագավոր սրբերի... քանզի *միայն Դու ես սուրբ...*» (15.3-4):

Այստեղ ներկայացնում ենք երկրորդ կետը՝

**Բ) ՔՐԻՍՏՈՍԸ ՍՈՒՐԲ ԵՎ ԲԱՐԻ Է**



1. Քրիստոսի ծննդյան ավետիսը տալիս հրեշտակն ասում է սբ Կույսին.  
«Սուրբ Յոզիմ կգա քեզ վրա, և Բարձրյալի զորությունը հովանի կլինի քեզ,  
քանզի Նա, ով ծնվելու է քեզանից, *սուրբ է* և Աստծո Որդի է կոչվելու» (Ղուկ.  
1.35):

2. Կաղ մարդուն բժշկելուց հետո սբ Պետրոս առաքյալը, Քրիստոսին  
ներժելու համար կշտամբելով հրեաներին, ասում է. «Եվ դուք ուրացաք  
*Սուրբին* ու Արդարին և խնդրեցիք, որ մի մահապարտ մարդ շնորհվի ձեզ»  
(Գործք 3.14):

3. Սբ Պողոս առաքյալը Տեր Յիսուսի մասին խոսելիս ասում է. «Յենց  
այսպիսի քահանայապետ էր մեզ վայել՝ *սուրբ*, անմեղ, անարատ,  
մեղավորներից զատված և երկնքից էլ վեր բարձրացած» (Եբր. 7.26):

4. Պետրոս և Յովհաննես առաքյալների ազատ արձակումից հետո ամբողջ  
Եկեղեցին աղոթք է բարձրացնում՝ ասելով. «Տե՛ր,... տո՛ւր Քո ծառաներին  
ամենայն համարձակությամբ խոսել Քո խոսքը... և նշաններ ու հրաշքներ  
կատարվեն Քո *սուրբ* Որդի Յիսուսի անունով» (Գործք 4.29-30. տես նաև  
4.27):

5. Տերն Ինքն էլ ասում է Ֆիլադելֆիայի Եկեղեցուն հղած իր ուղերձում.  
«Այսպես է ասում *Սուրբն ու ճշմարիտը*, ով ունի Դավթի բանալին. բացում է,  
և ոչ ոք չի փակում, փակում է, և ոչ ոք չի բացում» (Հայտ. 3.7):

6. Տեր Քրիստոսն իր սրբությամբ բոլոր մարդկանց երևում էր իբրև մեկը, որ  
«մեղավորներից զատված» է (Եբր. 7.26) և միակ բարին է: Ուստի ասես  
մարտահրավեր նետելով՝ հրեաներին ասում էր. «Ձեզանից ո՞վ  
կհանդիմանի Ինձ մեղքի համար» (Հովհ. 8.46), իսկ սատանայի մասին  
ասում է. «Գալիս է այս աշխարհի իշխանը և Իմ մեջ ոչինչ չունի» (Հովհ.  
14.30):

7. Առաքյալները Քրիստոսի մասին վկայում են՝ ասելով.

\* «... այլ մեզ նման փորձվեց ամեն ինչով՝ առանց մեղքի» (Եբր. 4.15):

\* «... ով մեղք չգիտեր» (Բ Կոր. 5.21):

\* «Նրա մեջ մեղք չկա» (Ա Յովհ. 3.5):

\* «Ով մեղք չգործեց, և Նրա բերանում նենգություն չգտնըվեց» (Ա Պետ. 2.22):

8. Նույնիսկ օտարներն ու թշնամիներն էին Նրա անմեղության ու սրբության մասին վկայում.

\* Նրան մատնած Յուդան ասում է. «Մեղանչեցի, որովհետև արդար արյուն մատնեցի» (Մատթ. 27.4):

\* Նրա մահվան վճիռը կայացրած Պիղատոսն ասում է. «Ես անմասն եմ այդ Արդարի արյունից» (Մատթ. 27.24):

\* Պիղատոսի կինը, ամուսնու մոտ մարդ ուղարկելով, ասում է. «Գործ չունեն այդ Արդարի հետ» (Մատթ. 27.19):

9. Նույնիսկ սատանան է Տիրոջ մասին վկայում՝ ասելով. «Գիտենք, թե ով ես՝ Աստծո *Սուրբը*» (Մարկ. 1.24, Ղուկ. 4.34):

10. Եհովայի վկաներն իրենց 'Watchtower' («Դիտարան») պարբերականի մի համարում (1953, հունիս, էջ 69, անգլ.), պատասխանելով Սողոմոն հմաստունի «Հազարների մեջ մի տղամարդ գտա, բայց կին՝ ամենևին ոչ» (Ժող. 7.29) խոսքին վերաբերող հարցին, վկայում են Քրիստոսի՝ միակ բարին լինելու մասին:

Նրանք ասում են հետևյալը: 1000 թվականը կատարելության խորհրդանիշ է, և «հազար տղամարդիկ» նշանակում են բոլոր տղամարդիկ: Եվ մինչ բոլոր կանանց մեջ չկա մի կին, որ բարի և անմեղ

լինի, տղամարդկանց մեջ *կա Մեկը, որ բարի է, այսինքն՝ Քրիստոս Չիսուսը* (այս հատկությունն ունեցող միակ անձը, որ ապրել է երկրի վրա):

#### Գ) ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Քանի որ ոչ ոք բարի չէ, բացի Մեկից, այսինքն՝ Աստուծուց, և քանի որ ապացուցվեց, որ Քրիստոսը բարի է կամ որ Նա է միակ բարին, ապա Քրիստոսն Աստված է, Նա՛, ով «զատված է մեղավորներից և երկնքից էլ վեր բարձրացած» (Եբր. 7.27):

2. Քանի որ նաև միայն Աստված է սուրբ (Չայտ. 15.4) և ապացուցվեց, որ Քրիստոսը սուրբ է, ապա Նա Աստված է:

**ՀԱՐՑ:** Այդ դեպքում ինչո՞ւ երբ երիտասարդը Տիրոջը հարց ուղղելիս Նրան դիմեց «Բարի ուսուցիչ» ձևով, Տերը նրան պատասխանեց. «Ինչո՞ւ ես Ինձ «բարի» կոչում. ոչ ոք բարի չէ, բացի Մեկից՝ Աստուծուց» (Մարկ. 10.17-18):

**ՊԱՏԱՍԽԱՆ:** Հրեաներն իրենց ուսուցիչներին «ուսուցիչ» կամ «բարի ուսուցիչ» ձևով էին դիմում: Ուստի երիտասարդին տված էր պատասխանով Տեր Չիսուսը կամենում էր նրան ասել. «Դու Ինձ այդպես կոչում ես ըստ սովորությա՞ն, ինչպես վարվում ես նաև մյուս ուսուցիչների հետ: Եթե այո՛, ապա իմացիր, որ ոչ մեկն էլ բարի չէ, բացի Մեկից՝ Աստուծուց: Հավատո՞ւմ ես, ուրեմն, որ Եմ եմ այդ Աստվածը»:

Տեր Չիսուսը չի ասում, թե Ինքը բարի չէ, ընդհակառակը՝ մի ուրիշ առիթով ասում է. «Ես եմ բարի Հովիվը» (Հովի. 10.11), այլև՝ «Ձեզանից ո՞վ կհանդիմանի Ինձ մեղքի համար» (Հովի. 8.46):

## ԳԼՈՒԽ 18

### ՏԵՐ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԸ ՄԵՂՔԵՐԻՆ ԹՈՂՈՒԹՅՈՒՆ Է ՏԱԼԻՍ

#### ՄԻԱՅՆ ԱՍՏՎԱԾ ԿԱՐՈՂ Է ՄԵՂՔԵՐԻՆ ԹՈՂՈՒԹՅՈՒՆ ՏԱԼ

1. Դավիթ մարգարեն ասում է սաղմոսում. «Օրհնի՛ր, հոգի՛ իմ, Տիրոջը... ով քավում է մեղքերդ» (Սաղմ. 102.1, 3): Նաև՝ «Թե անօրենություններս քննես, Տե՛ր, Տե՛ր, ո՞վ կարող է կանգնել Քո առաջ: Քանզի Քեզանից է քավությունը» (Սաղմ. 129.3-4):

2. «Ելքի» գրքում գրված է. «Տեր Աստված գթած է և ողորմած... ներում է անօրենությունները, անիրավություններն ու մեղքերը» (34.6-7):

3. Տեր Հիսուսը սովորեցնում է մեզ Տերունական աղոթքում թողություն խնդրել Աստծուց (Մատթ. 6.12): Նա սովորեցնում է նաև ներել ուրիշներին, որպեսզի մենք ևս արժանանանք Աստծո ներմանը (Մատթ. 6.14-15): Եվ խաչի վրա Տերն ասում է. «Հա՛յր, ների՛ր նրանց» (Դուկ. 23.34):

4. Հրեաները գիտեին այս իրողությունը և հավատում էին, որ Աստծուց բացի ոչ ոք չի կարող մեղքերին թողություն տալ (Մարկ. 2.7):

#### ԱՍԾՈ՝ ՄԵՂՔԵՐ ՆԵՐԵԼՈՒ ՊԱՏՃԱՈՐ

1. Թողությունը պատկանում է միայն Աստծուն, որովհետև մեղքն իրականում գործվում է Նրա՛ դեմ՝ լինելով Նրա պատվիրանների խախտում,

Նրա օրենքի դեմ հանցանք և Նրա թագավորության դեմ ապստամբություն: Մեղքը ցույց է տալիս Աստծո հանդեպ սիրո պակաս, որով չարը գերադասվում է Աստծուց, նաև Աստծո հանդեպ ապերախտություն և նույնիսկ աստվածամերժություն: Սա հստակ երևում է Աստծո խոսքում, որը ներկայացնում է Եսային. «Որդիներ ծնեցի և մեծացրի, և նրանք անարգեցին Ինձ... թողեցին Տիրոջն ու բարկացրին Իսրայելի Սուրբին» (Ես. 1.2-4):

2. Նույնիսկ այն մեղքերը, որ մարդիկ միմյանց հանդեպ են գործում, նախքան մարդկանց դեմ մեղք լինելը մեղք են Աստծո, Նրա պատվիրանների և Նրա արարչության դեմ: Այս պատճառով էլ Դավիթ մարգարեն սաղմոսում ասում է. «Քո հանդեպ միայն մեղանչեցի, Տե՛ր, և Քո առաջ չարիք գործեցի» (50.6): Եվ երբ Նաթան մարգարեն Դավթի մեղքը նրա առաջ բացահայտեց, վերջինս ասաց. «Մեղանչեցի Տիրոջ դեմ», և Նաթանը պատասխանեց. «Տերն էլ վերցրեց քո մեղքը, և չես մեռնի» (ԲԹագ. 12.13-14):

Այս մասին տե՛ս նաև Միք. 7.9, Ես. 42.24 և ԳԹագ. 8.45-46 տեղիներում:

## **ՏԵՐ ՀԻՍՈՒՄԸ ԹՈՂՈՒԹՅՈՒՆ Է ՏԱԼԻՍ ՄԵՂՔԵՐԻՆ**

1. Նա թողություն է տալիս անդամալուծին և շատ հստակ ասում նրան. «Մեղքերդ ներվա՛ծ կլինեն» (Մատթ. 9.2, Մարկ. 2.5, Դուկ. 5.20): Եվ երբ դպիրներն իրենց մտքում ասում են. «Այս Ի՞նչ է, որ սա հայիոյություն է խոսում. Աստծուց բացի ո՞վ կարող է մեղքեր ներել» (Մարկ. 2.7), Տերը նրանց ասում է. «Ինչո՞ւ եք ձեր սրտում չարը խորհում: Ի՞նչն է դյուրին. ասել՝ «մեղքերդ ներվա՛ծ կլինեն», թե՞ «վե՛ր կաց ու քայլի՛ր»: Բայց որպեսզի իմանաք, որ Մարդու Որդին երկրի վրա մեղքեր ներելու իշխանություն ունի», - այդժամ անդամալուծին ասաց. «Վե՛ր կաց, մահիճդ վերցրո՛ւ և տո՛ւն գնա» (Մատթ. 9.4, 6, Մարկ. 2.7-10):

2. Տեր Հիսուսը թողություն է շնորհում նաև մեղավոր կնոջը, ով լվաց Նրա ոտքերն իր արցունքով: Տերն ասում է նրան. «Մեղքերդ ներված կլինեն» (Ղուկ. 7.48): Սակայն այդտեղ ներկա մարդիկ իրենց մտքում քննադատում են Նրան՝ ասելով. «Ո՞վ է սա, որ մեղքեր է ներում»:

3. Տեր Հիսուսը ներում է նաև իրեն խաչակից ավազակին և չնայած նրա մեղսակից անցյալին՝ նրա համար դրախտի դուռը բացում՝ ասելով. «Այսօր ինձ հետ դրախտում կլինես» (Ղուկ. 23.43):

4. Ժողովրդին Նրա թողություն տալը Նրա կողմից ոտնձգություն չէր Աստծո իրավունքների հանդեպ, որովհետև անդամալուծին «Մեղքերդ ներված կլինեն» ասելուց հետո Նա բժշկում է նրան, վերջինս վեր է կենում, վերցնում իր մահիճն ու տուն գնում: Եթե Քրիստոսը նրան ներելով ոտնձգություն գործած լիներ Հոր իրավունքների հանդեպ, ապա դրանից հետո չէր կարողանա բժշկել անդամալուծին:

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Թեև բոլորը հավատում են, որ միայն Աստված է մեղքեր ներողը, Քրիստոսը միայն իր մի պարզ հրամանով թողություն է շնորհում անդամալուծին, մեղավոր կնոջը, ավազակին և ուրիշների: Նա անում է սա ոչ թե աղոթքով՝ Աստծուց խնդրելով, որ մարդկանց մեղքերին արձակում տա, ինչպես քահանաներն են անում, այլ միայն սեփական բերանից ելած «Մեղքերդ ներված կլինեն» խոսքով: Նա չի ասում, օրինակ, «Գնա՛, Տերը ներում է քեզ», այլ նույնիսկ հայտնապես ասում է, որ երկրի վրա մեղքեր ներելու իշխանություն ունի (Մատթ. 9.6, Մարկ. 2.10):

Երբ հրեաներն ասում են, որ միայն Աստված է, որ կարող է թողություն շնորհել, Տեր Հիսուսը սրան չի առարկում, այլ մանավանդ հաստատում այս

գաղափարը՝ հռչակելով թողություն տալու իր իշխանությունը և այն հաստատելով նրանց առաջ գործած հրաշքով՝ ասես ասելով. «Ե՛ս եմ այն Աստվածը, միայն որին է պատկանում թողություն տալու իշխանությունը»:

## ԳԼՈՒԽ 19

### ՏԵՐ ՔԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԸ ԴԱՏԱՎՈՐ Է

Այս պնդումը կներկայացնենք երեք կետով՝

ա) Միայն Աստված է դատավոր:

բ) Տեր Քրիստոսը դատավոր է:

գ) Եզրակացություն:

### Ա) ՄԻԱՅՆ ԱՍՏՎԱԾ Է ԴԱՏԱՎՈՐ

\* Սողոմոնի ժողովրդի համար բարեխոսելիս Աբրահամն Աստծուն անբողջ երկրի դատավոր է կոչում (Ծննդ. 18.25):

\* Դավիթ մարգարեն սաղմոսներում ասում է.

- «Տերը դատում է իր ժողովուրդներին» (7.9):

- «...արդարությամբ դատում է իր ժողովուրդներին» (95.10):

- «...արդարությամբ է դատում աշխարհը» (95.13, 97.9):

- «Աստված, վրեժխնդիր Տեր... բարձրացի՛ր, որ դատում ես երկիրը» (94.2):

- «Երկինքը կպատմի Նրա արդարությունը, քանզի Աստված դատավոր է» (49.6):

\* Սբ Պողոս առաքյալը Չռոմ. 3.6 համարում ասում է. «...Աստված դատում է աշխարհը»:

Իհարկե Աստված դատում է աշխարհը, քանի որ քննում է մարդկանց սիրտն ու միտքը, կարդում խորհուրդները (մտածումները, մտքերը) և գիտի յուրաքանչյուրի գործերը: Այս իսկ պատճառով Նա դատում է արդարությամբ և անաչառությամբ:

## **Բ) ՏԵՐ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԸ ԴԱՏԱՎՈՐ Է**

1. Սբ Պողոս առաքյալն ասում է. «Քանզի մենք ամենքս պետք է կանգնենք Քրիստոսի ատյանի առաջ, որպեսզի յուրաքանչյուրը ստանա ինչ որ իր մարմնով գործել է առաջ՝ թե՛ բարի, թե՛ չար» (Բ Կոր. 5.10):

2. Մատթեոսի Ավետարանում Տեր Հիսուսն ասում է. «Մարդու Որդին գալու է Իր Հոր փառքով և Իր հրեշտակների հետ և այնժամ կհատուցի յուրաքանչյուրին ըստ նրա գործերի» (16.27):

3. Տերը նաև ասում է. «Երբ Մարդու Որդին Իր փառքով ու բոլոր հրեշտակներով հանդերձ գա, այդժամ կնստի Իր փառքի աթոռին, բոլոր ազգերը կհավաքվեն Նրա առաջ, և նրանց կբաժանի միմյանցից, ինչպես մի հովիվ, որ բաժանում է ոչխարներն այծերից, ոչխարները կանգնեցնում Իր աջ կողմում, իսկ այծերը՝ ձախում»: Ապա, դատաստանի մանրամասները բացատրելուց հետո, եզրափակում է. «Եվ սրանք կգնան դեպի հավիտենական տանջանք, իսկ արդարները՝ հավիտենական կյանք» (Մատթ. 25.31-46):

4. Ժամանակների վախճանի մասին Տերն ասում է. «Մարդու Որդին կուղարկի Իր հրեշտակներին, և Նրա արքայությունից կհավաքեն բոլոր գայթակղություններն ու նրանց, ովքեր անօրենություն են գործում, և վառ հնոցը կզցեն» (Մատթ. 13.41-42):



5. Սբ Պողոս առաքյալն իր աշակերտ սբ Տիմոթեոսին ասում է. «...և Հիսուս Քրիստոսի առաջ, ով դատելու է ողջերին ու մեռյալներին իր հայտնությամբ և արքայությամբ» (Բ Տիմ. 4.1):

6. «Հայտնության» մեջ Տերն ասում է. «Ահա գալիս եմ շուտով, և իմ վարձն ինձ հետ է՝ հատուցելու յուրաքանչյուրին ըստ նրա գործերի» (22.12):

7. Իբրև դատավոր Նրա գործելու պատճառներից մեկն այն է, որ Նա գիտի յուրաքանչյուրի գործերը: Ուստի Ասիայի յոթ Եկեղեցիների հրեշտակներին հղած իր ուղերձում Նա ասում է նրանցից յուրաքանչյուրին. «Գիտեմ քո գործերը» (Հայտ. 2.2, 9, 13, 19) (տես նաև Մատթ. 7.22-23-ը):

#### Գ) ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Քանի որ Քրիստոսը դատավոր է, ուրեմն Աստված է, որովհետև Աստված է դատավորը: Քրիստոսը դատում է մարդկանց գործերը, որովհետև գիտի դրանք, այլև որովհետև՝ «բոլոր Եկեղեցիները կիմանան, որ ես եմ, որ քննում եմ երիկամներն ու սրտերը, և կհատուցեմ ձեզանից յուրաքանչյուրին ըստ ձեր գործերի» (Հայտ. 2.23), այսինքն՝ Նա ոչ միայն մարդկանց գործերը գիտի, այլև սիրտն ու խորհուրդները: Սա մեզ տալիս է Նրա Աստված լինելու ևս մի վկայություն:

#### ԳԼՈՒԽ 20

ՏԵՐ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԸ ՔՆՆՈՒՄ Է  
ՄԱՐԴՈՒ ՍԻՐՏՆ ՈՒ ՄԻՏՔԸ

Աստծուց բացի ուրիշ ոչ ոք չի կարող քննել սիրտը, կարդալ խորհուրդներն ու գիտենալ սրտի գաղտնիքները, որովհետև սա հատուկ է Նրա անսահմանափակ գիտության կարողությանը, և միայն Նա է անսահման: Աստվածաշունչը հաստատում է, որ այս հատկությունը միայն Աստծուն է պատկանում, ինչպես երևում է ներքոբերյալ խոսքերում:

1. Տաճարի նվիրաբերման աղոթքում Սողոմոնն ասում է Տիրոջը. «Լսի՛ր երկնքից՝ Քո բնակության պատրաստ վայրից... քանզի միայն Դու գիտես մարդկանց բոլոր որդիների սրտերը» (Գ Թագ. 8.39): Այստեղ ընդգծելի են «միայն Դու» բառերը:

2. Սողոմոնի առակները լի են սա վկայող խոսքերով: Աստծուն նկարագրելիս Սողոմոնն ասում է. «Տերը կշռում է սրտերը», «Տերը փորձում է սրտերը» (Առակ. 21.2, 17.3)<sup>18</sup>:

3. Դավիթ մարգարեն ասում է սաղմոսներում. «Արդար Աստված, ով քննում է սրտերն ու երիկամները» (7.10), նաև՝ «Նա քննում է մեր սրտի գաղտնիքները» (43.22):

4. Երեմիայի գրքում Տերն ասում է. «Ես՝ Տերս եմ քննում սրտերն ու փորձում երիկամները՝ հատուցելու յուրաքանչյուրին ըստ իր ճանապարհների և ըստ իր գործերի պտղի» (17.10), իսկ Երեմիա մարգարեն ասում է. «Ձորությունների՝ Տեր, որ ընտրում ես իրավունքը և քննում երիկամներն ու սրտերը» (11.20):

5. Ամոս մարգարեն ասում է. «...հայտնում է մարդուն, թե ինչ է նրա խորհուրդը... Ձորությունների Տեր Աստված է Նրա անունը» (4.13)<sup>19</sup>:

---

<sup>18</sup> Թարգմանությունն՝ ըստ եբրայական բնագրի:

<sup>19</sup> Թարգմանությունն՝ ըստ եբրայական բնագրի:

6. Պողոս առաքյալն ասում է. «...խոսում ենք ոչ թե մարդկանց հաճոյանալու համար, այլ Աստծուն, ով քննում է մեր սիրտը» (Ա Թես. 2.4):

Վերոբերյալ բոլոր խոսքերը հստակորեն ցույց են տալիս, որ Աստված փորձում է մարդու սիրտը, կշռում ու քննում այն և գիտի նրա գաղտնիքները: Նա հայտնում է մարդուն, թե ինչ է վերջինիս խորհուրդը, և միայն ինքը գիտի բոլոր մարդկանց սրտերը: Միայն Նա է, որ քննում է սիրտն ու միտքը:

### **ՏԵՐ ՀԻՍՈՒՄԸ ՔՆՆՈՒՄ Է ՄԱՐԴՈՒ ՍԻՐՏԸ ՈՒ ԳԻՏԻ ՆՐԱ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ**

1. Տեր Հիսուսն ասում է, ինչպես արդեն նշել ենք. «Եվ բոլոր Եկեղեցիները կհնաման, որ ես եմ, որ քննում եմ երիկամներն ու սրտերը, և կհատուցեմ ձեզանից յուրաքանչյուրին ըստ ձեր գործերի» (Հայտ. 2.23):

Կան շատ ուրիշ նորկտակարանյան օրինակներ էլ, որ ապացուցում են, որ Նա կարդում է մարդկանց խորհուրդներն ու առանց դրանք ականջով լսելու՝ պատասխանում դրանց: Օրինակ՝

2. Առաքյալների մասին գրված է, որ «նրանք խորհում էին միմյանց հետ և ասում. «Որովհետև հաց չունենք»: Հիսուսն իմացավ և ասաց նրանց. «Ինչո՞ւ եք ձեր սրտում խորհում, թե հաց չունեք, թերահավատներ՝» (Մարկ. 8.16-17, Մատթ. 16.8):

3. Երբ Տերն ասում է անդամալուծին. «Մեղքերդ ներված կլինեն», Ավետարանն ասում է, որ դպիրներն իրենց սրտում ասում են. «Այս մարդը հայիոյուն է»: Սակայն Հիսուսը, իմանալով նրանց խորհուրդները, ասում է. «Ինչո՞ւ եք ձեր սրտում չարը խորհում. ի՞նչն է ավելի դյուրին...» (Մարկ. 2.6-8, Մատթ. 9.3-4, Ղուկ. 5.21-22):

4. Դիվահարին, կույրին և համրին Տեր Հիսուսի բժշկելուց հետո, երբ այս մասին «փարիսեցիները լսեցին, ասացին. «Դա դևերին ոչ այլ կերպ է հանում, եթե ոչ դևերի իշխան Բեեղզեբուղի միջոցով»։ *Հիսուսը, նրանց խորհուրդներն իմանալով*, ասաց նրանց. «Իր մեջ բաժանված ամեն թագավորություն ավերվում է, և իր մեջ բաժանված ամեն քաղաք կամ տուն կանգուն չի մնում» (Մատթ. 12.24-25, Ղուկ. 11.17):

5. Չորացած ձեռքով մարդուն բժշկելու հրաշքը պատմելիս Ավետարանն ասում է. «Եվ դպիրներն ու փարիսեցիները սպասում էին, թե շաբաթ օրը Նա կբժշկի՞, որպեսզի Նրա դեմ մեղադրանք գտնեն: Իսկ *Նա գիտեր նրանց խորհուրդները...* Հիսուսն ասաց նրանց. «...Ի՞նչ է վայել շաբաթ օրը գործել՝ բարի՞ բան, թե չար» (Ղուկ. 6.7-9):

6. Երբ առաքյալները փորձվեցին փառասիրության խորհրդով, «նրանց մեջ խորհուրդ մտավ, թե իրենցից ո՛վ է մեծ»։ *Հիսուսը, նրանց սրտի խորհուրդներն իմանալով*, մի մանուկ վերցրեց, կանգնեցրեց նրանց մեջ՝ իր մոտ...» (Ղուկ. 9.46-47):

7. Այն բանից հետո, որ մեղավոր կինն իր արցունքով լվաց Տիրոջ ոտքերը, փարիսեցին «*մտքում ասաց*. «Եթե Սա մարգարե լիներ, կիմանար, թե ով և ինչպիսի կին է Իրեն մոտեցողը, քանզի մեղավոր է»։ Եվ Տերն իմացավ նրա այս խորհուրդն ու դրան պատշաճ պատասխան տվեց (Ղուկ. 7.39-47):<sup>20</sup>

8. Անհայտն իմանալու Տիրոջ կարողության վերաբերյալ բերում ենք հետևյալ օրինակները.

\* Տիրոջ խոսքը Պետրոսին կարթի, ձկան և դրամի մասին (Մատթ. 17.26):

\* Ղազարոսի մահվան մասին Նրա իմանալը (Հովհ. 11.11):

\* Նրա տեղյակ լինելը թզենու տակ Նաթանայելին պատահածի մասին (Հովհ. 1.47-50):

<sup>20</sup> Կարելի է ավելացնել նաև հետևյալ տեղին. «Բայց Ինքը Հիսուսն Իր անձը չէր վստահում նրանց, քանզի գիտեր ամենքին և կարիք չունեիր, որ մեկը վկայի մարդու մասին, քանզի Ինքը գիտեր ինչ կար մարդու մեջ» (Հովհ. 2.24-25):

\* Սամարացի կնոջ անցյալի մասին Նրա իմանալը (Հովհ. 4.18):

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Աստվածաշունչն ասում է. «Արդար Աստված, ով քննում է սրտերն ու երիկամները» (Սաղմ. 7.10), և Տեր Հիսուս Քրիստոսն ասում է. «Եվ բոլոր Եկեղեցիները կիմանան, որ Ես եմ, որ քննում եմ երիկամներն ու սրտերը, և կհատուցեմ ձեզանից յուրաքանչյուրին ըստ ձեր գործերի» (Հայտ. 2.23): Մի՞թե սա հստակ հայտարարություն չէ, որ Քրիստոսն Աստված է:

Ուստի Քրիստոսը ճշմարիտ Աստված է, և Աստված ճշմարիտ է:

2. Աստվածաշունչը հայտնապես ասում է Աստծո մասին. «Միայն Դու գիտես մարդկանց բոլոր ուղիների սրտերը» (Գ Թագ. 8.39): Միևնույն ժամանակ, ապացուցվեց, որ Քրիստոսը կարդում էր մարդկանց խորհուրդները և գիտեր նրանց սրտի ու մտքի գաղտնիքները: Ուրեմն կարո՞ղ է պատահել, որ Աստվածաշունչն ինքն իրեն հակասի: Իսկ գուցե Քրիստոսն ու Աստված նույն էությունն են և այդ է պատճառը, որ Քրիստոսը գիտի մարդկանց սրտերը:

Այստեղից բխում է, որ Քրիստոսը ճշմարիտ Աստված է, և Աստված ճշմարիտ է:

## ԳԼՈՒԽ 21

### ՏԵՐ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԸ ՓՐԿԻՉՆ Է

Այս ուսումնասիրությունը կներկայացնենք չորս գլխավոր կետով՝

ա) Աստված է փրկիչը. միայն Նա է փրկում մարդկային ցեղը:

- բ) Այս պնդման աստվածաբանական հենքը:
- գ) Միայն Քրիստոսն է փրկիչը:
- դ) Վերոգրյալից բխում է Քրիստոսի Աստված լինելը:

## Ա) ԱՍՏՎԱԾ Է ՓՐԿԻՉԸ

Աստվածաշունչն այս մասին խիստ հստակորեն է վկայում: Օրինակ՝ Սաղմոսագրքում կարող ենք կարդալ այսպիսի տողեր. «Եղբայրը չի փրկում, մարդը չի փրկում... Սակայն Աստված կփրկի իմ հոգին դժոխքի ձեռքից» (Սաղմ. 48.8, 16): «Օրհնի՛ր, հոգի՛ իմ, Տիրոջը... ով քավում է մեղքերդ,... կյանքդ փրկում ապականությունից» (102.1-4):

Եսային նույնպես հաճախ է խոսում այս մասին. «Այսպես է ասում Իսրայելի թագավոր Աստված՝ Ջորությունների Աստվածը, ով փրկեց նրան. «Ես եմ առաջինն ու ես եմ վերջինը, Ինձանից բացի ուրիշ Աստված չկա» (44.6):

Ուրեմն փրկիչն այս Մեկ Աստվածն է՝ Ջորությունների Տերը, Առաջինն ու Վերջինը: Եսայի մարգարեն այս միտքը կրկնում է նաև հետևյալ տեղիներում.

47.4 - «Ով փրկեց քեզ, Նրա անունը Ջորությունների Տեր է, Իսրայելի Սուրբը»:

48.17 - «Այսպես է ասում Տերը՝ Իսրայելի Սուրբը, ով փրկեց քեզ»:

41.13-14 - «Քանզի ես եմ քո Տեր Աստվածը, որ բռնում եմ քո աջ ձեռքից և ասում քեզ՝ մի՛ վախեցիր, ես կօգնեմ քեզ...»: «Ես օգնեցի քեզ», - ասում է Աստված՝ Իսրայելի Սուրբը, ով փրկելու է քեզ»:

Փրկությունը վերագրվում է Աստծուն՝

\* Սուրբ Կույսի խոսքում. «Յոգիս կմեծարի Տիրոջը, և ցնձաց հոգիս իմ Աստված Փրկչով» (Ղուկ. 1.46):

\* Պողոս առաքյալի խոսքերում. «...մեր Փրկիչ Աստծո վարդապետությունը» (Տիտ. 2.10), և՛ «Իսկ երբ մեր Փրկիչ Աստծո քաղցրությունն ու մարդասիրությունը հայտնվեց» (Տիտ. 3.4):

\* Սբ Հուդա առաքյալի խոսքում. «Եվ Նրան, ով կարող է ձեզ անարատ ու անբիծ պահել... մեկ Աստծուն և մեր Փրկչին՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսին, փառք, մեծություն...» (24-25)<sup>21</sup>:

Փրկությունը միայն Աստծուն է պատկանում:

Սա հստակ հայտարարվում է Աստծո կողմից. «Ես եմ քո Տեր Աստվածը... և Ինձանից բացի ուրիշ Աստված չպիտի՝ ճանաչես, Ինձանից բացի ուրիշ փրկիչ չկա» (Օվսեե 13.4). «Ես Տերը չե՞մ. և չկա այլ Աստված, Ինձանից բացի, արդար և փրկիչ, և չկա մեկը, Ինձանից բացի» (Ես. 45.21). «Ես եմ Տերը, որ փրկեցի քեզ, քո Փրկիչը, Հակոբի Հզորը»<sup>22</sup> (Ես. 49.26, 60.16):

## **Բ) ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԸ**

1. Առաջին մարդ Ադամի մեղքը, որ հատուկ է բոլոր մարդկանց, մեղք է Աստծո դեմ:

Սրա պատճառն այն է, որ այդ մեղքն անհնազանդությունն է Աստծուն, Նրա հանդեպ սիրո և հարգանքի բացակայությունը, այլև Նրա թագավորության դեմ ապստամբություն, Նրա Աստվածության ու Սուրբ Հոգու գործին դիմադրություն և Նրա հանդեպ անհավատություն: Այսիսկ պատճառով Դավիթ մարգարեն սաղմոսում ասում է Աստծուն. «Քո հանդեպ

<sup>21</sup> Հունարեն տարածված բնագրերում այս համարը տարբերվում է դրա գրաբարյան թարգմանությունից և չի նշում Հիսուս Քրիստոսի անունը:

<sup>22</sup> Վերջին երկու համարների թարգմանությունն՝ ըստ եբրայական բնագրի:

միայն մեղանչեցի, Տե՛ր, և Քո առաջ չարիք գործեցի» (50.6): Հովսեփ Արդարն էլ, մեղքից փախուստ տալով, ասում է. «Ինչպե՞ս այդ մեծ չարիքը գործեմ և Աստծո առաջ մեղանչեմ» (Ծննդ. 39.9):

## 2. Բուլո՛ր մարդիկ մեղանչեցին:

«Ամենքը խոտորվեցին, միասին անպիտանացան. չկա մեկը, որ բարիք գործի, նույնիսկ մեկը չկա» (Սաղմ. 13.3): Իսկ «մեղքի վարձը մահն է» (Հռոմ. 6.23). «...և այդպես մահը բոլորի վրա տարածվեց, քանզի բոլորը մեղանչեցին» (Հռոմ. 5.12):

3. Քանի որ մեղքը գլխավորապես գործվում է Աստծո դեմ, իսկ Աստված անսահման է, ապա մեղքը նույնպես սահման չունի: Ուստի եթե պիտի լիներ մեղքի քավություն, այն պիտի անսահման լիներ, որպեսզի բավարարեր մինչև ժամանակների վախճանը բոլոր սերունդների բոլոր մարդկանց բոլոր մեղքերի թողությանը:

## 4. Աստծուց բացի ոչ ոք անսահման չէ:

Ուստի Աստված Ինքը պետք է մարմնանար ու դառնար մարդու որդի, որպեսզի լիներ մարդուն փոխարինող և ամբողջ աշխարհի մեղքերի քավություն (Ա Հովհ. 2.2):

## 5. Քավության այս գործը կատարվեց Տեր Հիսուս Քրիստոսի կողմից՝ աշխարհը փրկելու համար:

Եթե Քրիստոսն Աստված չլիներ, ապա Նրա քավությունը ոչ մի արժեք չէր ունենա, որովհետև այն իր անսահմանությունը վերցրեց Քրիստոսի աստվածության անսահմանությունից. ինչպես առաքյալն է ասում, «Նրա մեջ է բնակվում Աստվածության ամբողջությունը մարմնապես» (Կող. 2.9):





#### Գ) ՔՐԻՍՏՈՍՆ Է ԱՇԽԱՐՀԻ ՓՐԿԻՉԸ

Քրիստոսի ծննդյան ավետման ժամանակ հրեշտակն ասում է, որ Նա Հիսուս պիտի կոչվի, որովհետև «մեղքերից պիտի փրկի Իր ժողովրդին» (Մատթ. 1.21):

Նրա փրկությունը չի սահմանափակվում միայն Նրա ժողովրդով, որովհետև ասում է. «Չեկա *աշխարհը* դատելու, այլ *աշխարհը* փրկելու» (Հովհ. 12.47), և Նրա մասին ասվում է. «Գիտենք, որ Ռա է ճշմարտապես աշխարհի Փրկիչը» (Հովհ. 4.42): Ինքն Իր մասին ասում է նաև. «Մարդու Որդին եկավ կորածը փրկելու» (Մատթ. 18.11, Ղուկ. 19.10):

Սա ցույց է տալիս, որ ամբողջ աշխարհը մահվան դատապարտության տակ էր ընկած:

Նա եկավ մարդկանց փրկելու մեղքից:

\* Մատթ. 1.21-ում ասվում է, որ Նա եկավ մեղքերից փրկելու Իր ժողովրդին:

\* Ա Տիմ. 1.15. «Հիսուս Քրիստոսն աշխարհ եկավ՝ փրկելու մեղավորներին»:

\* Տիտ. 2.14. «Իր անձը տվեց մեզ համար, որպեսզի փրկի մեզ ամեն անօրենությունից»:

\* Գաղ. 3.13. «Քրիստոսը գնեց (*իմա՝ փրկեց - թրգմ.*) մեզ օրենքի անեծքից»:

Քրիստոսը հավիտենական կատարյալ փրկություն շնորհեց:

Առաքյալն ասում է, որ Քրիստոսն իբրև քահանայապետ «կարող է բոլորովին փրկել<sup>23</sup>» (Եբր. 7.25) և «դարձավ բոլոր Իրեն հնազանդվողների հավիտենական փրկության պատճառ» (Եբր. 5.9): Ուստի առաքյալը

<sup>23</sup> Ըստ գրաբարյան թարգմանության՝ «կենդանի առնել» (կենդանացնել)՝ «փրկել»-ու փոխարեն:

զարմանքով հարցնում է. «Ինչպե՞ս կազատվենք, եթե անփուլթ գտնվենք այդպիսի փրկության հանդեպ» (Եբր. 2.3):

Ընդհանրացնելով՝ ասենք, որ Քրիստոսը եկավ իբրև փրկիչ, ազատիչ և քավություն՝ փրկելու համար ամբողջ աշխարհը մեղքից, ազատելու բոլոր անօրենություններից ու օրենքի անեծքից և հավիտենական բացարձակ փրկություն շնորհելու:

Միայն Քրիստոսն է Փրկիչը:

Սբ Պետրոս առաքյալն այս մասին ասում է. «Չկա՛ փրկություն մեկ ուրիշով» (Գործք 4.12):

## Դ) Ի՞ՆՉ ԵՆՔ ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ ԱՅՍ ԱՄԵՆԻՑ

1. Ինչպես արդեն ասել ենք, աշխարհի փրկությունը մեղքից՝ պահանջում էր անսահմանափակ՝ բացարձակ քավություն, իսկ Աստուծոց բացի ուրիշ ոչ ոք անսահման չէ: Քանի որ Տեր Հիսուս Քրիստոսը կատարել է այս փրկագործությունը և այն ամբողջապես ավարտի հասցրել՝ փրկելով ամենքին բոլոր անօրենություններից և հավիտենապես ազատելով օրենքի անեծքից, ապա Նա անսահման է, ուրեմն և՛ Աստված:

Քրիստոսի փրկագործությունը մի հիանալի վկայություն է Նրա աստվածության. որովհետև եթե Նա Աստված չլիներ, ապա այդ փրկագործությունից ոչ մի օգուտ չէր լինի, և Նա չէր կարողանա փրկել ամբողջ աշխարհը բոլոր մեղքերից:

2. Աստված ասում է. «Ինձանից բացի ուրիշ Աստված չպիտի՛ ճանաչես, Ինձանից բացի ուրիշ *փրկիչ* չկա» (Օվսեե 13.4), այլև՝ «Չկա այլ Աստված, Ինձանից բացի, արդար և *փրկիչ*, և չկա մեկը, Ինձանից բացի» (Ես. 45.21):

Այսուամենայնիվ, ապացուցվեց, որ կա Փրկիչ՝ Հիսուս Քրիստոսը, միայն Նա է Փրկիչ, և փրկություն չկա մեկ ուրիշով (Գործք 4.12):

Ինչպե՞ս կարող են այս երկու պնդումները համաձայնել միմյանց: Աստված կամ Աստվածաշունչը ճիշտ չի՞ ասում: Քավ լիցի, Աստված ճշմարիտ է:

Սա չի կարող հասկացվել մեկ այլ կերպ, քան որ Աստված Քրիստոսն է, ուստի երբ ասում ենք, որ Աստված է Փրկիչը, միևնույն ժամանակ նկատի ունենք, որ Քրիստոսն է Փրկիչը:

3. Եթե Քրիստոսն Աստված չէ և Իր կյանքը տվեց բոլոր մարդկանց համար նրանց հանդեպ սիրուց, ճի՞շտ կլինի ասել, թե Քրիստոսը մարդկանց առավել սիրեց, քան Ինքն Աստված. կա՞ արդյոք այնպիսի էակ, որ մարդկության հանդեպ սիրո մեջ գերազանցի Աստծուն: Նույնիսկ Եհովայի վկաները չեն կարող նման բան ասել:

4. Եթե Քրիստոսն Աստված չէ և Իր կամքին հակառակ կատարեց փրկագործությունը՝ ասես հնազանդվելով տրված հրամանին, ապա փրկագործությունը կորցնում է իր գլխավոր սկզբունքը և հակասում Տեր Հիսուսի խոսքին. «Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր անձն է տալիս իր բարեկամների համար» (Հովհ. 15.13), այլև հետևյալ աստվածաշնչյան խոսքին. «Իր անձը տվեց մեզ համար, որպեսզի փրկի մեզ ամեն անօրենությունից» (Տիտ. 2.14):

5. Եթե Քրիստոսն Աստված չէ, այլ պարզապես Աստված Նրան է հանձնել փրկության այս գործի կատարումը՝ մարդկանց հանդեպ Իր սիրո պատճառով՝ ըստ այսմ. «Աստված այնքան սիրեց աշխարհը, որ Իր Միածին Որդուն տվեց...» (Հովհ. 3.16), ապա սա չի՞ նշանակում, թե Աստված աշխարհը սիրեց մի ուրիշի հաշվին: Սակայն այսպես լինել չի կարող, և նշված աստվածաշնչյան խոսքը ճիշտ չի հասկացվի, եթե չընդունենք, որ Աստված և Քրիստոսը նույն մեկն են, ինչպես Քրիստոսն Ինքն է ասում. «Ես

և Հայրս մեկ ենք» (Հովհ. 10.30): Այսպես մենք հասկանում ենք, որ Աստված Ի՛նքը փրկեց մարդկանց, և սա համաձայն է Աստվածաշնչին. «Եղբայրը չի փրկում, մարդը չի փրկում... Սակայն Աստված կփրկի իմ հոգին դժոխքի ձեռքից» (Սաղմ. 48.8, 16): Այսպիսով ճշմարտվում է նաև սբ Պողոս առաքյալի հետևյալ խոսքը. «Հուսացել ենք կենդանի Աստծուն, ով Փրկիչն է բոլոր մարդկանց» (Ա Տիմ. 4.10):

6. Եթե Քրիստոսն Աստված չլիներ, միևնույն է՝ մարդիկ Նրան երկրպագելու իրավունք կունենային իբրև Աստծո, քանի որ այդ Նա է, որ ոչնչից ստեղծել է նրանց, ինչպես հաստատում է Սուրբ Գիրքը. «Ամեն Ինչ Նրանով եղավ, և առանց Նրա չեղավ ոչինչ, որ եղավ» (Հովհ. 1.3):

Եհովայի վկաներն ընդունում են, որ Քրիստոսը մարդկանց Արարիչն է, որ նրանց գնել է Իր թանկագին արյամբ և սրբագործել Իր համար իբրև Իր սեփական ժողովուրդ (Ա Պետ. 1.18-19, Տիտ. 2.14): Եթե այդպես է, ապա ո՞վ կարող է մեղադրել մեզ՝ մի ժողովրդի, որը երկրպագում է իր իսկ Արարչին ու Փրկչին:

7. Մենք հաստատում ենք Քրիստոսի աստվածության հանդեպ մեր հավատի մեջ ո՛չ միայն այն պատճառով, որ սա ամենահիմնական վկայությունն է փրկագործության տեսության համար, այլև որ սա հաստատումն է Աստծո խոսքի. «Դժոխքի ձեռքից կազատեմ նրանց և մահվանից կփրկեմ նրանց» (Օվսեե 13.14):

Աստված փրկագործությունը վերագրում է Իրեն և այն իրականացրել է, իսկ մենք գիտենք, որ Աստված ճշմարիտ է, ինչպես որ Քրիստոսն է ճշմարիտ, երբ ասում է. «Ես և Հայրս մեկ ենք» (Հովհ. 10.30):

ՄԱՍ Գ

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

ՊԱՐԶՈՐՈՇ ՎԿԱՅՈՂ

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՏԵՂԻՆԵՐ

## ՔՐԻՍՏՈՍՆ ԱՍՏՎԱԾ Է

1) Հռոմ. 9.5. Սբ Պողոսը, հրեաների մասին խոսելով, ասում է. *«...որոնցից նաև Քրիստոսն է ըստ մարմնի, ով ամենքի վրա հավիտյանս օրհնյալ Աստված է. ամեն»*։

«Ամենքի վրա» բառերը ցույց են տալիս Նրա աստվածության զորությունը, որ Նա Աստված է ոչ թե մի մասնավոր ժողովրդի համար, ինչպես հեթանոսական աստվածությունները, այլ ամենքի, և «հավիտյանս» բառը ցույց է տալիս, որ Նրան վայել երկրպագությունը շարունակական է և Նրա աստվածությունը՝ անեզրական։

2) Հովհ. 20.28. Թովմասը Տեր Հիսուս Քրիստոսին կոչում է *«Տե՛ր իմ և Աստված իմ»*, և Տերն ընդունում է այսպես կոչվել և Թովմասին կշտամբում միայն տեսնելուց հետո հավատալու համար, մինչ պատշաճ էր, որ հավատար առանց տեսնելու։

3) Հովհ. 1.1. *«Սկզբից էր խոսքը, և խոսքն Աստծո հետ էր, և Աստված էր խոսքը»*։

Նույնիսկ Եհովայի վկաները չեն ժխտում Քրիստոսի աստվածությունը և Նրան Աստված, անգամ «հզո՛ր Աստված» համարում, սակայն նրանց սխալն այն է, որ հավատում են, թե Նա ոչ թե միակ Աստվածն է, այլ մի երկրորդ աստված՝ Եհովայից հետո, այսիսկ պատճառով «Եվ Աստված էր խոսքը» նախադասությունը (անգլ. ‘And the Word was God’) թարգմանում են ‘And the Word was a God’ (մի ինչ-որ աստված, աստվածներից մեկը)<sup>24</sup>։

Այնուամենայնիվ, թարգմանությունների առնչությամբ չբանավիճելու

<sup>24</sup> Ըստ քրիստոնեական ուղղափառ հավատքի՝ Սուրբ Երրորդության Երեք Անձերից (Հայր, Որդի և Սուրբ Հոգի) ոչ մեկը առավելություն կամ նվազություն չունի մյուսի հանդեպ, և ժամանակային առումով էլ նրանց մեջ առաջին և երկրորդ չկա՝ ոչ մեկը մյուսից առաջ կամ հետո չէ։ Նրանք ամեն ինչով հավասար են՝ ունենալով նույն աստվածային բնությունը, և տարբերվում են միայն անձնական հատկություններով, այսինքն՝ նրանով, որ միայն Հայրն է Հայր և ծնողը Որդու կամ բխեցնողը Սուրբ Հոգու, միայն Որդին է Որդի՝ անժամանակ ծնված Հորից, և միայն Հոգին է Հոգի, որ բխում է Հորից։ Եվ ունենալով միևնույն աստվածային բնությունը՝ այս երեք Անձերը ոչ թե երեք տարբեր աստվածներ են, այլ մեկ Աստվածություն (*«Երեք Անձինք և մի բնություն, մի Աստուածություն՝ զՔեզ խոստովանինք յաւէտ, Սուրբ Երրորդութիւն»*. սբ Ներսէս Շնորհալի)։

Իսկ Եհովայի վկաները, առանց որևէ հիմնավորման, Քրիստոսին համարում են Միքայել հրեշտակապետը, ով միևնույն ժամանակ «աստվածներից» մեկն է։

համար ասենք, որ նույնիսկ այդպիսի հավատը, թե Նա մի ինչ-որ աստված է, առաջնորդում է դեպի այն փաստը, որ Նա Աստված է, քանզի միայն մեկ Աստված կա: Աստծո կամոք, այս կետն առավել հանգամանորեն կքննարկենք ավելի հետո:

4) Մատթ. 1.23. Այստեղ հրեշտակը վկայակոչում է Եսայու մարգարեությունը. *«Ահա կույսը կհղիանա ու որդի կծնի, և նրա անունը կդնեն էմմանուել, որ թարգմանվում է «Աստված մեզ հետ» (Ես. 7.14):*

Այն իրողությունը, որ Քրիստոսն «Աստված մեզ հետ» է, պարզորոշ ընդունումն է Նրա աստվածության: Այս նշանակությունը բացատրված է Եսայի մարգարեի կողմից իր գրքի Թ գլխում:

5) Ես. 9.6. *«Որովհետև մեզ համար Մանուկ ծնվեց, մեզ Որդի տրվեց, Ուն իշխանությունն էր ուսերին է: Եվ Նրա անունը կոչվեց Մեծ խորհրդի հրեշտակ, Աքանչելի, Խորհրդակից, Չզոր Աստված, Իշխան, Չայր գալիք աշխարհի»:*

Չավանաբար այս համարի «Չզոր Աստված» անունն է, որ Եհովայի վկաներին մղել է ասելու, որ Քրիստոսը «հզոր Աստված» է և, այնուամենայնիվ, ըստ նրանց, Աստված չէ՝ մի անհասկանալի տրամաբանությամբ: Եվ սա չափազանց տարօրինակ է, քանի որ բերվող համարը գրված է Եսայու գրքում, ուր բազմաթիվ անգամ կրկնվում է «Ես եմ Տերը և ո՛չ՝ մի ուրիշը. Ինձանից բացի ուրիշ Աստված չկա» խոսքը (45.5, 6, 21, 22):

6) Եբր. 1.7-8. Սբ Պողոսը, բացատրելով, թե ինչպես է Տեր Չիսուսն առավել բարձր, քան հրեշտակները, ասում է. *«Իսկ հրեշտակների մասին<sup>25</sup> ասում է. «Ով էր հրեշտակներին ստեղծեց իբրև հոգիներ և էր սպասավորներին՝ իբրև կրակի բոց»: Մինչդեռ Որդուն ասում է. «Քո Աթոռը, Աստված, հավիտյանս հավիտենից է...»:*

<sup>25</sup> Գրաբարյան թարգմանությամբ՝ «առ հրեշտակսն» (հրեշտակներին)՝ «հրեշտակների մասին»-ի դիմաց:



Այս խոսքը, որ հստակ մատնանշում է Քրիստոսի աստվածությունը, Պողոս առաքյալը վերցրել է Սաղմ. 44.7-ից:

7) Ա Տիմ. 3.16<sup>26</sup>. *«Եվ հայտնապես մեծ է աստվածպաշտության խորհուրդը. Աստված հայտնվեց մարմնով, արդարացավ Յոզով, տեսանելի եղավ հրեշտակներին, քարոզվեց հեթանոսների մեջ, հավատով ընդունվեց աշխարհում և բարձրացավ փառքով»:*

Այս խոսքից պարզ երևում է, որ Քրիստոսը մարմնով հայտնված Աստված է: Սակայն Եհովայի վկաներն ուրիշ թարգմանություն են ներկայացնում այստեղ. «...մեծ է աստվածպաշտության խորհուրդը, որ հայտնվեց մարմնով...»<sup>27</sup>: Այսպիսի թարգմանությունը չի համապատասխանում այս համարի մնացած մասին, քանի որ ինչպե՞ս է հնարավոր, որ աստվածպաշտության խորհուրդը տեսանելի դառնա հրեշտակներին կամ փառքով բարձրանա: Այդ Քրիստոսն է, որ տեսանելի դարձավ հրեշտակներին, փառքով բարձրացավ երկինք, քարոզվեց հեթանոսների մեջ և հավատով ընդունվեց աշխարհում:

Այլև, քանի որ աստվածաբանական իրողությունները չեն կարող միայն մեկ աստվածաշնչյան համարի վրա հիմնվել, կա մեկ ուրիշ տեղի ևս, որ նման է հիշված՝ Ա Տիմ. 4 16 համարին, և դա հետևյալն է՝

8) Կող. 2.9. Սբ Պողոս առաքյալն ասում է Տեր Յիսուս Քրիստոսի մասին. *«Քանզի Նրա մեջ է բնակվում Աստվածության ամբողջությունը մարմնապես»*, ուր էական նշանակություն ունի «Աստվածության ամբողջությունը մարմնապես» հաստատումը:

Եթե Քրիստոսի մեջ է բնակվում Աստվածության ամբողջությունը, ապա Նա ոչ մի պակասություն չունի և Աստված է: Նրանից բացի ուրիշ Աստված

<sup>26</sup> Թարգմանված է ըստ հունարեն տարածված բնագրերի, որոնց են հետևում նաև շատ Եկեղեցիներում գործածվող թարգմանությունները: Սակայն հունարեն հնագույն ձեռագրերում, ինչպես և գրաբարյան թարգմանության մեջ, այս համարում «Աստված» բառի փոխարեն գործածված է «որ» հարաբերական շաղկապը (ըստ այդմ՝ «Եվ մեծ է աստվածպաշտության խորհուրդը, որ հայտնվեց մարմնով...»), և Եկեղեցու որոշ հայրեր (օրինակ՝ սբ Եփրեմ Ասորին) հենց այս ձևով են կարդացել և գործածել քննվող տեղին: Այնուամենայնիվ, նրանց կողքին կան նաև այնպիսիք (օրինակ՝ սբ Յովհան Ոսկեբերանը), ովքեր աստվածաշնչյան այս համարում նշում են «Աստված» բառը, ինչն առավել է համապատասխանում ամբողջական համարի բովանդակությանը: Եհովայի վկաներն Աստվածաշնչի իրենց թարգմանության մեջ հետևում են «Աստված» բառը չունեցող հունարեն բնագրերին:

<sup>27</sup> Տես նախորդ ծանոթագրությունը:

չկա, որովհետև ամբողջից դուրս ոչինչ չկա: Իսկ «մարմնապես» բառը ցույց է տալիս, որ Աստվածությունը մարմին է առել կամ, այլ խոսքով, հայտնվել է մարմնով՝ համաձայն նախորդ՝ Ա ՏԻՄ. 3.16 տեղիի և հաջորդի, որն է՝

9) Գործք 20.28. Պողոս առաքյալը, Եփեսոսի երեցներին կանչելով Միլետոս, նրանց ասում է. *«Ձգովյշ եղեք ձեր անձերին և ամբողջ հոտին, որի վրա Սուրբ Հոգին ձեզ տեսուչներ կարգեց՝ հովվելու Աստծո ժողովրդին, որին Նա փրկեց Իր արյամբ»:*

Հայտնի է, որ Աստված Հոգի է (Հովհ. 4.24), իսկ հոգին արյուն չունի: Նշանակում է՝ Աստված չէր կարող Եկեղեցին Իր արյամբ փրկել, եթե մարմին առած և մեզ համար Իր արյունը թափած չլիներ: Եվ սա համապատասխանում է «Աստված հայտնվեց մարմնով» խոսքին (Ա ՏԻՄ. 3.16):

## ՄԻԱՅՆ ՄԵ՛Կ ԱՍՏՎԱԾ ԿԱ

1) Ելք 20.3, հմնտ. Բ Օր. 5.7. Տասնաբանյա պատվիրաններից առաջինը վկայում է. *«Ուրիշ աստվածներ չունենան՝ Ինձանից բացի»:*

2) «Բ Օրենքի» գրքից այլ վկայություններ այս մասին.

4.35. *«Տերը՝ Նա՛ է Աստված, և Նրանից բացի ուրիշը չկա»:*

6.4. *«Լսիր, Իսրայել, մեր Տեր Աստվածը մեկ Տեր է»:*

3) Միաստվածության վարդապետությունը հստակ երևում է Եսայու մարգարեության<sup>28</sup> շատ խոսքերում, օրինակ՝

43.10-11. *«...Ես եմ: Ինձանից առաջ ուրիշ Աստված չի եղել և Ինձանից հետո էլ չի լինի: Ե՛ս, Ե՛ս եմ Տերը, և Ինձանից բացի ուրիշ փրկիչ չկա»:*

<sup>28</sup> Եսայու գրքից ստորև բերվող համարների թարգմանությունն՝ ըստ եբր. բնագրի:

Արժե նշել այստեղ, որ Եհովայի վկաներն իրենց անունը Եսայու այս գլխից են վերցրել. «*Դուք իմ վկաներն եք*», - ասում է Տերը<sup>29</sup>» (43.12, նաև՝ 43.10):

44.6. «*Ես եմ առաջինն ու ես եմ վերջինը, Ինձանից բացի ուրիշ Աստված չկա*»:

45.5-6. «*Ես եմ Տերը և ոչ՝ մի ուրիշը. Ինձանից բացի ուրիշ Աստված չկա: ...Ես եմ Տերը, և չկա մի ուրիշը*»:

45.21. «*Ես Տերը չե՞մ. և չկա այլ Աստված, Ինձանից բացի: ...Ես եմ Աստված, և չկա մի ուրիշը*»:

46.9. «*Ես եմ Աստված, և չկա մի ուրիշ Աստված: Եվ Ինձ նմանը չկա*»:

4) Օվսեե 13.4. «*Ես եմ քո Տեր Աստվածը... և Ինձանից բացի ուրիշ Աստված չպիտի՛ ճանաչես*»:

*Նորկտակարանյան վկայություններ  
Աստծո մեկ լինելու մասին*

5) Հռոմ. 3.30. «*Մեկն է Աստված*»:

6) Գաղ. 3.20. «*Աստված մեկն է*»:

7) Հակ. 2.19. «*Դու հավատում ես, որ մեկն է Աստված: Լավ էս անում. դներն էլ են հավատում ու սարսռում*»:

Սա նշանակում է, որ նույնիսկ դները, այդքան ցածր լինելով հանդերձ, շատ լավ գիտեն, որ Աստված մեկն է, և սարսռում են Նրա դատաստանից:

<sup>29</sup> Եբրայական բնագրում «Տեր» բառի փոխարեն հաճախ գործածվում է մի բառ՝ կազմված ՅԳԿԳ (יהוה) բաղաձայններից, որն, ըստ ոմանց, ընթերցվում է Եհովա, ըստ ուրիշների՝ Յահվե, սակայն իրենք՝ հրեաներն, այն չեն ընթերցում՝ սովորաբար փոխարինելով «Ադոնայ» («Տեր») բառով, քանի որ հուդայականության մեջ այդ սրբազան բառի արտասանությունն արգելված է: Հունարեն Յոթանասնից և մնացյալ հին թարգմանություններում ևս (ինչպես օրինակ՝ գրաբարյան) «Եհովա» երկբայական արտասանությամբ բառը թարգմանված է հիմնականում «Տեր» բառով:

Ժամանակը չի բավարարի հիշատակելու բոլոր այն տեղիները, որ ապացուցում են, որ Աստված միայն մեկն է: Ուստի հարկ է այստեղ նշել հետևյալը.

Սուրբ Գրքում հանդիպող աստվածներ ձևն ամենևին չի վերաբերում Աստծուն:

Երբեմն այս ձևով նկատի են առնվում հեթանոսական չաստվածները, ինչպես օրինակ՝ հետևյալ տեղիներում. «Մեծ է Տերը և օրհնյալ է հույժ, ահարկու է Նա բոլոր աստվածների վրա» (Սաղմ. 95.4-5). «Երկրպագե՛ք Նրան, բոլոր աստվածներ» (Սաղմ. 96.7)<sup>30</sup>:

«Աստվածներ»-ի գործածության աստվածաշնչյան մի ուրիշ օրինակ է հետևյալը. «Ես ասացի, թե աստվածներ եք կամ ամենքդ՝ Բարձրյալի որդիներ: Ահա դուք իբրև մարդիկ մեռնում եք և իբրև իշխաններից մեկը՝ ընկնում» (81.6-7): Անշուշտ նրանք, ովքեր մեռնում կամ ընկնում են, Աստված չեն, այլ սա պարզապես խորհրդանշական արտահայտություն է, որ զորություն և իշխանություն է ցույց տալիս, ինչպես երբ հրեաների որոշ թշնամիներ, վախենալով Ուխտի տապանակի վերադարձից, ասում են. «Ո՞վ կփրկի մեզ այն հզոր աստվածների ձեռքից: Այդ աստվածներն են, որ հարվածեցին Եգիպտոսը ամեն տեսակ հարվածներով» (Ա Թագ. 4.8): Նրանք մարդկանց ներկայացնում են իբրև «աստվածներ». սակայն սա ընդամենը խորհրդանշական կամ փոխաբերական մի արտահայտություն է:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

---

<sup>30</sup> Բերված տեղիները թարգմանված են ըստ եբրայական բնագրի (ուր հիշվող սաղմոսների թվահամարներն են համապատասխանաբար 96-ն ու 97-ը): Գրաբարյան թարգմանության մեջ «աստվածներ»-ը առաջին նախադասության մեջ թարգմանված է հենց «կուռք» բառով («Ահարկու է նա ի վերայ ամենայն կռոց»), իսկ երկրորդում համաձայն հունարեն Յոթանասնից թարգմանության «հրեշտակներ» բառով:

Քանի որ միայն մեկ Աստված կա, ինչպես վկայում են Աստվածաշնչի երկու Կտակարաններն էլ և քանի որ, դարձյալ համաձայն Աստվածաշնչի, Տեր Չիսուս Քրիստոսն Աստված է, ապա Քրիստոսն այդ մեկ Աստվածն է:

Եսայու գրքում Աստված ասում է. «Ինձանից բացի ուրիշ Աստված չկա», և նույն գրքում Աստվածային Ներշնչանքն ասում է, որ Քրիստոսը «հզոր Աստված» է: Ի՞նչ է սա նշանակում, եթե ոչ՝ որ այս երկուսը նույն մեկն են:

ՄԱՍ Դ

ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՍԻՆ ՎԿԱՅՈՒՄ ԵՆ

ՆՐԱ ԲԱՑԱՐՁԱԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ

ՈՒ ՀՐԱՇՔՆԵՐԸ

## **ՔՐԻՍՏՈՍԻ ԲԱՅԱՐՁԱԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Այն բանից հետո, որ խոսեցինք Քրիստոսի աստվածային հատկությունների՝ անժամանակության ու հավիտենականության, ամենուրեքության ու Հայր Աստծո Որդի լինելու և մնացածի մասին, որոնք ապացուցում են Նրա աստվածությունը և պատկանում միայն Նրան, այժմ անցնենք մի ուրիշ մասի հանգամանակից շարադրության՝ ապացուցելու համար Քրիստոսի աստվածությունը՝ այս անգամ ցույց տալով բազմաթիվ երեսների վրա տարածվող Նրա բացարձակ իշխանությունը: Մենք կխոսենք այն իշխանության մասին, որ Նա ունի արարչության՝ բնության, կյանքի և մահվան, հրեշտակների և դևերի վրա, ինչպես նաև օրենքի, արքայության և վերջապես՝ հենց Իր վրա:

## **ՔՐԻՍՏՈՍԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ**

Երկրային կեանքում Տեր Հիսուսն իշխանություն ուներ բնության վրա բոլոր առումներով: Նրա իշխանությունը տարածվում էր ծովի, քամու և ալիքների, բույսերի և կենդանիների, լույսի, երկրի և բլուրների, փակ դռների և բնության օրենքների վրա: Երբ Նա հրամայում էր, Նրան հնազանդվում էին իբրև իշխանություն ունեցողի, ինչը Նրա աստվածության ապացույց է:

Ստորև հանգամանորեն կքննարկենք այս ամենը:

### **1. Նրա իշխանությունը ծովի, քամու և ալիքների վրա**

ա) Մարկոս ավետարանիչն ասում է. «Մեծ մրրիկ բարձրացավ, որն ալիքները նավի մեջ էր շարտում, այնպես, որ նավը գրեթե լցվում էր»: Աշակերտները վախենում են, և Տերն ի՞նչ է այդժամ անում: Գրված է. «Վեր կացավ սաստեց քամուն ու ծովին՝ ասելով. «Դադարի՛ր, պապանձվի՛ր», և քամին դադարեց, ու մեծ խաղաղություն տիրեց»: Նավում գտնվողները

եղածից այնպես են ազդվում, որ ասում են. «Արդյոք ո՞վ է Սա, որ նույնիսկ ծովն ու քամին են Նրան հնազանդվում» (Մարկ. 4. 37, 39, 41):

Իսկապես, Աստծուց բացի ո՞վ է, որ իշխանություն ունի ծովի, քամու և ալիքների վրա: Նրանից բացի ո՞վ է, որ հրամայում է, և նրան հնազանդվում են: Սա մեզ չի՞ հիշեցնում սաղմոսի հետևյալ խոսքերը. «Տե՛ր Աստված զորությունների, ո՞վ է Քեզ նման, հզոր ես Դու, Տեր... Դու տիրում ես ծովի զորություններին և նրա ալիքների խռովությունը հանդարտեցնում» (Սաղմ. 88.9-10):

բ) Ծովի վրա ունեցած Նրա իշխանությունը ցույց է տրվում նաև սբ Յովհաննես ավետարանչի կողմից. «Մթնեց, սակայն Յիսուսը դեռ չէր եկել նրանց մոտ: Իսկ ծովը սաստիկ քամուց ալեկոծվում էր: Երբ շուրջ քսանհինգ կամ երեսուն ասպարեզ նավարկել էին, տեսան Յիսուսին *ծովի վրայով քայլելիս* ու նավին մոտենալիս և զարհուրեցին» (Յովհ. 6.17-19):

Սբ Մարկոսը նույնպես հիշատակում է այս հրաշքը՝ ասելով. «Երբ երեկո եղավ, նավը ծովի մեջտեղում էր, իսկ Ինքը՝ ցամաքում: Եվ տեսավ, որ նրանք հողմակոծ էին լինում, քանի որ քամին հանդիպակաց էր: Ուստի գիշերվա չորրորդ պահի մոտ եկավ նրանց մոտ՝ *քայլելով ծովի վրայով...* Երբ նրանք տեսան... աղաղակ բարձրացրին... Նա նրանց մոտ՝ նավը բարձրացավ, և քամին դադարեց...» (Մարկ. 6.47-51):

գ) Տեր Յիսուսը ոչ միայն Ինքն է քայլում ծովի վրայով, այլև սբ Պետրոսին այդպես քայլել տալիս: Պետրոսը, տեսնելով Տիրոջը ջրերի վրայով քայլելիս, ասում է. «Տե՛ր, եթե Դու ես, հրամայիր ինձ ջրերի վրայով գալ Քեզ մոտ»: Այնուհետև գրված է. «Պետրոսը նավից իջավ և ջրերի վրայով քայլելով՝ Յիսուսի մոտ գնաց: Բայց սաստիկ քամին տեսնելով՝ վախեցավ և երբ սկսեց ընկղմվել, աղաղակեց. «Տե՛ր, փրկի՛ր ինձ»: Յիսուսն իսկույն ձեռքը երկարեց, նրան բռնեց ու ասաց. «Թերահավատ, ինչո՞ւ երկմտեցիր»: Երբ նավը բարձրացան, քամին հանդարտվեց» (Մատթ. 14.28-32):



Այս ամենն իհարկե՛ նրա իշխանությամբ և նրա իսկ աստվածային  
զորությամբ է կատարվել: Ո՞ւր է ֆիզիկայից հայտնի ձգողականության ուժի  
օրենքը: Մի՞թե այսպիսի օրենքներն էլ նրա կողմից չեն ստեղծված, քանի  
որ «ամեն ինչ նրանով եղավ» (Յովհ. 1.3):

2. Չենք կարող մոռանալ նաև, թե ինչ տեղի ունեցավ Տեր Հիսուսի խաչելության ժամանակ:

Երկիրը շարժվեց, վեմերը ճեղքվեցին, և տաճարի վարագույրը պատռվեց (Մատթ. 27.51), այլև խավար պատեց ամբողջ երկրին ժամը վեցից մինչև ինը<sup>31</sup> (Մարկ. 15.33, Ղուկ. 23.44-45):

3. Քրիստոսի իշխանությունը երևում է նաև ձկան մեծ որսի երկու հրաշքների ժամանակ՝ առաջին անգամ, երբ առաքելության է կանչում Պետրոսին (Ղուկ. 5.4-7), և երկրորդ անգամ՝ Իր հարությունից հետո (Հովհ. 21.5-11): Այս հրաշքերը ցույց են տալիս Տիրոջ իշխանությունը նաև կենդանիների վրա. Նա գիտի, թե ձկները որտեղ են գտնվում և ինչպես նրանց հավաքել մի տեղ՝ ցանցերի մեջ որսացվելու համար:

4. Բնության վրա ունեցած Նրա իշխանությունը երևում է նաև, երբ Նա անհծում է թզենին, և այն անմիջապես չորանում է (Մատթ. 21.19): Սա ցույց է տալիս բույսերի վրա Նրա ունեցած իշխանությունը:

5. Այս իշխանությունը երևում է նաև նրանում, որ Նա Իր սոսկ հրամանով կամ հպմամբ, և կամ նույնիսկ միայն Իր կամենալով, բժշկում է հիվանդություններ, հատկապես անբժշկելիները, ինչպես օրինակ՝ բորոտություն, կուրություն, համրություն, խլություն, կաղություն և անդամալուծություն:

6. Բնության վրա Նրա ունեցած իշխանության մի ուրիշ օրինակ է Նրա համբարձումը երկինք, որը հիշատակված է Գործք 1.9, Մարկ. 16.19 և Ղուկ. 24.51 տեղիներում:

---

<sup>31</sup> Այսինքն կեսօրվա ժամը տասներկուսից մինչև ժամը երեքը:

7. Ուրիշ օրինակներ են փակ դռների միջով Նրա հայտնըվելը աշակերտների մեջ (Հովհ. 20.19) և Նրա հարությունը, երբ դուրս եկավ կնքված և քարով փակված գերեզմանից: Այս ամենը պատահեց Նրա իշխանությամբ և Նրա աստվածության զորությամբ:

8. Վերոնշյալներին կարելի է ավելացնել այն հրաշքերը, որ տեղի ունեցան Կույսից Նրա ծննդյան ժամանակ, և Նրա ծննդյան վայրը ցույց տալու համար աստղի՝ զարմանահրաշ կերպով շարժվելը:

### **ՔՐԻՍՏՈՍԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ՎՐԱ**

1. Եբրայեցիներին ուղղված թղթի առաջին երկու գլուխներում Պողոս առաքյալը բացատրում է, թե ինչպես է Տեր Հիսուսն առավել բարձր, քան հրեշտակները (Եբր. 1.4)՝ Նրա աստվածությունն ապացուցող վկայություններ բերելով, որոնցով նշում է Նրա Աստծո Որդի լինելը, Մեծության աջ կողմում նստելը, Հայր Աստծո՝ Նրան դիմելը՝ ասելով. «Քո աթոռը, Աստված, հավիտյանս հավիտենից է», և Նրա ոտքերի տակ ամեն ինչ հնազանդեցնելը:

2. Գրված է, որ Հիսուսի՝ անապատում փորձության ենթարկվելուց հետո «հրեշտակները սպասավորում էին Նրան» (Մարկ. 1.13). «Հրեշտակները մոտեցան ու սպասավորում էին Նրան» (Մատթ. 4.11):

3. Գրված է, որ հրեշտակները հնազանդվում են Նրան. «...Հիսուս Քրիստոսի, ով գնացել է երկինք և Աստծո աջ կողմում է, և հրեշտակները, իշխանություններն ու զորությունները հնազանդվում են Նրան» (Ա Պետ. 3.21-22): Ո՞վ է նա, ում հրեշտակները սպասավորում են և իշխանությունները, զորություններն ու հրեշտակները՝ հնազանդվում, եթե ոչ՝ միայն Աստված:

4. Նաև գրված է Նրա մասին. «Կերկրպագեն Նրան Աստծո բոլոր հրեշտակները» (Եբր. 1.6), այլև՝ «...որպեսզի Հիսուս Քրիստոսի անունով իջնի ամեն ծունր՝ *երկնայինների*, երկրայինների...» (Փիլ. 2.10): Անշուշտ հրեշտակները չեն կարող երկրպագել կամ ծնրադրել որևէ այլ մեկի առաջ, բացի Աստծուց:

«Հայտնության» մեջ էլ ասվում է, որ չորս կենդանիներն ու քսանչորս երեցներն ընկնում են Նրա առաջ՝ երգելով. «Արժանի ես գիրքը վերցնելու և դրա կնիքը բանալու» (5.9):

5. Շատ դեպքերում է ցույց տրվում, որ հրեշտակները Քրիստոսի՝ հրեշտակներն են և Նա՛ է նրանց ուղարկում:

ա) Մատթ. 13.41-42. «Մարդու Որդին *կուղարկի իր հրեշտակներին*, և Նրա արքայությունից կհավաքեն բոլոր գայթակղություններն ու նրանց, ովքեր անօրենություն են գործում, և վառ հնոցը կզցեն»:

Ո՞վ ունի իշխանություն Դատաստանի օրը հրեշտակներին ուղարկելու, եթե ոչ՝ միայն Աստված:

բ) Մատթ. 24.30-31. «Եվ կտեսնեն Մարդու Որդուն, որ գալիս է երկնքի ամպերի վրա, զորությամբ ու մեծ փառքով: Նա մեծաձայն փողով *կուղարկի իր հրեշտակներին*, և [տիեզերքի] չորս կողմից՝ երկնքի մի ծագից մյուսը, կհավաքեն Նրա ընտրյալներին»:

Այս երկու հատվածներից նկատում ենք, որ հրեշտակները Նրա՛ հրեշտակներն են, արքայությունը՝ Նրա՛ արքայությունը, և ընտրյալները՝ Նրա՛ ընտրյալները: Սա երբեք չի կարող վերաբերել մարդ էակին կամ որևէ այլ արարածի:

6. Հրեշտակները միայն Աստծուն են պատկանում, քանի որ նրանք Աստծո՛ հրեշտակներն են, ինչպես վկայում է Սուրբ Գիրքը:

\* (Սաղմ. 102.20). «Օրհնեցե՛ք Տիրոջը, *Նրա բոլոր՝ հրեշտակները*»:

\* (Սաղմ. 103.4, Եբր. 1.7). «Ով *Իր հրեշտակներին* ստեղծեց իբրև հոգիներ և *Իր սպասավորներին՝* իբրև կրակի բոց»:

\* (Սաղմ. 90.11, Մատթ. 4.6). «*Իր հրեշտակներին* պատվիրել է քեզ համար, որ քեզ պահեն քո բոլոր ճանապարհներին»:

\* (Հայտ. 3.5). «Ով հաղթի, սպիտակ կհագնի... և կխոստովանեն նրա անունը Իմ Հոր և *Նրա հրեշտակների առաջ*»:

\* (Դան. 6.22). «Իմ Աստվածն ուղարկեց *Իր հրեշտակին* և փակեց առյուծների բերանը»:

*Ուրեմն ինչպե՞ս կարող են հրեշտակները միաժամանակ լինել և՛ Աստծունը, և՛ Քրիստոսինը, եթե երկուսն էլ նույն Մեկը չեն:*

Մի ուրիշ լավ վկայություն կա «Հայտնության» գրքում. «Եվ սուրբ մարգարեների Տեր Աստվածն ուղարկեց *Իր հրեշտակին* ցույց տալու Իր ծառաներին, թե ինչ է շուտով կատարվելու» (22.6), և միևնույն գլխում ասվում է նաև. «Ես՝ Հիսուս, ուղարկեցի *Իմ հրեշտակին* վկայելու սա ձեզ» (22.16, համեմատիր Հայտ. 1.1-ի հետ):

## **ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԻՍՏՈՍԻՆԸ Է**

1. Արքայությունն Աստծունն է:

Տերունական աղոթքում մենք դիմում ենք երկնավոր Հորը՝ ասելով. «Թող Քո արքայությունը գա» (Մատթ. 6.10): Առաքյալն ասում է. «...Աստծուն, ով կանչեց ձեզ Իր արքայություն և փառքի մեջ» (Ա Թես. 2.12, տես նաև Հակ. 2.5): Մեր Տեր Հիսուս Քրիստոսն ասում է. «Իմ Հոր արքայու-

թյունը» (Մատթ. 26.29, 13.43<sup>32</sup>): «Աստծո արքայություն» արտահայտությունը գործածվում է բազմաթիվ տեղիներում, որոնցից են, օրինակ, Ղուկ. 13. 18, 20, 28, 29 համարները:

2. Սակայն Տեր Հիսուս Քրիստոսն ասում է, որ արքայությունն իրենն է:

Մատթ. 16.28 համարում, խոսելով երկրի վրա իր թագավորության տարածման մասին, Նա ասում է. «Ճշմարիտ են ասում ձեզ. այստեղ գտնվողներից ոմանք մահ չեն ճաշակի, մինչև չտեսնեն Մարդու Որդուն *իր արքայությամբ* եկած»: Եվ Մատթ. 13.41-42-ում ասում է. «Մարդու Որդին կուղարկի իր հրեշտակներին, և *Նրա արքայությունից* կհավաքեն բոլոր գայթակղություններն ու նրանց, ովքեր անօրենություն են գործում, և վառ հնոցը կզցեն»:

3. Առաքյալը, խոսելով Քրիստոսի երկնային արքայության մասին, ասում է. «Սա են վկայություն դնում Աստծո և Հիսուս Քրիստոսի առաջ, ով դատելու է ողջերին ու մեռյալներին *իր* հայտնությամբ և *արքայությամբ*<sup>33</sup>» (Բ Տիմ. 4.1):

Նույնիսկ աջակողմյան ավագակն է նշում Հիսուսի այս արքայությունը՝ ասելով. «Տե՛ր, հիշի՛ր ինձ, երբ գաս *Քո արքայությամբ*» (Ղուկ. 23.42):

4. Հավանաբար Դանիել մարգարեն այս երկնային արքայությանն է ակնարկում, երբ Քրիստոսի մասին ասում է. «Նրա իշխանությունը հավիտենական իշխանություն է, որ չի անցնում, և *Նրա թագավորությունը* չի կործանվելու» (Դան. 7.14): Այս եզրերը գործածվում են միայն Աստծո համար, ով ապրում է հավիտենապես, Բարձրյալն է և մնում է հավիտյան (Դան. 4.34, 6.26):

Հետևաբար, եթե արքայությունը Հորն է և միաժամանակ՝ Քրիստոսինը, սրանից ի՞նչ կարող ենք եզրակացնել:

<sup>32</sup> Մատթ. 13.43-ի գրաբար թարգմանության մեջ՝ «յարքայութեան *երկնից*» հունարեն տարածված բնագրերի «իրենց Հոր արքայության մեջ»-ի դիմաց:

<sup>33</sup> Համաձայն հունարեն տարածված բնագրերի՝ վերջին բառերը՝ «իր հայտնությամբ և *իր* արքայությամբ»:

*Կարող էր որևէ մարդ էակ իր թագավորության մասին այդպես խոսել՝ հոգևոր արքայություն երկրի վրա, հավիտենական արքայություն երկնքում, արքայություն, որ չի անցնում կամ կործանվում, արքայություն, ուր հրեշտակներն ի՞ր հրեշտակներն են և ընտրյալները՝ ի՞ր ընտրյալները (Մատթ. 24.31):*

## **ՔՐԻՍՏՈՍԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՎԵՐԻ ՎՐԱ**

1. Դևերը սարսափում էին Տեր Զիսուսից և Նրան տեսնելիս աղաղակում՝ վախենալով կործանումից կամ տանջանքից:

ա) Օրինակ՝ Կափառնաունի ժողովարանում պատահած մարդու միջի անմաքուր ոգին աղաղակում է՝ ասելով. «Թո՛ղ մեզ, ի՞նչ կա մեր և Քո միջև, Զիսու՛ս Նազովրեցի, եկար կործանելո՞ւ մեզ: Գիտենք Քեզ՝ ով ես, Աստծո Սո՛ւրբը» (Մարկ. 1.23-24, նաև՝ 3.11):

բ) Այն դիվահարը, որ իր մեջ բազմաթիվ դևեր ունենալու պատճառով կոչվում էր Լեգեոն և իր կատաղության պատճառով կապված էր շղթաներով ու երկաթե կապանքներով, տեսնելով Զիսուսին, ընկնում է Նրա առաջ և բարձր ծայնով ասում. «Ի՞նչ կա իմ և Քո միջև, Զիսու՛ս, Որդի՛ Բարձրյալ Աստծո, աղաչո՛ւն եմ Քեզ, ինձ մի՛ տանջիր» (Ղուկ. 8.28):

գ) Գերգեսացիների երկրում երկու դիվահար՝ այնքան կատաղի, «որ ոչ ոք չէր կարող անցնել այդ ճանապարհով», գերեզմաններից դուրս գալով, տեսնում են Զիսուսին և աղաղակելով ասում. «Ի՞նչ կա մեր և Քո միջև, Զիսու՛ս, Որդի՛ Աստծո, եկար ժամանակից շուտ տանջելո՞ւ մեզ» (Մատթ. 8.29): Եվ Տերը թույլ է տալիս, որ դևերը դուրս գան այդ մարդկանց միջից և մտնեն խոզերի երամակի մեջ:

## 2. Տերը սաստում էր դևերին և հրամայում դուրս գալ:

\* Կափառնաունուն Նա սաստում է պիղծ ոգուն՝ ասելով. «Պապանձվիր և ել դրա միջից» (Մարկ. 1.25):

\* Տերը հրամայում է, որ Լեգեոն անունով դիվահարի միջից դևերը դուրս գան (Ղուկ. 8. 29, 31):

\* Տերը սաստում է համր ոգուն՝ ասելով. «Չամր և խո՛ւլ ոգի, հրամայո՛ւմ եմ քեզ, ելի՛ր դրա միջից և այլևս չմտնե՛ս դրա մեջ» (Մարկ. 9.24):

\* Նա սաստում է մանկանը ցնցող ու թավալեցնող ոգուն. «Չիսուսը սաստեց պիղծ ոգուն, բժշկեց մանկանն ու նրան տվեց նրա հորը» (Ղուկ. 9.43):

Այս բոլոր դեպքերում չար ոգիները, այսինքն՝ դևերը, հնազանդվում են Տիրոջն ու անմիջապես դուրս գալիս: Ոչ մի մարդ այսպիսի իշխանություն ունենալ չի կարող:

## 3. Դևերը ոչ միայն Քրիստոսի հրամանով, այլև Նրա անունով էին դուրս գալիս:

Առաքյալն ասում է Քրիստոսին. «Տե՛ր, դևերն էլ են մեզ հնազանդվում Քո անունով» (Ղուկ. 10.17), որովհետև Նա Իր աշակերտներին իշխանություն էր տվել թշնամու ամբողջ զորության վրա (Ղուկ. 10.19):

Դևեր հանելու պարագային սա է տարբերությունը Տիրոջ և մարդ արարածների միջև. Տերը դրանք հանում է Իր հրամանով, մինչ առաքյալները՝ Տիրոջ իշխանությամբ և ոչ թե սեփական հրամանով: Ուստի Նա ասում է Իրեն հավատացողների մասին. «Իմ անունով կհանեն դևեր» (Մարկ. 16.17):

Մի լավ օրինակ է գուշակության ոգով բռնված աղախնի հետ պատահածը: Այդ աղախինը հետևում էր սբ Պողոս առաքյալին, ով, ինչպես պատմում է «Գործք առաքելոց»-ը, «շրջվեց և ասաց ոգուն. «Չիսուս



*Քրիստոսի անունով* հրամայում են քեզ դուրս գալ դրա միջից», և նա նույն ժամին դուրս եկավ» (Գործք 16.18):

4. Ինչպես վերոնշյալ օրինակներն են ցույց տալիս, դուրս հանվող դևերը հիշատակվում են որպես դևեր և պիղծ ոգիներ (այսեր): Տես նաև Մարկ. 7. 25, 26, 29, Ղուկ. 8.29-30, 9.42, 10. 17, 20 տեղիները:

## **ՔՐԻՍՏՈՍԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԵՆՔԻ ՎՐԱ**

1. Օրենքն Աստծո՛ր Օրենքն է, և պատվիրանները՝ Աստծո՛ր պատվիրանները:

Աստված Օրենքը տվել է հենց սկզբից, ապա հանձնել Մովսեսս մարգարեին (Ելք, գլ. 20):

2. Իսկ Տեր Չիսուս Քրիստոսը մեզ տվել է Նոր Ուխտի Օրենքը:

Նա այս Օրենքը տվել է Լեռան քարոզում, այլև նոր պատվիրանում, երբ առաքյալներին ասում է. «Նոր պատվիրան են տալիս ձեզ» (Չովի. 13.34), և Իր թողած բոլոր հոգևոր դասերում, ինչի մասին ասվում է. «Որպես իշխանություն ունեցող մեկն էր ուսուցանում և ոչ թե ինչպես նրանց դպիրները» (Մատթ. 7.29):

3. Տեր Չիսուսն ուներ Իր սեփական տեսակետը Չին Ուխտի Օրենքի վերաբերյալ:

Սա հստակ երևում է Նրա սքանչելի և ազդու այն խոսքում, որը Նա բազմիցս կրկնում է Լեռան քարոզում. «Լսել եք, որ առաջիններին ասվեց... Իսկ ես ձեզ ասում եմ...» (Մատթ. 5-րդ գլխի 21-22, 27-28, 31-32, 33-34, 38-39, 43-44):

Ուրիշ ոչ ոք երբեք չի կարող այսպիսի իշխանություն ունենալ Աստծո Օրենքի վրա, Աստծուց բացի:

4. Տեր Հիսուս Քրիստոսն ունի նաև օրինադիր իշխանություն:

\* *Շաբաթի վերաբերյալ*: Նա հայտարարում է, որ այդ օրը թույլատրելի է բարիք գործել<sup>34</sup>:

\* *Տասանորդի վերաբերյալ*: Նա սովորեցնում է, որ տասանորդը նվազագույն ընծան է<sup>35</sup> և պիտի կատարվի հետևյալ պատվիրանի հետ մեկտեղ. «Քեզանից խնդրողին տո՛ւր» (Մատթ. 5.42):

\* *Մեղանդանության և բաժանության վերաբերյալ* (տես Մատթ. 5.32):

5. Քրիստոսի օրինադիր իշխանությունը ցույց տվող ամենակարևոր արտահայտությունը թերևս շաբաթին վերաբերող Նրա խոսքն է. «Քանզի Մարդու Որդին նաև շաբաթի տերն է» (Մատթ. 12.8, Մարկ. 2.28, Ղուկ. 6.5): Եթե Քրիստոսը շաբաթի տերն է, ապա, քանի որ շաբաթը Տիրոջ օրն է, Քրիստոսն Աստված է:

6. Օրենքի մասին ոչ ոք երբեք չի համարձակվել խոսել այնպես, որ ասի. «Իսկ ես ասում եմ ձեզ...»: Նույնիսկ Մովսեսն ու մարգարեները գործածում էին «ասում է Տերը» նախադասությունը: Քրիստոսը չէր կարողանա այսպիսի իշխանությամբ խոսել, եթե իսկապես Աստված չլիներ:

## **ՔՐԻՍՏՈՍԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

### **ԿՅԱՆՔԻ ԵՎ ՄԱՅԿԱՆ ՎՐԱ**

1. Տեր Հիսուսը, խոսելով իր և կյանքի միջև աղերսի մասին, ասում է, որ հենց Ինքն է կյանքը:

<sup>34</sup> Մատթ. 12.12, տես նաև Մատթ. 12.1-12, Մարկ. 2.23-28, 3.1-5, Ղուկ. 6.1-10:

<sup>35</sup> Տես Մատթ. 23.23, Ղուկ. 11.42:

Ասում է. «Ես եմ հարությունն ու *կյանքը*. ով հավատում է Ինձ, թեկուզև մեռնի, կապրի: Եվ ամեն ոք, որ կենդանի է և հավատում է Ինձ, չի մեռնի հավիտյան» (Հովհ. 11.25-26), այլև՝ «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և *կյանքը*» (Հովհ. 14.6): Կարո՞ղ է որևէ մարդ արարած երբևէ ասել. «Ես եմ կյանքը, հարությունն ու ճշմարտությունը»:

2. Մահվան վրա Տիրոջ ունեցած իշխանության մասին առաքյալն ասում է. «Բայց այժմ հայտնվեց մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի հայտնության ժամանակ, ով *խափանեց մահը* և ավետարանի միջոցով լուսավորեց կյանքն ու անեղծությունը» (Բ Տիմ. 1.10): Տերն Ինքն էլ «Հայտնության» գրքում վկայում է Իր այս իշխանության մասին. «Ունեմ մահվան և դժոխքի բանալիները» (1.18): Այլուր ևս ասում է. «Եթե մեկն Իմ խոսքը պահի, հավիտյան մահ չի տեսնի» (Հովհ. 8.51):

3. Ո՞վ, եթե ոչ Աստված, ունի իշխանություն մահվան և կյանքի վրա: Բոլոր մարդիկ մահվան դատապարտության տակ էին, «...և այդպես մահը բոլորի վրա տարածվեց, քանզի բոլորը մեղանչեցին» (Հռոմ. 5.12), բայց Տեր Քրիստոսը խափանեց մահը:

4. Միայն Աստված ունի իշխանություն մահվան և կյանքի վրա:

Նա այս մասին ասում է «Բ Օրենքի» գրքում. «Տեսե՛ք, որ ես եմ, և չկա ուրիշ Աստված, Ինձանից բացի. ես եմ սպանում և ես կենդանացնում» (32.39)<sup>36</sup>: Գրված է նաև «Թագավորների Ա» գրքում. «Տերը մեռցնում է և կենդանացնում, իջեցնում դժոխք և հանում» (2.6):

Իսկ եթե, համաձայն Հովհ. 5.21-ի, այս իշխանությունը նաև Տեր Հիսուսի ձեռքում է՝ «Ինչպես Հայրն է մեռելներին հարություն տալիս և

<sup>36</sup> Թարգմանությունն՝ ըստ եբր. բնագրի:

կենդանացնում, այդպես էլ Որդին ուն կամենում է, կենդանացնում է», ապա Տեր Հիսուսն Աստված է:

## **ՔՐԻՍՏՈՍԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՆՑ ԻՐ ՎՐԱ**

1. Ոչ մի մարդ չի կարող իշխանություն ունենալ իր անձի և իր հոգու վրա, քանի որ Տերն է «բոլոր մարմինների հոգիների Տեր Աստվածը» (Թվեր 27.16) և ասում է. «Բոլոր հոգիներն իմն են» (Եզեկ. 18.4): Սբ Պողոս առաքյալն էլ ներկայացնում է Նրան որպես հոգիների Հայր՝ ասելով. «...որքան առավել պիտի հնազանդվենք հոգիների Հորը» (Եբր. 12.9):

2. Սակայն Տեր Քրիստոսն ասում է. «...Ես իմ անձը դնում եմ, որպեսզի դարձյալ այն վերցնեմ: Ոչ ոք այն ինձանից չի վերցնում, այլ ես ինքս եմ այն դնում. իշխանություն ունեմ այն դնելու և իշխանություն ունեմ դարձյալ այն վերցնելու» (Հովհ. 10.17-18):

Արդյոք կարո՞ղ է մեկը հայտարարել, թե այսպիսի իշխանություն ունի: Միայն Տեր Հիսուսն է այսպես խոսել, և սրա պատճառն այն է, որ Նա Աստված է:

3. Այս իշխանությունը երևում է Նրա հարությամբ: Որովհետև Նա ի՛նքը հարություն առավ և ոչ թե մի ուրիշը Նրան հարություն տվեց, ինչպես նրանց դեպքում, ովքեր հարություն էին առել դրանից առաջ: Նա դուրս եկավ կնքված գերեզմանից իր սեփական զորությամբ, առանց որևէ մեկի կողմից տեսնվելու:

## ՏԵՐ ՀԻՍՈՒՄԻ ՄԱՍԻՆ ՎԿԱՅՈՒՄ ԵՆ ՆՐԱ ՀՐԱՇՔՆԵՐԸ

1. Իբրև այս վկայության համար ներածություն՝ նշենք, որ Տեր Հիսուս Քրիստոսի հրաշքներն անհամար են: Բավական է մեջբերել սբ Հովհաննես առաքյալի խոսքերն իր Ավետարանի վերջին գլուխներում. «Ուրիշ բազմաթիվ նշաններ էլ գործեց Հիսուսն իր աշակերտների առաջ, որ չեն գրանցված այս գրքում» (20.30): «Ուրիշ շատ բաներ էլ Հիսուսն արեց, որոնք եթե մեկ առ մեկ գրվեին, կարծում եմ՝ աշխարհն էլ բավական չէր լինի տանելու այդ գրքերը, եթե գրվեին» (21.25):

Ղուկաս Ավետարանիչն ասում է. «Արևամուտին ամենքը, որ զանազան ցավերից տառապող հիվանդներ ունեին, նրանց բերում էին Նրա մոտ, և Նա նրանցից յուրաքանչյուրի վրա ձեռք դնելով՝ բժշկում էր նրանց» (Ղուկ. 4.41): Այստեղ հրաշքները գործվում են հավաքականորեն՝ բազմաթիվ մարդկանց համար:

Նույնը նշվում է Մարկոսի Ավետարանում. «Երեկոյան՝ երբ արևը մայր էր մտնում, Նրա մոտ բերեցին բոլոր հիվանդներին ու դիվահարներին, և ամբողջ քաղաքը դռների մոտ էր հավաքվել: Եվ *բժշկեց զանազան ցավերից տառապող բազում հիվանդների և բազում դևեր հանեց...*» (1.32-34):

Մատթեոս Ավետարանիչն էլ ասում է. «Հիսուսը շրջում էր գալիլեացիների բոլոր կողմերը, նրանց ժողովարաններում սովորեցնում, արքայության ավետարանը քարոզում և ժողովրդի մեջ եղած բոլոր հիվանդություններն ու ցավերը բժշկում: Նրա համբավը տարածվեց ամբողջ Ասորիքով, և զանազան ցավերից ու տանջանքներից տառապող բոլոր հիվանդներին, դիվահարներին, լուսնոտներին ու անդամալույծներին Նրա մոտ բերեցին, և բժշկեց նրանց» (4.23-24):

Կարո՞ղ ենք հաշվել այդ «բոլոր հիվանդություններն ու ցավերը», «բոլոր հիվանդներին, դիվահարներին, լուսնոտներին ու անդամալույծներին»: Ուստի Քրիստոսի աստվածությունն ապացուցելու

համար մենք կարող ենք դիմել Ավետարաններում գրանցված միայն սակավաթիվ հրաշքների:

## 2. Տեր Հիսուսի հրաշքները բազմազան էին:

Սրանց թվում են արարման հրաշքները, մեռյալներին հարություն տալը, ծովի վրա քայլելը, քամիներին, ալիքներին ու ծովին սաստելը, երկինք համբարձումը, երկնքից իջնելը, փակ դռնով մտնելը, կույսից ծնվելը, դևեր հանելը, կույրի աչքերը բանալը, անբուժելի հիվանդությունների բժշկումը, ինչպիսին են բորոտությունը, անդամալուծությունը, կաղությունը, համրությունը, խլությունը և այնպիսի հիվանդություններ, որոնք, օրինակ, 38 կամ 18 տարի էին ձգվել և բժիշկներն անկարող էին գտնվել դրանք բուժելու: Սբ Մատթեոսն այս ամենն ընդհանրացրել-ամփոփել է «բոլոր հիվանդություններն ու ցավերը», «բոլոր հիւանդներին, դիվահարներին, լուսնոտներին ու անդամալուծներին» արտահայտությունների մեջ:

Ո՞վ կարող է բոլոր հիվանդությունները բժշկել, իշխանություն ունենալ բնության և ամեն տեսակ ու ամեն քանակի դևերի վրա, եթե ոչ այս ամենի արարիչը՝ Աստված:

## 3. Տեր Հիսուսի հրաշքները գործվել են լոկ Նրա հրամանով կամ սաստով:

\* Պետրոսի զոքանչին բժշկելիս Նա «սաստեց ջերմությանը, և այն թողեց նրան: Եվ նա (*զոքանչը*) իսկույն վեր կացավ և սպասավորում էր նրանց» (Ղուկ. 4.40):

\* Անդամալուծին բժշկելիս Տերն ասում է նրան. «Վե՛ր կաց, մահիճդ վերցրու և տո՛ւն գնա» (Մարկ. 2.9): Նրա միայն հրամանը մարդուն առողջություն է պարգևում, ուստի նա վեր է կենում և վերցնում իր մահիճը:

\* Չորացած ձեռքով մարդուն բժշկելիս Տերն ասում է նրան. «Երկարեցրո՛ւ ձեռքդ», մարդն անում է սա, և նրա ձեռքը բժշկվում է (Ղուկ.

6.10): Հրաշքը կատարվում է լոկ Տիրոջ հրամանով, և այն հիվանդությունը, որ բժշկներն անկարող էին գտնվել բուժելու, բժշկվում է:

\* Պիղծ ոգիները հանելիս Տերը հրաման է տալիս կամ սաստում նրանց, և նրանք դուրս են գալիս: Ուստի Նրա մասին մարդիկ ասում են. «Իշխանությամբ սաստում է նաև պիղծ ոգիներին, և հնազանդվում են Նրան» (Մարկ. 1.27):

\* Տերն իր հրամանով նաև լռեցնում է ալիքներն ու հանդարտեցնում ծովը. «Վեր կացավ սաստեց քանուն ու ծովին՝ ասելով. «Դադարի՛ր, պապանձվի՛ր», և քանին դադարեց, ու մեծ խաղաղություն տիրեց» (Մարկ. 4.39):

Անշուշտ ոչ մի մարդ չի կարող հրաման տալ բնությանը, հիվանդություններին ու մարմնավոր պակասություններին, որովհետև սա աստվածային զորությանն է հատուկ, և դա է պատճառը, որ այս հրաշքները վկայողները խոստովանում են Հիսուսի աստվածությունը, ինչպես արդեն նշել ենք:

4. Տիրոջ հրամանի զորությունն ակնհայտ երևում է մեռելներին Նրա հարություն տալու ժամանակ:

\* Հայրոսի դստերը հարություն տալիս Տերը նրան ասում է. «Տալի՛թա, կո՛ւնի», որ թարգմանվում է. «Աղջի՛կ, քեզ եմ ասում, վե՛ր կաց»: Եվ աղջիկն անմիջապես վեր կացավ ու քայլեց» (Մարկ. 5.41-42): Քրիստոսի հրամանով մահն այստեղ խափանվում է և կյանքը՝ վերականգնվում:

\* Նայինի այրու որդուն հարություն տալիս «ասաց. «Պատանի՛, քեզ եմ ասում, վե՛ր կաց»: Մեռածը ելավ նստեց և սկսեց խոսել» (Դուկ. 7.14-15):

\* Ղազարոսին հարություն տալիս «բարձր ձայնով աղաղակեց և ասաց. «Ղազարո՛ս, վե՛ր կաց, դո՛ւրս եկ»: Եվ մեռածը ելավ կապված ոտքերով, երիզներով պնդված ձեռքերով ու վարչամակով պատված երեսով» (Հովհ. 11.43-44):

5. Երբեմն հրաշքը կատարվում էր պարզապես Նրա հպմամբ կամ ձեռք դնելու միջոցով:

\* Գրված է. «Նա նրանցից յուրաքանչյուրի վրա *ձեռք դնելով* բժշկում էր նրանց» (Ղուկ. 4.41):

\* Երբ Մաղքոսի՝ քահանայապետի ծառայի ականջը կտրվեց, Տերը «*դիպավ* ականջին և բժշկեց նրան» (Ղուկ. 22.51):

\* Երկու կույրերին բժշկելիս Տերը «*դիպավ* նրանց աչքերին, և իսկույն տեսան ու հետևեցին Նրան» (Մատթ. 20.34):

\* Երբ Բեթսայիդայում իր ձեռքը դրեց կույրի աչքերի վրա, դրանք բացվեցին ու տեսան (Մարկ. 8.25):

\* Երբ երկար տարիներ արյունահոսությունից տառապող կինը, որ իր ողջ ունեցվածքը ծախսել էր բուժվելու համար և հաջողության չէր հասել, պարզապես դիպավ Տիրոջ հագուստին, «իսկույն նրա արյան աղբյուրը ցամաքեց, և նա իր մարմնից հասկացավ, որ տանջանքից բժշկվեց» (Մարկ. 5.29):

6. Որոշ հրաշքներ գործվել են նույնիսկ առանց որևէ հրամանի, պարզապես Նրա կամենալով:

\* Երբ բորոտն ասում է Հիսուսին. «Տեր, եթե կամենաս, կարո՞ղ ես ինձ մաքրել», Տերն իր ձեռքը պարզում է և դիպչում նրան՝ ասելով. «Կամենում եմ, մաքրվի՛ր»: Եվ իսկույն բորոտությունը վերանում է (Մատթ. 8.2-3):

\* Գալիլեայի Կանա քաղաքում հարսանիքի ժամանակ, երբ ջուրը գինու է վերածվում, Նրա կողմից մի նոր նյութ է ստեղծվում պարզապես Նրա կամենալով, առանց որևէ հրամանի կամ նույնիսկ հպման, միայն Նրա ներքին ցանկությամբ (Հովհ. 2.7-9):

7. Տիրոջ բոլոր հրաշքները կատարվել են առանց աղոթքի:



Տերն Իր հրաշքները գործում է սեփական զորությամբ, որն Իր աստվածության զորությունն է: Միակ հրաշքը, որ կատարվում է Հորը դիմելուց հետո, Ղազարոսին հարություն տալն է: Սրա պատճառը, հավանաբար, այն է, որ Նա կամենում էր սատանայից ծածկել Իր աստվածությունը, քանի որ միայն մի քանի օր էր մնում մինչև Իր խաչելությունը: Նաև հնարավոր է, որ աղոթքին հաջորդած Իր այս միակ հրաշքով Նա մեզ սովորեցնում է աղոթել, և թերևս սա պատասխան է Նրա թշնամիներին, ովքեր Նրան մեղադրում էին հրաշքները սատանայի զորությամբ գործելու մեջ: Այնուամենայնիվ, Ղազարոսին հարություն տալիս Տերը դարձյալ հրաման է տալիս. «Ղազարո՛ս, վե՛ր կաց, դո՛ւրս եկ» (Հովհ. 11.43):

Բազմությանը կերակրելու հրաշքի նկարագրության մեջ գրված է, որ Նա նայում է դեպի երկինք, օրհնում ու գոհանում, այսինքն՝ շնորհակալություն հայտնում (Մարկ. 6.41, Մատթ. 15.36): Սակայն նմանատիպ երկու հրաշքներից և ոչ մեկում չի նշված, թե Նա աղոթում է: Ինչ վերաբերում է դեպի երկինք նայելուն և ուտելուց առաջ օրհնելուն, դա կարող է մեզ ուսուցանելու նպատակով կատարված լինել:

8. Նրա անունով կատարված շատ հրաշքներ են հիշատակվում Նոր Կտակարանում:

Մի այսպիսի օրինակ է «Գեղեցիկ» կոչվող դռան մոտ նստող և ողորմություն խնդրող կաղ մարդու բժշկությունը: Սբ Պետրոսն ասում է նրան. «Արժաթ ու ոսկի չունեն, բայց ինչ որ ունեն, ա՛յն կտամ քեզ. Նազովրեցի Հիսուս Քրիստոսի անունով վեր կաց ու քայլի՛ր» (Գործք 3.6): Սա պարզ երևում է նաև հենց Տիրոջ խոսքում. «Հավատացողներին կհետևեն հետևյալ նշանները՝ Իմ անունով կհանեն դևեր...» (Մարկ. 16.17):

9. Սա՛ է տարբերությունը անձամբ Տեր Հիսուսի կողմից կատարված հրաշքների և նրանց միջև, որոնք կատարվել են Նրա առաքյալների ու սրբերի կողմից:

Տերը հրաշքները գործում է Իր սեփական զորությամբ, մինչ Նրա աշակերտները՝ Նրա անունով կամ Նրանից ստացած զորությամբ, այսինքն՝ Նրա՛ իշխանությամբ ու զորությամբ: Ուստի Պողոս առաքյալն ասում է. «Կարող եմ ամեն ինչ Քրիստոսով, ով զորացրեց ինձ» (Փիլ. 4.13):

Այս իշխանությունն աշակերտներին տվել է Տերը. «...նրանց իշխանություն տվեց պիղծ ոգիների վրա՝ հանելու նրանց և բժշկելու ամեն ցավ ու ամեն հիվանդություն» (Մատթ. 10.1): Նա տասներկու առաքյալներին ասում է. «Հիվանդներին բժշկե՛ք, բորոտներին սրբե՛ք, դևերը հանե՛ք, ձրի առաք և ձրի՛ տվե՛ք» (Մատթ. 10.8): Եվ յոթանասուն աշակերտներին էլ ասում է. «Ահա ձեզ իշխանություն տվեցի կոխտելու օձերը, կարիճները և թշնամու ամբողջ զորությունը» (Ղուկ. 10.19):

10. Տեր Հիսուսը մատնանշում է Իր հրաշագործությունները որպես միջոց, որ կարող է մարդկանց առաջնորդել Իր հանդեպ հավատին:

Նա ասում է. «Հավատո՞ւմ եք Ինձ, որ Ես Հոր մեջ եմ, և Հայրը՝ Իմ: Իսկ եթե ոչ՝ գոնե գործերի՛ համար հավատացեք Ինձ» (Հովհ. 14.11): Հրեաներին էլ ասում է. «Եթե Իմ Հոր գործերը չեն անում, մի՛ հավատացեք Ինձ: Իսկ եթե անում են, թեկուզ Ինձ էլ չհավատաք, գործերի՛ն հավատացեք, որպեսզի իմանաք և ճանաչեք, որ Հայրն Իմ մեջ է, և Ես՝ Հոր» (Հովհ. 10.37-38):

Տիրոջ խոսքը, որ Ինքը կատարում է Իր Հոր գործերը, նշանակում է, որ Ինքը կատարում է հենց Աստծո գործերը, և սա էլ Նրա աստվածության պարզորոշ ապացույց է: Ահա թե ինչու է Նա մեղադրում հրեաներին՝ ասելով. «Եթե կատարված չլինեին այն գործերը, որոնք ուրիշ ոչ ոք չկատարեց, նրանք մեղք չէին ունենա» (Հովհ. 15.24):

Այս գործերով, որոնք ուրիշ ոչ ոք չի արել, նկատի են առնվում հենց Աստծո գործերը, ինչի մասին Քրիստոսն Ինքն է ասում (Հովհ. 10.37): Այսպիսով, Նա հայտարարում է, որ Իր հրաշագործություններն Իր աստվածության ապացույց են:

11. Տեր Հիսուսը երանության է արժանացնում Իր հրաշքների հանդեպ հավատը և այդ հավատն ունենալու կոչն անում:

Նա երանության է արժանացնում հարյուրապետի հավատը, երբ սա խնդրում է Նրան. «Ասա՛ խոսքով, և ծառաս կբժշկվի» (Մատթ. 8.8): Հարյուրապետի ծառան անդամալույծ պառկած էր տանը և սաստիկ տանջվում էր. Տերը խոստանում է բժշկել նրան, և նա հենց նույն ժամին բժշկվում է: Տերը հիացնումնքով ասում է. «Ճշմարիտ են ասում ձեզ, նույնիսկ Իսրայելում երբեք այսպիսի հավատ չգտա» (Մատթ. 8.10): Հարյուրապետի հավատը զարմանք է պատճառում, որովհետև նա հավատում է, որ Քրիստոսի նույնիսկ մի խոսքը կարողություն ունի իր ծառային բժշկելու՝ հեռավորության վրա, նույնիսկ առանց նրան դիպչելու կամ ձեռքը նրա գլխին դնելու՝ օրհնության համար: Տիրոջ միայն հրամանը բավական է: Այս պատճառով էլ Տերը երանության է արժանացնում այսպիսի հավատը և այն հաստատում ծառային բժշկելով:

12. Տեր Հիսուսի հրաշքներն ապացուցում են, որ ինչ որ Նա ասում է Իր աստվածության մասին, ճշմարիտ է:

Տեր Հիսուսը կատարում է շատ գերբնական, արտասովոր հրաշքներ և միևնույն ժամանակ ասում է. «Ես և Իմ Հայրը մեկ ենք» (Հովհ. 10.30), «Ով տեսավ Ինձ, տեսավ Հորը» (Հովհ. 14.9), ունի մեղքերին թողություն տալու իշխանություն (Մարկ. 2.10), Միածին Որդին է (Հովհ. 3.16,18), համբարձվում է երկինք, իջել է երկնքից և երկնքում է (Հովհ. 3.13) և ամպերով

գալու է և ուղարկելու իր հրեշտակներին՝ հավաքելու իր ընտրյալներին (Մատթ. 24.30-31):

Եթե Նրա խոսքերը ճշմարիտ չլինեին, Նա չէր կարողանա հրաշքներ գործել: Եթե Նա Աստծո գործունեւն ու հատկութիւնները խաբէբայորեն վերագրած լիներ իրեն, դրանից հետո պիտի չկարողանար հրաշքներ գործել:

13. Պիտի չմոռանանք, որ Տեր Զիսուսի հենց կյանքը մի եզակի հրաշք է:

\* Նա ծնվել է կույսից (Ես. 7.14)՝ պատմության մեջ մի եզակի դեպք, որ երբեք չի կատարվել դրանից առաջ և ոչ էլ դարձյալ կպատահի:

\* Նրա ծնունդը ծանուցվում է մի անսովոր աստղի միջոցով (Մատթ. 2.2-10):

\* Նա երկրպագվում է Արևելքի մոգերի կողմից (Մատթ. 2.11):

\* Մանուկ տարիքում զարմացնում է հրեա օրենստեսույցներին իր իմաստությամբ ու պատասխաններով (Ղուկ. 2.47):

\* Նրա մկրտությունը մի հրաշք էր (Մատթ., գլ. 3):

\* Զրաշք էր Թաբոր լեռան վրա Նրա պայծառակերպությունը (Մարկ. 9.2-8):

\* Զրաշք էր մեռելների միջից Նրա հարությունը կնքված գերեզմանի առկայությամբ և առանց որևէ մեկի կողմից նկատվելու (Մատթ., գլ. 28):

\* Զրաշք էր հարությունից հետո Նրա հայտնվելը շատերին (Մարկ., գլ. 16):

\* Զրաշք էր փակ դռնով անցնելով Նրա հայտնվելն աշակերտներին (Յովհ. 20.19):

\* Եվ վերջապես հրաշք էր Նրա համբարձումը երկինք և Աստծո աջ կողմում նստելը (Մարկ. 16.19, Ղուկ. 24.51, Գործք 1.9, 7.55):

Նրա երկրային ամբողջ կյանքը հրաշքների մի շարք էր, որը ցույց է տալիս Նրա մարմնանալու ժամանակ մարդկությանը միացած Նրա աստվածությունը, ինչն այսպես մնաց և դրանից հետո՝ հավիտենապես:

Տես նաև Տիրոջ հրաշքներին վերաբերող երկու հարցի<sup>37</sup> իմ տված պատասխանները «Այսքան շատ տարիներ մարդկանց խնդիրների հետ» գրքիս Բ հատորում:

---

<sup>37</sup> Ներկա թարգմանության հավելվածում ներկայացնում ենք նշված գրքի Բ մասի երկու հարցերից միայն մեկի (հարց 28) պատասխանը, քանի որ մյուսը, որ վերաբերում է նրան, թե արդյոք Տեր Յիսուսի հրաշքներն աղոթքով են կատարվել, թե ոչ, արդեն քննարկվել է վերը՝ 7-րդ կետում:

## ՀԱՎԵԼՎԱԾ

«Այսքան շատ տարիներ մարդկանց խնդիրների հետ»

Հատոր Բ

### Հարց 28

Արդյո՞ք Քրիստոսի հրաշքները գործվել են ներշնչման միջոցով

Հարց: Ի՞նչ է Ձեր կարծիքն այն մասին, որ ասում են, թե Քրիստոսի հրաշքները կատարվել են ներշնչման միջոցով:

Պատասխան: Ներշնչումը մեկի սրտի ու մտքի վրա ազդելն է՝ ինչ-որ բանում համոզելու համար, սակայն՝

1. Կարո՞ղ է որևէ կապ լինել ներշնչման և մեռելների հարության միջև:

Մարդ կարող է ներշնչել կենդանի մարդուն և ազդել նրա սրտի ու մտքի վրա, բայց չի կարող որևէ ազդեցություն ունենալ մեռածի վրա, մինչդեռ Տեր Հիսուսը հարություն է տվել մեռելներին, ինչպես՝ Հայրոսի դստերը (Մարկ. 5.41-42), Նայինի այրու որդուն (Ղուկ. 7.11-17) և Ղազարոսին (Հովհ. 11.17-44), և այս ամենն անշուշտ ներշնչանքի հետ ոչ մի կապ չունի: Նայինի այրու որդին Քրիստոսի ձեռքով հարություն է առնում, երբ պատգարակով հուղարկավորվում է, իսկ Ղազարոսը՝ մահվանից չորս օր հետո, գերեզմանում, ուրիշների ներկայությամբ: Ներշնչանքը տարածվել է նաև այդտեղ գտնվողների կամ մեռելին հուղարկավորողների՞ վրա, թե մտել է գերեզման կամ մեռելի պատգարակի մեջ՝ նրան ներշնչելու համար:

## 2. Առնչություն չկա ներշնչման և հոգեկան հիվանդի կամ դիվահարի միջև:

Ինչպե՞ս կարող է մեկը ներշնչել հոգեկան հիվանդին, ով չի կարող կառավարել իր միտքն ու զգացմունքները, կամ դիվահարին, ով կառավարվում է դևերով:

Տեր Ջիսուսը բժշկել է բազմաթիվ հոգեկան հիվանդների, ինչպիսին էր, օրինակ, կույր և համր դիվահարը (Մատթ. 12.22) գաղարացիների երկրի հիվանդը (Լեգեոն անունով), որ բռնված էր դևերով, միշտ կապանքների ու շղթաների մեջ էր և բազմաթիվ դևերից անապատ էր քշվում (Ղուկ. 8.29-32): Կարո՞ղ է այսպիսի մարդը ներշնչվել արտաքին ազդեցություններից:

## 3. Առնչություն չի կարող լինել ներշնչման և պիղծ ոգիներ հանելու միջև:

Պիղծ ոգին չի կարող ներշնչվել: Մի զարմանալի օրինակ է հետևյալ հրաշքը. պիղծ ոգի ունեցող մեկն աղաղակում է, Տեր Ջիսուսը նրան սաստում է՝ ասելով. «Պապանձվի՛ր և ե՛լ դրա միջից», և ոգին դուրս է գալիս: Ժողովուրդը զարմանում է, որովհետև «իշխանությամբ սաստում է նաև պիղծ ոգիներին, և հնազանդվում են Նրան» (Մարկ. 1.25-27): Ի՞նչ ներշնչման մասին կարող է խոսք լինել այստեղ: Այս հրաշքը կատարվում է Կափառնաունի ժողովարանում՝ բոլոր մարդկանց աչքի առաջ, և նրանք զգում են Քրիստոսի զորությունն ու իշխանությունը: Նույնը պատահում է, երբ Տերը բժշկում է համրության դև ունեցողին: Նա հանում է դևը, և մարդը խոսում է, ուստի ժողովուրդը սքանչանում է՝ ասելով. «Երբեք այսպիսի բան չի պատահել Իսրայելում» (Մատթ. 9.33):

Բժշկության մի ուրիշ հրաշքում Տեր Քրիստոսը սաստում է պիղծ ոգուն՝ ասելով. «Չամր և խո՛ւլ ոգի, հրամայո՛ւմ են քեզ, ելի՛ր դրա միջից և այլևս չմտնե՛ս դրա մեջ» (Մարկ. 9.24), և հենց նույն ժամին մարդը բժշկվում է (Մատթ. 17.17):

4. Առնչություն չի կարող լինել նաև ներշնչման և բնության՝ ծովի, քամու և ծառերի միջև:

Եթե նույնիսկ հնարավոր լինի ներշնչել բանական արարածներին, ապա բացարձակապես անհնար է ներշնչել անշունչ և անբան արարածներին: Օրինակ՝ թզենին, որ Ավետարանում խորհրդանշում է կեղծավորությունը, անիծվում է Տեր Հիսուսի կողմից՝ «Թող այլևս հավիտյան ոչ ոք քեզնից պըտուղ չուտի» (Մարկ. 11.14), և անմիջապես չորանում է (Մատթ. 21.19): Արդյո՞ք այն չորանում է ներշնչման հետևանքով: Եվ երբ ծովում մեծ փոթորիկ է բարձրանում և նավն՝ ալիքներով ծածկվում, Տեր Հիսուսը, գրված է, «վեր կացավ սաստեց քամուն ու ծովին՝ ասելով. «Դադարի՛ր, պապանձվի՛ր», և քամին դադարեց, ու մեծ խաղաղություն տիրեց» (Մարկ. 4.39): Սա կատարվել է ներշնչմամբ, թե բնության վրա Քրիստոսի ունեցած իշխանությամբ: Թող աշխարհի մեծագույն հոգեբանները ներշնչման միջոցով հանդարտեցնեն մրրկածուկի ծովը:

*Բացի անշունչ բնության հետ կատարված հրաշքներից, գիտենք ձկների հետ Քրիստոսի կատարած երկու հրաշքների մասին:*

Առաջինը տեղի է ունենում Պետրոս առաքյալի հետ նախքան առաքելության նրա կանչվելը: Նա ամբողջ գիշեր չի կարողանում որևէ ձուկ որսալ, բայց Տեր Հիսուսի խոսքի վրա ձկները շատանում ու լցվում են երկու նավակներն էլ, այնպես որ սրանք սկսում են ձկան առատությունից ընկղմվել (Ղուկ. 5.1-7): Իսկ երկրորդ հրաշքը տեղի է ունենում Տիրոջ հարությունից հետո (Հովհ. 21.10-14): Անտարակույս, ներշնչանքի ազդեցության տակ չէ, որ ձկներն իսկույն գալիս-լցվում են ցանցի մեջ, այլ Քրիստոսի խոսքով:

5. Ներշնչում չի կարող լինել մարդուն հեռավորության վրա բժշկելու դեպքում:



Տեր Յիսուսը բժշկում է քանանացի կնոջ դստերը նրա մոր խնդրանքով: Այդ դուստրն իր տանը որևէ ներշնչման չէր ենթարկվել: Տերը (փառք Նրան) ասում է քանանացի կնոջը. «...Գնա՛, դեռ դուրս եկավ քո դստեր միջից» (Մարկ. 7.29): Եվ կինը գալիս է տուն և տեսնում, որ դեռ դուրս է եկել և դուստրը պառկած է մահճակալին: Նմանապես նաև պալատականին է Տերն ասում. «Գնա՛, որդիդ կենդանի է» (Յովհ. 4.50), և հենց նույն ժամին որդին բժշկվում է, թեև տանն էր և ներշնչման չէր ենթարկվում: Այդպես նաև հարյուրապետի ծառան է հեռավորության վրա բժշկվում Քրիստոսի խոսքով (Մատթ. 8.13):

6. Արարման գործերը նույնպես չեն կարող ներշնչմամբ կատարվել:

Չորս հազար մարդկանց (չհաշված կանանց և երեխաներին) կերակրումը յոթ հացով ու մի քանի ձկով (Մատթ. 15.32-38) չէր կարող ներշնչմամբ կատարվել: Դեռ նույնիսկ յոթ կողով մնացորդ է հավաքվում այս կերակրից, ինչը նշանակում է, որ նոր նյութ էր ստեղծվել: Նաև չէր կարող ներշնչմամբ տեղի ունեցած լինել մյուս նմանատիպ հրաշքը՝ կանանց ու երեխաներին չհաշված՝ հինգ հազար մարդու կերակրումը հինգ հացով ու երկու ձկով: Նույնիսկ եթե համարենք, որ այս մարդիկ ներշնչման հետևանքով հագեցման զգացումն են ունեցել, ապա ինչպե՞ս կերակրից մնաց տասներկու կողով մնացորդ (Մատթ. 14.20). կերակրի այսպիսի քանակությունն որտեղի՞ց եկավ, եթե չէր ստեղծվել հրաշքով և ոչ թե ներշնչմամբ:

*Նույնը պատահում է նաև ի ծնե կույրին տեսողություն շնորհելու ժամանակ:*

Տեր Յիսուսը նրա համար ստեղծում է աչքեր՝ մի բան, որ չէր կարող կատարվել ներշնչման արդյունքում, մանավանդ որ այն միջոցը, որ Տեր Յիսուսն օգտագործում է այս հրաշքը կատարելիս, կարող էր հակառակ ազդեցությունն ունենալ: Տերը կավ է դնում կույրի աչքերին, իսկ սա կարող էր կուրացնել նույնիսկ առողջ աչքերը: Այնուհետև կարգադրում է այդ

մարդուն գնալ և լվացվել Սիլովամի ավազանում (Հովհ. 9.6-7), իսկ այսպիսի լվացումը պիտի որ մաքրեր կավը և ոչ թե հյուսվածք ու նյարդեր ունեցող աչք ստեղծեր: Կավը չի կարող միջոց լինել մարդուն տեսողությունը ներշնչելու համար:

*Այդպես նաև հրաշքով ջուրն է գինու վերածվում:*

Տերը ստեղծում է մի նյութ, որ չկար մինչ այդ, որովհետև ջուրը չունի գինու բաղադրիչները: Տերը սա անում է առանց որևէ գործողություն կատարելու: Նա միայն ասում է. «Թակույկները ջրով լցրեք», ապա՝ «Այժմ վերցրեք և բերեք...» (Հովհ. 2.7, 8): Այսպիսով, նոր նյութ է ստեղծվում Տիրոջ միայն կամենալով: Ոչ մի ներշնչանք էլ այստեղ լինել չէր կարող, որովհետև գինուց խմած հյուրերը տեղի ունեցածից բնավ տեղյակ չէին. գործողությունը կատարվել էր ծառաների կողմից և ոչ թե հյուրերի: Ուրեմն ո՞ր է այստեղ ներշնչանքը:

7. Հաշմությունների բժշկությունը չի կարող ներշնչման արդյունք լինել:

Ներշնչմամբ կույրը չի կարող տեսողություն ստանալ, կամ կաղը՝ ոտք ձեռք բերել, համրն ու խուլը՝ բժշկվել: Տեր Հիսուսը շատ այսպիսի հրաշքներ է գործել: Նա բուժում է կույր Բարտիմեոսին (Մարկ. 10.52) և նրա հետ եղած մեկ ուրիշ կույրի (Մատթ. 20.34), կույր և համր դիվահարին (Մատթ. 12.22) և երկու կույրերին (Մատթ. 9.27-31): Նա բժշկում է խուլերին ու համրերին (Մարկ. 7.31-37, Մատթ. 9.32-33, Ղուկ. 11.14): Կան և այլ շատ օրինակներ, ինչպես քահանայապետի ծառա Մաղքոսի կտրված ականջի բժշկությունը (Ղուկ. 22.50-51):

8. Բորոտության բժշկությունը չի կարող ներշնչմամբ կատարվել:

Բորոտը պետք է մարդկանց բնակավայրերից հեռու մնար, իսկ երբ բժշկվում էր, քահանաները պիտի ստուգեին՝ համոզվելու համար, որ նա իրապես առողջ է, և թույլ տային զոհ մատուցելուց հետո միանալ իր համայնքին: Ավետարանում գրված է, որ Տեր Հիսուսը բորոտին բժշկում է իր ձեռքի հպմամբ, և նա իսկույն առողջանում է (Մարկ. 1.41, Մատթ. 8.2-3): Մի ուրիշ անգամ Նա բժշկում է միանգամից տասը բորոտի (Ղուկ. 17.11-19), և ինչպես պահանջվում էր, նրանք իրենց ցույց են տալիս քահանաներին: Մի՞թե քահանաներն էլ էին ներշնչման տակ: Եվ ուրիշ շատ անբուժելի հիվանդություններ են բժշկվել Քրիստոսի կողմից:

9. Ներշնչում տեղի ունենալ չի կարող այդքան շատ հրաշքների և այդքան շատ ականատեսների դեպքում:

Թերևս կարող է մեկ մարդ ներշնչվել և ազդեցություն կրել, բայց երբ զանազան հիվանդություններով և տարբեր հոգեկան ու մտավոր կարողություններով հարյուրավոր մարդիկ են բժշկվում, սա արդեն ուրիշ բան է, ինչպես Տեր Հիսուսի գործած հրաշքների դեպքում: Սբ Ղուկաս

ավետարանիչն ասում է. «Արևանուտին ամենքը, որ զանազան ցավերից տառապող հիվանդներ ունեին, նրանց բերում էին Նրա մոտ, և Նա նրանցից յուրաքանչյուրի վրա ձեռք դնելով՝ բժշկում էր նրանց» (Ղուկ. 4.41): Մատթեոս ավետարանիչն ասում է, որ Տերը բուժում էր «զանազան ցավերից ու տանջանքներից տառապող բոլոր հիվանդներին, դիվահարներին, լուսնոտներին ու անդամալուծներին» (Մատթ. 4.23): Եվ Մարկոս ավետարանիչն ասում է. «Նրա մոտ բերեցին բոլոր հիվանդներին ու դիվահարներին, և ամբողջ քաղաքը դռների մոտ էր հավաքվել: Եվ բժշկեց զանազան ցավերից տառապող բազում հիվանդների և բազում դևեր հանեց» (Մարկ. 1.32-34): Արդյո՞ք սրանք բոլորը, և ականատեսները նույնպես, ներշնչման տակ էին:

10. Անմիջապես Տեր Հիսուսի կյանքում տեղի ունեցած հրաշքները չէին կարող ներշնչման արդյունք լինել:

Այնպիսի հրաշքներ, ինչպիսին են Նրա հարությունը, Նրա հայտնվելը տասնմեկ առաքյալներին, ապա բոլոր աշակերտներին, Նրա պայծառակերպությունը, կույսից Նրա ծնունդը և այլն, և այլն՝ այս ամենը չէր կարող ներշնչման արդյունք լինել:

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Ներածություն..... 2

**ՄԱՍ Ա. Քրիստոսի Աստվածությունը և Սբ Երրորդություն 3**

- 1 - Տեր Հիսուս Քրիստոսը Բանն է..... 4
- 2 - Տեր Հիսուս Քրիստոսը Հայր Աստծո Որդին է5
- 3 - Տեր Հիսուս Քրիստոսի և Հոր միջև հարաբերությունը 12
- 4 - Տեր Հիսուսի՝ Հոր աջ կողմում նստելը..... 13
- 5 - Տեր Հիսուս Քրիստոսն ուղարկում է Սուրբ Հոգին 14
- 6 - Տեր Հիսուսի և Սուրբ Հոգու միջև եղած ուրիշ հարաբերություններ..... 16

**ՄԱՍ Բ. Տեր Հիսուս Քրիստոսը և Նրա աստվածային հատկանիշները..... 18**

- 7- Տեր Հիսուսն Արարիչն է ..... 19
- 8 - Տեր Հիսուսը կյանքի պարգևիչն է..... 20
- 9 – Տեր Հիսուս Քրիստոսն անժամանակ է..... 21
- 10 - Տեր Հիսուս Քրիստոսն ամենուրեք է..... 23
- 11 - Տեր Հիսուս Քրիստոսն իջել է երկնքից .... 24
- 12 - Տեր Հիսուս Քրիստոսն առաջինն ու վերջինն է 25
- 13 - Քրիստոսը Տերն է..... 27
- 14 - Տեր Հիսուս Քրիստոսը և Նրան հավատալը32
- 15 - Տեր Հիսուս Քրիստոսն ընդունեց Իրեն ուղղված երկրպագությունն ու աղոթքը ..... 34
- 16 - Նրանն է փառքը հավիտյան..... 35
- 17 - Տեր Հիսուս Քրիստոսը սուրբ և բարի է .... 36
- 18 - Տեր Հիսուս Քրիստոսը մեղքերին թողություն է տալիս 39

- 19 - Տեր Հիսուս Քրիստոսը դատավոր է ..... 40
- 20 - Տեր Հիսուս Քրիստոսը քննում է մարդու սիրտն ու միտքը 41
- 21 - Տեր Հիսուս Քրիստոսը փրկիչն է..... 43

**ՄԱՍ Գ. Քրիստոսի աստվածությունը պարզորոշ վկայող  
աստվածաշնչյան տեղիներ..... 47**

**ՄԱՍ Դ. Քրիստոսի մասին վկայում են Նրա բացարձակ  
իշխանությունն ու հրաշքները..... 51**

- Քրիստոսի իշխանությունը բնության վրա .... 52
- Քրիստոսի իշխանությունը հրեշտակների վրա 53
- Արքայությունը Քրիստոսինն է..... 54
- Քրիստոսի իշխանությունը դևերի վրա ..... 55
- Քրիստոսի իշխանությունն Օրենքի վրա ..... 56
- Քրիստոսի իշխանությունը կյանքի և մահվան վրա 57
- Քրիստոսի իշխանությունը հենց իր վրա ..... 57
- Տեր Հիսուսի մասին վկայում են Նրա հրաշքները 58

**ՀԱՎԵԼՎԱԾ. Արդյո՞ք Քրիստոսի հրաշքները գործվել են  
ներշնչման միջոցով («Այսքան շատ տարիներ մարդկանց  
խնդիրների հետ» գրքի Բ հատորից)..... 62**

**Անգլերենից թարգմանեց Ս. ՄՏԱՄԲՈԼՅՅԱՆԸ**